

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐ**

ԵՐԵՎԱՆ

ՀՀ ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

2023

ՀՏԴ 811.19'373

ԳՄԴ81.51-3

Բ 300

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ:

Խմբագիր՝ Բ. Գ. Պ. Վ. Լ. Կատվալյան

Բառագիտության արդի խնդիրներ.- Եր.: ՀՀ ԳԱԱ ԼԻ  
Բ 300 հրատ., 2023.-110 էջ:

«Բառագիտության արդի խնդիրներ» ժողովածուի հողվածներում արծարծվում են բառագիտության արդի վիճակը քննող մի շարք հարցեր՝ նվիրված մասնավորապես իմաստաբանության, բառակազմության, նորակազմ բառերի բառաքաղման, բառընտրության առանձնահատկություններին և տարբեր դրսևորումներին հայերենի զարգացման արդի փուլում:

ՀՏԴ 811.19'373

ԳՄԴ81.51-3

ISBN 978-9939-9305-8-9

© ՀՀԳԱԱՀ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2023

## Երկու խոսք

Ժողովածուն ընդգրկում է բառարանագրության բաժնի աշխատակիցների՝ 2020-2023 թթ. տարբեր հանդեսներում և էլեկտրոնային հրապարակներում լույս տեսած հոդվածները :

Հոդվածներում արծարծվում են բառագիտության արդի վիճակը քննող մի շարք հարցեր՝ նվիրված մասնավորապես իմաստաբանության, բառակազմության, նորակազմ բառերի բառաքաղման, բառընտրության առանձնահատկություններին և տարբեր դրսևորումներին հայերենի զարգացման արդի փուլում:

Անդրադարձ է կատարվում բառակազմության և նոր բառիմաստի առաջացման տեսական և գործնական որոշ հարցերի և հայերենի զարգացման արդի փուլում ի հայտ եկող՝ բառիմաստի փոփոխության առանձնահատուկ դրսևորումներին :

# ՆՈՐԱԿԱԶՄ ԲԱՌԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐՈՒՄ

## Անահիտ Գալստյան

**Բանալի բառեր.** նորաբանություն, նորակազմություն, նոր բառեր, բառակազմական կաղապարներ, բայակազմություն:

**Ключевые слова.** неологизм, новообразование, новые слова, словообразовательные модели, образование глаголов.

Հասարակական կյանքի բոլոր փոփոխությունները, նոր հասկացություններն ու իրողությունները իրենց արտացոլումն են գտնում լեզվի բառապաշարում: Անհրաժեշտաբար առաջանում են նոր բառեր ու արտահայտություններ, ստեղծվում են նոր իրերի, գաղափարների հետ լեզու մուտք գործած օտարալեզու բառերի և տերմինների հայերեն տարբերակները, օտար բառերը ժամանակի ընթացքում փոխարինվում են համարժեք հայերեն տարբերակներով, որոշ բառեր հնանում և գործածությունից դուրս են գալիս, և այս գործընթացը անընդհատ է, շարունակական:

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը ձեռնամուխ է եղել նոր բառերի հավաքման, բացատրման աշխատանքներին: Մամուլից, գիտական և գեղարվեստական գրականությունից (ինքնուրույն և թարգմանական), համացանցից, հեռուստատեսությանից, տարբեր գովազդային հոլովակներից և ցուցանակներից, բանկերի, նախարարությունների հրատարակած բուկլետներից, ձևաթղթերից հավաքվել են բացատրական բառարաններում և նորա-

---

\* «Լեզու և լեզվաբանություն», 2021, N 1 (24), էջ 44-52:

բանությունների բառարաններում չվկայված, չբառարանագրված բառերը: Արդեն հրատարակվել են «Նոր բառերի» մի քանի պրակներ<sup>1</sup>: Դրանցում արձանագրված լեզվական նյութը հետազայում անհրաժեշտ չափով կրնդգրկվի հայոց լեզվի բացատրական բառարաննրում: Հավաքված նյութի լեզվաբանական հետազոտությունը կարտացոլի ժամանակակից հայոց լեզվի բառակազմության օրինաչափությունները, ի հայտ կբերի բառաստեղծման յուրահատկությունները, դրանց տարբեր դրսևորումները:

Մինչև «Նոր բառերում» ընդգրկված նյութի վերլուծությանն անցնելը անդրադառնանք նորաբանությունների և նորակազմությունների մասին հայերենագիտության մեջ եղած կարծիքներին, այդ ոլորտում գործածվող մի շարք տերմինների:

Նորաբանությանն իրենց ուսումնասիրություններում, դասագրքերում, ձեռնարկներում անդրադարձել են Էդ. Աղայանը, Թ. Ղարագյուլյանը, Ա. Սուքիասյանը, Պ. Պողոսյանը, Ս. Մելքոնյանը, Ս. Էլոյանը, Լ. Եզեկյանը, Ա՛ Մարտիրոսյանը և այլք:<sup>2</sup>

---

<sup>1</sup> Նոր բառեր, Ա պրակ (կազմողներ՝ Ա. Ս. Գալստյան ( ղեկ.), Գ. Կ. Հովսեփյան, Ա. Գ. Սահակյան, Լ. Ե. Սահինյան), - Եր. Գիտություն հրատ., 2015, Նոր բառեր, Բ պրակ, Եր., Ասողիկ, 2016, Նոր բառեր, Գ պրակ, Եր., «Ասողիկ», 2017 , Նոր բառեր, Դ պրակ, Եր., Ասողիկ, 2018, Նոր բառեր, Ե պրակ, Եր., Գիտություն, 2020:

<sup>2</sup> **Էդ. Աղայան**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, ԵԸ, ԵՊՀ հրատ., 1984: **Թ. Ղարագյուլյան**, Դիպլոմային և պոստենցիալ բառերը ժամանակակից հայերենի բառաստեղծման համակարգում.- Լեզվի և ոճի հարցեր, 7-րդ, 19., էջ 197-226: **Ա. Սուքիասյան**, Ժամանակակից հայոց լեզու: (Հնչյունաբան., բառագիտ., բառակազմ.), Եր., ԵՊՀ հրատ., 1999, էջ 158-162: **Պ. Պողոսյան**, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները (խոսքի տեսություն), ուսումնասոժանդակ ձեռնարկ բուհերի բանասիր. Ֆակ.-երի համար, գիրք 1, ԵՊՀ հրատ., 1990, էջ 160-163: **Ս. Մելքոնյան**, Ակնարկներ հայոց լրզվի ոճաբանության, «Լույս» հրատ., Եր., 1984, էջ 157-179: **Ս. Էլոյան**, Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Եր., ԳԱ հրատ., 1989, էջ 180-232: **Լ. Եզեկյան**, Հայոց լեզվի ոճագիտություն (ուսումնական ձեռնարկ), ԵՊՀ հրատ., Եր., 2003, էջ 132-149: **Ա. Մարտիրոսյան**, Արդի հայերենի նորաբանությունների բառակազմական կաղապարները, Եր., 2004:

Նորաբանության թեմայով պաշտպանվել են մի շարք ատենախոսություններ:<sup>3</sup>

Նորաբանություն և նորակազմություն հասկացությունների իմաստային ոչ հստակ սահմանազատումը ակնհայտ է նաև այդ թեմայով գրված հոդվածներում<sup>4</sup> և նորաբանությունների մեծ ու փոքր բառարաններում<sup>5</sup>:

Այս ոլորտում գործածվող տերմիններից են՝ նորաբանություն (լայն և նեղ առումով), ընդհանրացող և մեկուսացած նորաբանություններ, բուն կամ լեզվական նորաբանություններ, հեղինակային կամ անհատական նորաբանություններ, խոսքային նորաբանություններ, նորամուծություն, նորակազմություն, նորակազմ բառ, նորամուտ բառ, պոտենցիալ (ներունակ) բառեր, իմաստային նորաբանություններ և այլն: Առանձնակի են մնացել, տարածում չեն

---

<sup>3</sup> Վ. Ս. Մելքոնյան, Բառային անհատական նորաբանություններ 20-րդ դարի արևելահայ չափածոյում, 2002, Ա. Ռ. Մարտիրոսյան, Արդի հայերենի նորաբանությունների բառակազմական կաղապարները, 2004, Մ. Ռ. Սողոմոնյան, Նորաբանությունները 90-ական թթ. Հայ մամուլում, 2005, Լ.Ֆ. Սարգսյան, Արդի արևելահայերենի նորաբանությունների իմաստային և կառուցվածքային առանձնահատկությունները, 2011:

<sup>4</sup> Ա. Մարոթյան, Նոր բառեր և նորաբանություններ, ԲԵՀ, 1998, հ. 3, էջ 77-85, Լ. Պետրոսյան, «Նորաբանությունները հայերենում» դասընթացի մեթոդաբանությունը, Գիտական հոդվածներ, բանասիրություն, Բ պրակ: ՀՀ ԿԳՆ, Վանաձորի Հ. Թումանյանի անվ. պետ. մանկ. ինս-տ, իմբ խորհուրդ Գ. Խաչատրյան և ուրիշն.-Վանաձոր, Սիմ տպագրատուն, 2011, էջ 35-48, Ա. Ս. Գալստյան, Բառագիտական տերմինների գործածության հարցեր, Հայերենագիտական միջազգային 10-րդ գիտաժողով, 7-9 հոկտ., 2015, Զեկուցումների ժողովածու, Եր.. ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015, էջ 388-395:

<sup>5</sup> Տ. Է. Խլդաթյան, Բառարան – տեղեկատու: Նոր բառեր և իմաստներ. -Եր., Հայաստան, 1982, Փ.Գ. Մելքիսանյան, Նոր բառերի բացատրական բառարան, Եր., Փյունիկ, 1996, Հ. Մեսրոպեան, Գարեգին Ա ամենայն հայոց կաթողիկոսի երկերի բառարան (Նոր բառեր և իմաստներ), Սոնրեալ, 2000, Ս. Ա. Էդոյան, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Եր., Նաիրի, 2002, Ռ. Վ.Մաքսալետոյան, Բառգրքույկ, նոր և նորակազմ բառեր հայերենում, Եր, ԵՊՀ հրատ., 2014, Ս. Վ. Համբարձումյան, Հովհ. Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմի նորակազմ բառերի բառարան, Եր., Ասողիկ, 2016:

ստացել մի շարք տերմիններ՝ հեղինակային նորաբառեր (Պ. Պոդոսյան), նորաբանագիտություն, հանրական նորաբանություն և այլն: Որոշ տերմիններ գործածվում են մի շարք տարբերակներով (դիպլոմատիկա և քառ-դիպլոմատիկա քառ-դիպլոմատիկա, պոտենցիալ քառ- ներունակ քառ և այլն):

Ուսումնասիրության ընթացքում հեղինակները հաճախ իրենք տերմինային փոփոխություններն են կատարում: Այսպես՝ Է. Աղայանը գործածում էր **գործուն և չգործուն բառապաշար**, այնուհետև սկսում է գործածել **գործուն և ոչ գործուն բառապաշար** տերմինները: «Ամեն մի նոր բառ, սեփական թե փոխառյալ, նախապես հանդես է գալիս որպես նորաբանություն: Լայն առումով նորաբանություն են կոչվում լեզվական ամեն մի նոր իրակություն, նեղ առումով, բառագիտական տեսակետից, նորաբանություն է ամեն մի նոր բառ, կայուն բառակապակցություն, դարձված, առանձնահատուկ արտահայտություն (իդիոմ), բառի նոր իմաստ, բառագործածության նոր իրողություն», - գրում է Է. Աղայանը<sup>6</sup>: Ս. Մելքոնյանը նորակազմությունները բաժանում է երկու խմբի՝ անհատական և հանրական: «Տարածման իմաստով ավելի ակտիվ երևույթ են հանրական նորակազմությունները, քան անհատականները: Առաջինները ստեղծելուն պես ձգտում են ընդհանրանալ համապատասխան գործածության ոլորտում կամ ողջ գրական լեզվում», - գրում է նա<sup>7</sup>:

Առայժմ հստակ չեն տարբերակվում բառարաններում չգրանցված, չվկայված, չարտացոլված բառաշերտը և նորաբանությունները: Հատկապես անցյալ դարերի հեղինակների ստեղծած նորակազմությունները ներկայացնելիս, կարծում ենք, կարելի է

---

<sup>6</sup> Գ. Բ. Ջահուկյան, Է. Բ. Աղայան, Վ. Դ. Առաքելյան, Վ. Ա. Քոսյան, Հայոց լեզու, 1-ին մաս, Ա պրակ, «Լույս» հրատ., Եր., 19.., էջ 331:

<sup>7</sup> Ս. Մելքոնյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., Լույս, 1984, էջ 159:

միայն ենթադրություններ անել բառի առաջին գործածության վերաբերյալ, քանի որ դա կարող է նաև եղած բառարաններում չարտացոլված, չվկայված բառ լինել:

Հետաքրքիր և ուսումնասիրության կարոտ բնագավառ է նաև բառապաշարի ոչ գործուն շերտի միավորների՝ գործուն բառապաշարին անցման խնդիրը, գործածության համեմատաբար նեղ ոլորտ ներկայացնող բառերի, տերմինների և նորաբանությունների շփոթության հնարավոր դեպքերը, բառի տերմինացման և տերմինի բառացման ժամանակ ի հայտ եկող իմաստափոխության օրինաչափությունները և այլն:

Առանձնահատուկ քննության կարիք ունի արևմտահայերենի և արևելահայերենի տերմինապաշարի միավորների փոխներթափանցման երևույթը: Է. Աղայանը դա դիտում է ներքին փոխառությունների շարքում:

Թերևս ավելի հստակ կլինեք ներկայացնել դա արևմտահայերեն-արևելահայերեն փոխանցում, տեղաշարժ տերմինով: Այն բառերը, որոնք արևելահայերենում սկսել են գործածվել (սմբուկ, աշխարհաքաղաքական, խափանարար, բարեշրջություն և այլն), նորաբանություն համարելը ճիշտ չէ, որովհետև դրանք առկա են եղել հայերենի գոյաձևերից մեկում՝ արևմտահայերենում, և լեզվում արդեն եղած միավորները ուղղակի հայերեն բառապաշարի մի շերտից անցում են կատարել մեկ այլ շերտի՝ ընդգրկվելով գործածության անհամեմատ ավելի լայն ոլորտում:

Կարևոր է նաև ճշգրտել, թե քանի «տարեկան» բառն է անվանվում **նորակազմություն** տերմինով: Նորակազմ բառ համարել վերջին 50, 60 տարվա գործածություն ունեցող բառը և արտահայտություն<sup>օ</sup>նր, թե<sup>օ</sup> միայն մեկ-երկու տասնամյակ առաջ ստեղծված բառերն ու արտահայտությունները: Ի<sup>օ</sup>նչ ժամանակագրական կտրվածքով տարբերակել նոր և նորագույն բառերը:



Ա. Մուքիսայանը գրում է. «Նորաբանությունը պատմական հասկացություն է: Այն, ինչ լեզվի զարգացման տվյալ փուլում նորաբանություն է համարվում, պատմական այլ շրջանում որպես այդպիսին այլևս չի գիտակցվում և չի ընդունվում: Այդ տեսակետից հատկանշական է, որ որոշ նորաբանություններ լեզվի զարգացման ընթացքում հնանում և լեզվից դուրս են մնում»:

Ե՞րբ է նորաբանություն համարվող բառը կամ արտահայտությունը դադարում այդպիսին ընկալվելուց և համարվում համագործածական բառ:

Արդյոք հանձնարարելի՞ տերմին է **իմաստային նորաբանությունը**: Այս և մի շարք այլ հարցեր (իսկական կամ բուն նորաբանության, փոխառության և հայերեն համանշանակի գործածության առանձնահատկությունների դրսևորման հարցերը, բառիմաստի, բառի նշանակության և առարկայական վերաբերության փոփոխության ինդիքները և այլն) ճշգրտման, հստակ սահմանման կարիք ունեն:

Ստորև կներկայացնենք «Նոր բառերում» գրանցված հազարավոր բառերի որոշ առավել տարածված կաղապարներ՝ ուշադրության առնելով տվյալ կաղապարում ավելի հաճախ հանդիպող բաղադրիչները իրենց տարբեր համակցություններով:

Նկատելի է մի շարք ածանցների, ածանցակերպների և բառակազմական որոշ կաղապարների գործունացում: Այսպես, -ե ածանցով կազմված նոր բառային միավորներ են՝ արծնապակե, նրբաթիթեղե, նրբատախտակե, մետաքսաթելե, վուշե, մոխրե, հախճաղյուսե, հախճասալիկե, կոկոսե, կավաքարե, ճիմե, վարդալուղե, մամռե, թերթաքարե: Ընդ որում՝ երբեմն բառարանում -յա վերջածանցով բառի առկայության պարագայում էլ նախընտրում

---

<sup>8</sup> Ա. Մուքիսայան, Ժամանակակից հայոց լեզու, ԵՊՀ հրատ., Եր., 1999, էջ 162:

են ստեղծել -ե ածանցով տարբերակը (տե՛ս նրբաթիթեղյա – նրբաթիթեղեն):

Հատկանշական իրողություն է նաև նորակազմ բաղադրություններում որպես հիմք հատկանունների գործածության հաճախակի դառնալը: Առկա են -գետ, -ական, -յան ածանցներով կազմություններ: Այսպես՝ շանթագիտություն, մաթևոսյանագիտություն (հանդիպել է նաև՝ հրանտագիտություն), եվրոպագիտություն, շահնուրագիտություն, ջահուկյանական, աղայանական, աթայանական և այլն:

Նորակազմությունների շարքում հաճախացել են հատվածական բարդ բառերը՝ գեղարվեստաարդյունաբերական, գեղարվեստափաստագրական, պատմափաստագրական, մշակութագործարարական, փրկաորոնողական, բնագիտամաթեմատիկական, բժշկատնտեսագիտական, գիտանխագծային, պատմաբանահյուսական և այլն:

-**Հայ** վերջնաբաղադրիչով բառերը ևս բազմապատկվել են՝ ելնելով մեր ժամանակների ժողովրդագրական ուրույն գործընթացներից. գլենդելահայ, կիպրահայ, դրդգահայ, սասնահայ, քեսաբահայ, լիտվահայ, լոնդոնահայ, բրազիլահայ, բրիտանահայ, եթովպահայ, հոլանդահայ, հորդանանահայ: Այս կազմություններում որպես սերող հիմք հանդես է գալիս երկրի կամ քաղաքի անվանումը: Կան նաև հետևյալ կարգի օրինակներ՝ ֆեյսբուքահայ(ուհի), վաղնջահայ:

Մեծ թիվ են կազմում նաև հայ- սկզբնաբաղադրիչով նորակերտ բառերը՝ հայապատկեր, հայաջարդ, հայավեր, հայավտանգ, հայագիտակցություն, հայադարան, հայազերծել, հայահեռացում, հայաճանաչություն, հայատարագ, հայազարկ, հայահիմնադիր, հայակենտրոն, հայակերտիչ, հայահարագատ, հայաներկա, հայանկար, հայազրկել, հայօջախ: Ավելորդ չէ նկատել, որ **հայ** բաղա-

դրիչով նորակազմությունները կարող են ուսումնասիրության նյութ դառնալ նաև միջգիտակարգային՝ ազգագրական, ազգահոգեբանական, ժողովրդագրական, մշակութաբանական հետազոտությունների համար:

Նորակազմություններում առկա են -շատ (խութաշատ, կորովաշատ, արժեքաշատ, ցնցումնաշատ, հրդեհաշատ, ժխորաշատ), -առատ (արցունքառատ, բժառատ, լուսնառատ, ճեղքառատ, պեղումնառատ, փայտառատ), -շար (էսսեաշար, դրվագաշար, խմբերգաշար, անեկդոտաշար, պաստառաշար, ոլորանաշար, ելույթաշար, ժանեկաշար, խրամատաշար, նյութաշար, նոտաշար, կառուցաշար), -ուհի (երգեհոնահարուհի, եզդուհի, բարմենուհի, ավագանկարչուհի, կիրթառահարուհի, մանկագրուհի, գնորդուհի, գաղթականուհի, անցորդուհի) բաղադրիչներով բազմաթիվ բառեր:

Իմաստային մի այլ ոլորտ են ներկայացնում -պատում (երևանապատում, երգապատում, ոգեպատում, վրացապատում, քրդապատում, սփյուռքապատում, մաշտոցապատում, բաֆֆիապատում, վավերապատում, ցեղասպանապատում), -աշխարհ (թախծաշխարհ, տեխնոաշխարհ, մեդիաաշխարհ, նյութաշխարհ, ֆիլմաշխարհ, ձկնաշխարհ, երագաշխարհ, գոյաշխարհ), -արվեստ (հողարվեստ, ֆոտոգեղարվեստ, լռարվեստ, քանդակարվեստ) վերջնաբաղադրիչներով նորակերտ բառերը: Նկատելի է, որ բերված կադապարները հետագա գործունացման ակնհայտ միտում են դրսևորում:

Նորակազմությունները որպես կանոն բաղադրյալ բառեր են, և դրանց դիտարկումը գիտական հետաքրքրություն է ներկայացնում նաև նրանց քերականական ձևավորման, մասնավորապես բաղադրիչների միջև առկա հարաբերությունների տեսակետից: Նորակազմ բառերը հիմնականում նյութական իմաստ արտահայ-

տող (լիիմաստ) բառեր են: Դրանց գերակշիռ մասը գոյականներ են, ստվար թիվ են կազմում նաև ածականները, բայերը:

Ընդհանուր գծերով ներկայացնենք գոյականներից և ածականներից կազմված բայերը՝ դրանց ստեղծման մասնակաղապարների և տարատեսակ դրսևորումների մանրամասն դիտարկումը թողնելով առանձին քննարկման:

Նկատելի բառաշերտ են կազմում գոյականակազմ բայերը (խաշամել, համերգավարել, վայրէջքել, փշալարել, համահեղինակել), բազմաթիվ են նաև ածականակազմ բայերը (հևասպառվել, պճնապաճուճվել, խծուծապատել, փութաքայլել, շուտափութել): Առկա են նաև նոր բայերի ստեղծման օրինակներ հարադիր կազմություններից (ծաղկաքաղ անել - ծաղկաքաղել, ծխախեղդ անել/լինել- ծխախեղդվել, ջերմաչափում անել - ջերմաչափել):

Համագործածական բառապաշարի մաս կազմող բայերից նորակազմ բայեր ստեղծվում են մի քանի կաղապարներով՝ տարբեր ածանցների և արմատների հավելումով: Այսպես, ներպատվաստել, գերշահագործել, ապադոլարացվել, ապասարգելափակել, ջրալցվել, չարահյուսել, կիսախեղդվել, կիսաշրջափակվել, ինքնահայտարարագրել, ինքնահաճոյախոսել, ինքնագոյանալ, եվրանորոգել:

Հավելենք նաև, որ նորակազմ բառերի, մասնավորապես տերմինների քննությունը հայ լեզվաբանության մեջ նաև այլ հայեցակետերով է կատարվում. ուշադրության առարկա են դառնում նորակազմ բառերի ու տերմինների բաղադրիչների՝ բնիկ կամ օտար ծագումը, դրանց հայերենացման հեռանկարը:

# ՆՈՐԱԿԱԶՄ ԲԱՌԵՐԻ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ՝

## Անահիտ Գալստյան

**Բանալի բառեր.** նորակազմ բառ, բառատարբերակ, թեմատիկ խումբ, գունանուն:

**Ключевые слова:** новообразование, лексические варианты, тематическая группа, цветоименование.

Նոր հասկացությունները, իրերը, սարքերը, սարքավորումները, նորաստեղծ ոլորտները անվանելու համար ժամանակի ընթացքում լեզվում կարող են ստեղծվել մեկից ավելի բառեր, մի քանի տարբերակներ (թարգմանիչների, բառարանագիրների, լրագրողների, գրողների, բառաստեղծման հակում դրսևորող այլևայլ մասնագետների կողմից): Դրանց գործածության ժամկետը շատ տարբեր կարող է լինել: Ի վերջո, լեզվում հաստատվում, ամրագրվում է առաջարկվող տարբերակներից մեկնումեկը:

Է. Աղայանը որպես նորաբանական բազմազանության օրինակ բերում է *зажигалка* բառի դիմաց հայերենում գործածված հետևյալ բառախումբը. «Լուցիչ-հրահան-հրահար-հրատուփ-ինքնավառիչ-վառիչ-կրակվառիչ-ինքնալույց-կայծահան-կայծավառ»<sup>1</sup>: Աղայանը որպես բազմանունների օրինակ բերում է փոշեծծիչ-փոշեծուծ-փոշեհավաք բառերը: Նշենք, որ այժմ գործածվում է նաև փոշեկույր:

---

\* «Լեզու և լեզվաբանություն», 2021, N 2 (25) էջ 3-11:

<sup>1</sup> Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., ԵՊՀ հրատ., 1984, էջ 153:

Ստեղծված մի քանի համանիշներից ժամանակի ընթացքում ընդհանրանում, ամրակայվում է մեկը: Լեզվաբանության մեջ ուսումնասիրվում են նաև նոր բառի ամրակայման, բազմանուններից որևէ մեկի ընդհանրացման պատճառներն ու յուրահատկությունները, համագործածական բառապաշարի մեջ ընդգրկվելու պայմաններն ու հանգամանքները: Նշվում են, օրինակ, այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են բառի բարեհնչյունությունը, շատ երկար չլինելը, հնչյունական կազմի՝ անհարմար, անպատշաճ գույքորոշումներից զերծ լինելը, գործածության մեջ մտած նոր բառի բառակազմական հնարավորությունները, բառապաշարի եղած բառամիավորների հետ հարանության բացառումը (շփոթությունից խուսափելու նպատակով), բաղադրյալ բառի բաղադրամասերի՝ հանրության համար հասկանալի լինելը, լեզվական ավանդույթը և այլն:

Հանրահայտ են Վ. Տերյանի՝ «Հայ գրականության գալիք օրը» գեկուցման մեջ արտահայտած մտքերը: Նա կարծում էր, որ վերակու, վառարան, հեծանիվ բառերը երբևէ հայերենում չեն կարող գործածական դառնալ և դուրս մղել պալտո, փեչ, վելոսիպեդ բառերին:

Տերյանը, որ խոսքի մեծ վարպետ էր, խոշոր գեղագետ և արևելահայ բանաստեղծական լեզվի ուղենիշներից մեկը, որի բանաստեղծական խոսքում գտնում ենք հայերենի նախադասության կառուցվածքն արտահայտող (և՛ բարդ, և՛ պարզ նախադասության) դասական դիպուկ օրինակներ, բառընտրության այս դեպքում (վերարկու–պալտո և այլն) վրիպում է. նրա կանխատես-

ման հակառակ՝ վերարկու, հեծանիվ, վառարան բառերը դարձել են մեր առօրյա խոսքի շարքային միավորներ<sup>2</sup>:

Այսպիսով, բազմանուններից որևէ մեկի ընդհանրանալու, համագործածական բառ դառնալու հեռանկարի կանխատեսումները միշտ չէ, որ ստույգ են լինում:

Է. Աղայանը գրում է, որ «...Հարկ է լինում այլ լեզուների բառերի ու տերմինների դիմաց կերտել հայակազմ համապատասխանները կամ էլ պարզապես նոր հասկացությունների, գործիքների և այլնի համար նոր բառեր ստեղծել: Բառարաններում այդպիսին դեպքերում գերադասում են հանձնարարել մեկից ավելի բառեր, որպեսզի դրանցից մեկն ու մեկը ընտրեն և գործածեն<sup>3</sup>»:

Նոր տերմինների ստեղծման ժամանակ մինչև հայերեն հաջող տարբերակ գտնելը և գործածելը հաճախ կիրառվում է օտար բառը: Հետաքրքիր է, թե ինչ ուղի կարող է անցնել նոր բառը, որևէ օտար բառի (առաջ հիմնականում ռուսերեն, այժմ նաև անգլերեն) հայերեն համապատասխան տարբերակը: Кодиционер բառի համար «Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարանը» (Եր. 1988) առաջարկում է կոնդիցիոներ, օդի լավորակիչ, բերվում են օրինակները՝ ինքնավար կ., կենցաղային կ., օդային կ., հատակի կ., պատի կ., ոչ ինքնավար կ., լուսամուտի կ. և այլն: Ֆ. Խլղաթյանի բառարան-տեղեկատուում առկա է օդաորակավորիչ բառը, որի բացատրությունն է «օդի խոնավությունը կարգավորող սարք»։ Բառագործածության օրինակը բերված է «Սովետական Հայաստան» լրագրի 1980 թ. 164 համարից. «Այդ նուրբ ապարատների հավաքման արտադրամասում օդաորակավորիչները օդից ներ-

---

<sup>2</sup> Այդ կանխատեսման պատճառներից գուցե մանկության տարիներին նրա լսած բարբառային խոսքում փեչ, պալտո, վելոսիպեդ բառերի սովորական դարձած գործածությունն էր:

<sup>3</sup> Էդ. Աղայան, նշվ. աշխ., էջ 153:

ծծում են գրեթե ամբողջ խոնավությունը»: Այսօր տարածված օդորակիչը փնտրվեց, գտնվեց. բառի որոնումը տվեց իր արդյունքը: Ի դեպ, «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում» առկա են օդարկել («թարմ օդի ներգործության ենթարկել (սենյակ, հյուսվածքեղեն)») և օդարկիչ («օդարկելու հարմարանք, սարք») բառերը: Այս վերջինը, մեր համոզմամբ, ավելի հարմար կլինի գործածել օդորակիչ իմաստով, թեև առայժմ չի անցել գործուն բառապաշարին:

Բազմանունության երևույթը քննենք նաև մենթալիտետ բառի գործածության օրինակով: Բացատրական բառարաններում արձանագրված են՝ կենսակերտվածք, (ԱՀԲԲ, ԺՀԼԲԲ), կենսակառույց <sup>4</sup> (ԱՀԲԲ), կենսակառուցում (ԱՀԲԲ), կենսակերպ (ԱՀԲԲ, ԺՀԼԲԲ), կենսաձև (ԱՀԲԲ, ԺՀԼԲԲ), մտածելակերպ (ԱՀԲԲ, ԺՀԼԲԲ), մտածելաձև (ԺՀԼԲԲ): Ս. Էլոյանի «Արդի հայերենի նորաբանությունների բառարանում» (Եր., 2002) վկայված են հոգեկերտվածք, մտախառնվածք, մտակերտվածք, մտակեցվածք, մտակառույց նորակազմ բառերը: Հ. Բարսեղյանի «Հայերեն ուղղագրական-ուղղախոսական տերմինաբանական բառարանում» (Եր., 1973) առկա է կենսակարգ կազմությունը: Մենթալիտետի նշանակությամբ ստեղծված բառերից «Նոր բառերում» բառարանագրված են մի շարք բառեր, որոնք մեջբերում ենք բնագրային օրինակներով՝ ցուցադրելու համար դրանց իմաստային նրբերանգները: «Նոր բառերի» Ա պրակից նշենք հետևյալ օրինակները: Ամեն ազգ իր ձևով, ոճով, իր կերպով հոգեդրսևորում ունի, մարմնացում իր ապրումների ու մտածումների, իր տեսիլների և իրեն հատուկ աշխարհապատկերման (ՄՄ, էջ 182): Այսպես, «Նոր տարի» պատմվածքի տղայի պատանեկան հոգեկառույցը բարձրանում է ես-ընտանիք-

---

<sup>4</sup> Բառարանում նշվում է որպես ածական. Բառը ունի նաև գոյականական կիրառություն:



գյուղի հանրույթ պարտադրանքների.....(ԳԹ, 21.03.2014): «Նոր բառերի» Բ պրակում բառարանագրվել են կենսակառուցվածք, հոգենկարագիր, հոգեմտածողություն, մտահենք նորակազմ բառերը՝ հետևյալ բնագրային վկայություններով: Ես ճանաչում եմ միայն մեկին, փոխարենը՝ շատ մոտիկից, ի դեմս իմ քենու, ում ապստամբությունը հայկական կենսակառուցվածքի դեմ գիտակցական ու երկարատև էր (Արտ. գրակ., թ. 3, 2016, էջ 49): Ընդգրկուն էր նրա գործունեության ծիրը, որը վկայում է հայ և լիտվացի ժողովուրդների դարավոր բարեկամությունը, հոգենկարագրի և մտախառնվածքի ընդհանրությունը (ԳԹ, 22.04. 2016): Հարաստությունը մե՛նք պետք է ապահովենք՝ մեր ինքնության առանձնահատկությունները ներկայացնող մշակույթով, հոգեմտածողությամբ, ավանդներով, ծեսերով, ծիսակարգերով (ԳԹ, 08. 05.2015): Ինձ, անկեղծ ասեմ, ուղղակի հիասթափեցրել էր այն գավառական մտահենքը, որ իշխող էր դարձել պանդոկների և վաճառատների ինտերիերները ձևավորելիս (Իր., 17. 06. 2016): Ապրելակերպ, նիստուկաց իմաստով Ադասի Այվազյանը գործածել է կեցույթ բառը: Երկուսով միասին հաճոյանում էին Մարթային, իրենց կեցույթով, ամեն ինչով խնդրում գոնե մի պտղունց սեփական կյանքի, ցանկության իրավունք (ԱՍ, ԸԵ, էջ 83) (Նոր բառեր, Գ պրակ): «Նոր բառերի» Դ պրակում բառարանագրված են հոգեխառնվածք, մտահայեցակարգ նորաստեղծ բառերը: Ավելի հոգևոր հոգեխառնվածքի տեր մարդիկ էլ կասկած չունեն, որ երկրի (ու նրա ժողովրդի) քաղաքական մակարդակը որոշվում է սրբավայրերի գոյակերպով (Իր., 21. 04. 2017): Ակնկալիքների մաքսիմալիզմ: Սա հայ հանրույթի մտահայեցակարգի հիմնական բնութագրերից է (Հնմ):

Կ. Ռաֆայելյանի հողվածում նույն իմաստով առկա է խտատիպ բառը. «2015-ին Բեյրութի «Հայկազյան հայագիտական հանդեսում» լույս է տեսել մեր՝ «Հայի խտատիպի մի քանի դրսևորում-

ներ Դ. Դեմիրճյանի «Հայր» խոհագրության խոհապատկերին» վերնագրով հոդվածը (ԳԹ, 02. 07. 2021):

Այսպիսով, մենթալիտետ նշանակությամբ երկու տասնյակից ավելի նորակազմ հայերեն բառերը կազմված են կենս-(կեց-), մտ-, հոգե-, գոյ- արմատներով: Այսօր կարծես թե ընդհանրանալու միտում է դրսևորում հոգեկերտվածքը:

Մեկ այլ օրինակ: Էնդոկրինոլոգ, էնդոկրինոլոգիա օտար բառերը շատ երկար գործածվում էին: Հայերեն տարբերակի որոնումը նկատվում է տարբեր բառարաններում, հոդվածներում: Հ. Բարսեղյանի նշված բառարանում առկա են ներքնածորաբան, ներքնածորաբանություն բառերը: ԱՀԲԲ-ում էնդոկրինոլոգիա բացատրվում է որպես «ուսմունք ներգատիչ գեղձերի մասին»: «Հայոց լեզվի ուղեցույցում (Եր., 2017) գրանցված են ներգատաբան, ներգատաբանություն բառերը: Կարծում ենք, այդ բառերը կընդհանրանան: Հ.Այնթապյանի և Ա. Սարգսյանի «Անհարկի յաճախակի գործածուող օտար բառերու հայերեն համարժեքներու բառարանում» (Եր., 2018) էնդոկրին, էնդոկրինոլոգ բառերի դիմաց առաջարկվում են ներգեղձաբան, ներգեղձաբանություն բառերը:

Օտար բառի դիմաց հայերեն համարժեքի գործածությունը ժամանակին կանոնարվել է տերմինաբանական կոմիտեի որոշումներով: Միշտ չէ, որ այդ որոշումները իրագործվել են: Այսպես, մի շարք տերմինների զուգահեռ ձևերի գործածության միասնականացման մասին տերմինաբանական կոմիտեի որոշմամբ տուրիզմ, զբոսաշրջ(իկ)ություն բառազույգից առաջարկվել է նախապատվությունը տալ տուրիզմ բառին<sup>5</sup>: Այնինչ հայերեն զբոսաշրջություն տարբերակը ընդհանրացել է և հաջողությամբ գործածվում է:

---

<sup>5</sup> Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Եր., ԵՂՀ հրատ., 1984, էջ 108:

Նորաբանությունների կազմը համալրվում է ոչ միայն ոչ գործուն բառամթերքի գործունացմամբ, այլև լեզվի ներունակ (պոտենցիալ) բառապաշարի ակտիվացմամբ: «Լեզվաբանական բառարանի» «պոտենցիալ բառապաշար» բառահոդվածում նշվում է. «Հնարավոր, բայց իրական վկայություն չունեցող բառերը որևէ լեզվում: Դրանց շարքին կարելի է դասել այն բառերը, հիմնականում բարդ և ածանցավոր, որոնք հնարավոր է կազմել և շարունակ կազմվում են տվյալ լեզվի բառակազմական օրենքներով»<sup>6</sup>:

Արդի հայերենի բառապաշարում ներունակ կամ պոտենցիալ բառերի ստեղծումը ներկայացնենք գունանունների իմաստային դաշտին վերաբերող բառային նորաստեղծ միվորների դիտարկմամբ:

«Նոր բառերում» բառարանագրված գունանունների առավել մանրամասն իմաստաբանական քննությունից ակնհայտ է, որ դրանք ստեղծվում են հայերենի բառաստեղծման կանոններով: Հաճախադեպ են -գույն ածանցակերպով բաղադրությունները՝ բորբոսագույն, եղյամագույն, կարագագույն, ցեխագույն, բևեկնագույն, թեյագույն, կարտոֆիլագույն, մամխագույն, մամռագույն, շիճուկագույն, սոճեգույն, կեռասագույն, ստվերագույն, սերուցքագույն, սոխագույն, քարագույն, նարդոսագույն: -Երանգ բաղադրիչով կազմված են՝ կեռասերանգ, երկներանգ, կավճերանգ, -թույրով՝ գինեթույր: Վերը նշված գունանվանումների բառակազմական հիմքերը, նկատենք, կազմված են ծաղկանուններից (նարդոսագույն), մրգանուններից, հատապտղանուններից (կեռասագույն, մամխագույն), բանջարեղենի անուններից (սոխագույն, կարտոֆիլագույն), ծառանուններից (սոճեգույն), բնությանը վերաբերող անվանումներից (ցեխագույն, բևեկնագույն, բորբոսագույն, շիճուկա-

---

<sup>6</sup> Լեզվաբանական բառարան, Եր., ՀՄՍՀ ԳԱ հրատ., 1975, էջ 262:

գույն, եղյամագույն, քարագույն), ուտելիղենի և ըմպելիքների անվանումներից (կարագագույն, թեյագույն, սերուցքագույն)<sup>7</sup>:

Ներկայացնենք ևս մեկ կառույց: Երկաթագորշ, կապարագորշ, ծխագորշ, մարգարտագորշ, կավճասպիտակ, շուշանաճերմակ, փրփրաճերմակ, վարդաճերմակ, կաղնեկարմիր, դարչնակարմիր, ճահճադեղին, մեղրադեղին, ժանգադեղին, ցորնադեղին: Նշված գունանվանումների կազմության ներքին ձևը հետևյալն է. բաղադրության երկրորդ անդամը կազմությամբ պարզ գունանուն է, իսկ առաջին անդամը մասնավորեցնում է նրա արտահայտած իմաստը, կոնկրետացնում, ընդգծում է այն: Այսպես, դեղին գունանունը պարունակող մեղրադեղին, ճահճադեղին, ժանգադեղին, ցորնադեղին օրինակները նշանակում են մեղրի, ճահճի, ժանգի կամ ցորենի դեղնություն ունեցող: Երկաթագորշ, կապարագորշ, ծխագորշ, մարգարտագորշ գունանվանումները նշանակում են համապատասխանաբար երկաթի, կապարի, ծխի, մարգարտի գորշություն ունեցող: Գունանվանումների ընկալման այս հայեցակարգը կարևոր է լեզվից լեզու կատարվող թարգմանությունների ժամանակ: Այստեղ ի հայտ են գալիս ժողովրդի աշխարհընկալման մշակութաբանական շերտերը, ավանդույթը, գունաըմբռնման առանձնահատկությունները:

Գունանվանումների զուգադրական վերլուծության արդյունքները հետաքրքիր նյութ են մատակարարում ազգահոգեբանական, զուգադրական բառագիտական ուսումնասիրության, հոգելեզվաբանական հետազոտությունների համար:

Ճերմակականաչ, գորշակարմիր, սպիտակականաչ, կապտափիրուզ, կանաչակապույտ, ճերմակադեղին բաղադրություններում առկա է երկու պարզ գունանվանում՝ առանց գույն նշանակող

---

<sup>7</sup> Տե՛ս Ա. Մ. Գալստյան, Ժամանակակից հայոց լեզու. բառապաշար. գործնական աշխատանքներ. -Եր., ԵՊՀ հրատ., 2010, էջ 9-13:

որևէ ածանցի կամ ածանցակերպի: Նույն տիպի ավելի հաճախ հանդիպող կառույց են -գույն և -ավուն բաղադրամասերով կազմությունները՝ կաթնատուկեգույն, կապտատուկեգույն, կաթնավարդագույն, կարմրասրճագույն, մոխրադարչնագույն, մոխրաշագանակագույն, սպիտակամոխրագույն, մոխրաերկնագույն, կանաչամոխրագույն, դեղնաերկնագույն: -Ավուն ածանցով նորակազմ գունանուններից նշենք մի քանիսը՝ ոսկեդեղնավուն, կապտաարծաթավուն, վարդաարծաթավուն, գորշամոխրավուն, գորշասևավուն, կարմրագորշավուն, կանաչասպիտակավուն, կանաչարծաթավուն, նարնջադեղնավուն, ժանգակարմրավուն, գորշամոխրավուն, սպիտակակարմրավուն, վարդականաչավուն, կինամոնականաչավուն, կապտաճերմակավուն, կապտասպիտակավուն, սևականաչավուն:

Բառաստեղծման օրինաչափությունների, հնչյունափոխական, հոդակապային և այլ բառատարբերակների ուսումնասիրությունը կարող է կատարվել նաև այլ թեմատիկ խմբերի ընդգրկումով (օրինակ, մասնագիտությունների անվանումներ, մարզաշխարհի տերմիններ, ՏՏ ոլորտի բառապաշար և այլն):

**ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԻՄԱՍՏԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ\***

**Անահիտ Գալստյան**

**Բանալի բառեր.** նորակազմ բառ, մասնագիտություն, զբաղմունք արտահայտող բառ, իմաստաթեմատիկ խումբ, նորաստեղծ ժամանականիշ բառեր, նորաստեղծ սխալ կազմություններ:

**Ключевые слова:** новообразование, слова, обозначающие профессию, занятие, тематическая группа, новые слова, обозначающие время, неправильные образования.

Հայերենի բառապաշարը անընդհատ համալրվում է նորաստեղծ բառերով և արտահայտություններով՝ հասարակական կյանքի փոփոխություններին համընթաց: ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հրատարակած «Նոր բառեր» բառարանի Ա-Զ պրակներում հավաքված բառանյութը հնարավորություն է տալիս քննելու արդի հայերենում բառաստեղծման իմաստային և կառուցվածքային որոշակի միտումներ և օրինաչափություններ:

Է. Աղայանը գրում է. «Բառապաշարի զարգացումը ամբողջությունն է լեզվի բառային կազմում տեղի ունեցող այն բոլոր փոփոխությունների, որոնք ուղղված են բառային կազմի մակարդակի արդիականացմանը, նրա համապատասխանեցմանը մի կողմից հասարակական կեցության ու գիտակցության առավել զարգացած աստիճանին, մյուս կողմից՝ լեզվի տվյալ փուլի կառուցվածքին ու

---

\* «Լեզու և լեզվաբանություն», 2022, N 1 (26), էջ 48-56 :

համակարգին: Չարգացման այս ընդհանուր գործընթացն իրացվում է բառապաշարի հարստացումով, բառապաշարի իմաստաբանական զարգացումով և բառապաշարի կատարելագործումով»<sup>1</sup>:

«Տերմինաբանության մի քանի խնդիրների մասին» հոդվածում խոսելով տերմինների գնահատման և բնութագրման համար կարևոր երկու չափանիշի մասին՝ արգասավորություն և համակարգայնություն, Է. Աղայանը նշում է, որ գործածության մեջ դրվող բառի կենսունակությունը պայմանավորված է նրա՝ նոր բաղադրություններ կազմելու հատկությամբ: «Եթե մենք օտար տերմինը փոխարինում ենք հայերենով, ապա պետք է մտածենք նաև այն մասին, որ դրանից կարողանանք ստանալ բոլոր անհրաժեշտ հարակից բառերը, հակառակ դեպքում մեկ առանձին տերմինի հայացումը, առանց հարակից բառերի, չի արդարանում»<sup>2</sup>:

Որպես օրինակ բերվում է այն ժամանակ գործածության մեջ նոր մտնող *զբոսաշրջիկ* բառը և նշվում է. «Օրինակ՝ վերջերս մեզ մոտ գործածում են *զբոսաշրջիկ* բառը, որ, մեր խորին համոզմունքով, երբեք էլ հաստատուն արմատներ չի գտնելու և չի փոխարինելու *տուրիստ* բառին. այդ բառի կենսունակությանը խանգարում է ոչ միայն իմաստային ոչ լիարժեքությունը, այլև արգասավորության ու համակարգայնության բացակայությունը...»<sup>3</sup>:

Կարող ենք նշել, որ, հակառակ այս հիմնավորման, *զբոսաշրջիկ* բառը այսօրվա հայերենում լայն կիրառություն ունի. գործածվում են նաև *զբոսաշրջություն*, *զբոսաշրջային*, *էկոզբոսաշրջային*, *էկոզբոսաշրջություն* կազմությունները: Ի դեպ, «Նոր բառերի» Դ պրակում արձանագրված է *զբոսաշրջիկ* իմաստով մեկ այլ բառ՝ *շրջեկ*: Գործածության օրինակը «Գրական թերթից» է. Հայլենդի գո-

<sup>1</sup> Է. Աղայան, Լեզվաբանական հետազոտություններ, Եր., ԵՊՀ հրատ., էջ 263:

<sup>2</sup> Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 180:

<sup>3</sup> Նույն տեղում:

յութունը վիթխարի զարկ է տալու զբոսաշրջիկությանը, *շրջեկների* հոսք կարող է բերել Մերձավոր Արևելքի, ԱՊՀ, Հայաստանի հարևան ու նաև հեռավոր երկրներից (ԳԹ, 13.04.2018):

Անցնենք մասնագիտություն, զբաղմունք, որևէ գործունեությանը զբաղվող անձ նշանակությամբ նոր բառերի քննությանը: Այս ոլորտի կազմություններում գործուն են *-գործ*, *-բան*, *-գետ* բաղադրիչները<sup>4</sup>: *-Գործ* բաղադրիչով բառարանագրվել են *չրագործ*, *շոկոլադագործ*, *շապկագործ*, *ընթացագործ*, *զգեստագործ*, *թոնրագործ*, *խաչքարագործ*, *թունելագործ* նորակազմ բառերը<sup>5</sup>: *-Բան* ածանցակերպով կազմվել են *ներգատաբան*, *դաջվածքաբան*, *թմրաբան*, *մշակութաբան*, *սննդաբան*, *քնաբան*, *գոյավերլուծաբան*, *հնամարդաբան*, *հեռուստատեսաբան*, *ողնաշարաբան*, *մոլորակաբան*, *երկրաձևաբան*, *ժառանգաբան*, *չղջիկաբան*, *բժշկակենսաբան*, *աստղակենսաբան*, *ֆոտոպատմաբան*, *լեզվագործաբան*, *լեզվաճանաչողաբան*: Օտար հիմքերով կազմված են *ալերգաբան*, *ստրեսաբան* բառերը: *-Գետ* ածանցակերպով «Նոր բառերում» արձանագրված են՝ *միջնադարագետ*, *նախիջնանագետ*, *շումերագետ*, *թալիշագետ*, *սառցագետ*, *ցեղասպանագետ*, *ռազմավարագետ*, *գազանագետ*, *քարանձավագետ*, *սիյուոքագետ*, *մեդիամասնագետ*, *մեդիափորձագետ*, *հուշարձանագետ*, *էթնոպարագետ*, *ամենինչագետ* (դիպլ., հեզն.), *մահագետ*, *ահաբեկչագետ*, *ապագայագետ*, *ֆիլմագետ* և այլն:

Արձանագրենք, որ ժամանակի ընթացքում *-գետ* և *-բան* ածանցակերպներով ստեղծված մի քանի բառեր իմաստով սահմանազատվել են և այժմ ունեն տարբերակված գործառույթ: Հմտ. պատմագետ–պատմաբան, լեզվագետ–լեզվաբան, աստղագետ–

<sup>4</sup> Օրինակները բերվում են «Նոր բառերի» Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ պրակներից:

<sup>5</sup> Բառակազմական կաղապարների մասին տե՛ս **Գալստյան Ս.**, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Եր., 1978:



աստղաբան, տերմինագիտություն-տերմինաբանություն, իրավագիտություն–իրավաբանություն: Ի դեպ, երբեմն լեզվակիրների ընկալման մեջ պատահում են թյուրըմբռնումներ. այսպես՝ հնագետ և հնէաբան բառերի բաղաբկությամբ ստեղծում են հնէագետ սխալ կազմությունը:

Գործուն են նաև *-նկարիչ, -վաճառ, - վար, -բույծ, -բույժ, -ող* բաղադրիչներով կազմությունները: Թվարկենք մի քանիսը. *մարմնանկարիչ, զգեստանկարիչ, գրքանկարիչ, ավազանկար-չ(ուհի), նկարավաճառ, ծրագրավաճառ, աճուրդավար, հանդիսավար, խնջույքավար, մղանավար, ցուցակավար, հեռուստավար, խամաճիկավար, հարցազրուցավար, ջայլամաբույծ, շինշիլաբույծ, նյարդավիրաբույժ, սրտավիրաբույժ, դատահոգեբույժ, սողայաբույժ* և այլն:

*-Ող* բաղադրիչով նորաստեղծ բառերի *ներդրող, ներկրող, համադրող, դրոշմավորող* կառույցների շարքում առանձնացնում ենք տարածում ստացած և հաճախ օգտագործվող *ավտոներկրող, ավտոներմուծող, ավտոարտադրող, կինոներմուծող, կինովավերագրող* բառակազմական «ուղիղ խնդիր-ստորոգյալ» բանաձևն ունեցող բառերը: Նույն բանաձևն ունեն նաև՝ *ագրովերամշակող, ջրօգտագործող, ընդերքօգտագործող, կոնյակարտադրող, հանքարտադրող, ֆիլմարտադրող, տուրիստակարգող, հողօգտագործող, դեղարտադրող, կրիպտաներդրող* բառերը: Մի քանի գիտաճյուղերի հատույթում ստեղծված մասնագիտությունների և համապատասխան մասնագետների անվանումներում առկա է լինում երկու, երեք, նույնիսկ չորս արմատ՝ *էթնոհոգելեզվաբան, հոգեսոցիոլեզվաբան, աստղակենսաբան, լեզվաճանաչողաբան, լեզվագործաբան* և այլն:

Մի քանի դիտարկում մեկ այլ թեմատիկ խմբի նորակազմ բառերի մասին: *-Երգ, -նկար, -արվեստ* վերջնաբաղադրիչներով

կազմությունները բազմաթիվ են (նշենք, որ առայժմ սակավաթիվ են կամ գրեթե չեն հանդիպում իմաստային նույն դաշտին վերաբերող, *-պար, -քանդակ, -պատկեր, -արձան* վերջնաբաղադրիչներով նորակերտ բառերը):

*-Երգ* վերջնաբաղադրիչով բառերից նշենք՝ *հաշվերգ, ողջերգ, ահերգ, պարզերգ, որսերգ, գիներգ, վրեժերգ, հնչերգ, թռչներգ, կալերգ, հավքաերգ:*

*-Նկար* վերջնաբաղադրիչով նորակերտ բառերից նշենք՝ *անձավանկար, կազմանկար, տեսանկար, գիշերանկար, հողանկար, վանդականկար, տպագրանկար, քաղաքանկար, հայանկար, մահանկար, փայտանկար, քարոզչանկար, բառանկար, եվրահեռանկար, թատերախճանկար, պոռնոլուսանկար, ֆոտոդիմանկար*<sup>6</sup>: Այս կադապարով ստեղծված եռաբաղադրիչ (վերջին չորսը) կազմություններում նորաբանություններ են կազմվում *-նկար* վերջնաբաղադրիչն արդեն ունեցող բառերին (*հեռանկար, խճանկար, դիմանկար, լուսանկար*) *եվրա-*, *թատերա-*, *պոռնո-*, *ֆոտո-* սկզբնաբաղադրիչների հավելումով:

*-Արվեստ* բաղադրիչով նորաստեղծ կազմություններ են՝ *ոճարվեստ, դրամարվեստ, ճոճարվեստ, գրքարվեստ, կեղծարվեստ, ժայռարվեստ, հողարվեստ, ֆոտոարվեստ, քանդակարվեստ, ֆոտոգեղարվեստ, լուսարվեստ, թափոնարվեստ* և այլն:

Հաճախացել են նաև *-ոլորտ, -դաշտ, -աշխարհ* վերջնաբաղադրիչներով կազմված բառերը: Սրանցից «Նոր բառերի» վեց պրակներում արձանագրված են հետևյալները՝ *թախձաշխարհ, տեխնոաշխարհ, մեդիաաշխարհ, ֆիլմաշխարհ, գուգաշխարհ,*

---

<sup>6</sup> Տե՛ս նաև **Հ. Զաքարյան**, Հայերեն էլեկտրոնային բառարանի ինքնազարգացման մի եղանակ.- Արդի հայերենի բառապաշարի զարգացման և կանոնարկման հիմնախնդիրներ: Հանրապետական գիտաժողով, 18 դեկտ., 2019 (հոդվածների ժողովածու): Եր., ԵՊՀ հրատ., 2020, էջ 55-56:

տեսլաշխարհ, ձկնաշխարհ, երագաշխարհ, գոյաշխարհ, լրատվաշխարհ, մեդիառոլորտ, նշանոլորտ, բլոգոլորտ, գյուղոլորտ, կինոլորտ, հեռուստալորտ, կիբեռոլորտ, դեղոլորտ, գոյամթնոլորտ, գունամթնոլորտ, լրատվադաշտ, մեդիադաշտ, հեռուստադաշտ, աշխատադաշտ, արժեդաշտ: Նկատենք, որ -դաշտ, -աշխարհ բաղադրիչները բաղադրությունների կազմությանը մասնակցում են փոխաբերական իմաստով:

Այժմ անդրադառնանք -համ, -հոտ, -բույր իմաստաթեմատիկ խմբին: **-Բույր** բաղադրիչով «Նոր բառեր» բառարանաշարում արձանագրված են բազմաթիվ նորակազմություններ՝ *անհստնաբույր, ավշաբույր, բարկաբույր, խոտաբույր, ծխախոտաբույր, ճոռոմաբույր, հարսնաբույր, հրաշաբույր, մարիխուանաբույր, օփիումաբույր, դառնաբույր, մարմնաբույր, նշխարաբույր, վատաբույր, գյուղաբույր, լավաշաբույր, ծիրանաբույր, փաթիլաբույր, հասմիկաբույր, շնչաբույր, սառնաբույր, տնաբույր, գրաբարաբույր, կարոտաբույր, ծխաբույր, օդաբույր, և այլն, -հոտ* բաղադրիչով՝ *քարածխահոտ, ուրցահոտ, նավթալինահոտ, արևահոտ, ծովահոտ, սնկահոտ, ցեխահոտ, կաշեհոտ, մտքահոտ, միահոտ, կեղևահոտ, տամկահոտ, թոնրահոտ, հազարահոտ, մեղվահոտ, մրգահոտ, նշահոտ, -համ* բաղադրիչով՝ *մոխրահամ, սրճահամ, սարահամ, մարդահամ (մարդահամ գալ կապակցության մեջ), տհաճահամ* և այլն: Այս թեմատիկ խմբում հաճախադեպ են փոխաբերական գործածությունները, նաև բանաստեղծական բառերը՝ *անրջաբույր (օրորոց), աշնանահամ (անձրև), արևահոտ, բառահամ (փխբ.), սատանայաբույր (փխբ.,չարաբույր, դաժան), աստվածահամ (փխբ.), հաղթաբույր (փխբ.):*

Անդրադառնանք նաև նորաստեղծ ժամանականիշ բառերի քննությանը: Գարնանագալ, ճաշավերջ, օրաշար, դարավարտ, օրակես, պատմափուլ, պեղաշրջան, հարահավերժ, լուսնագալ,

տոնաշրջան, օրածեզ, օրավարտ, ընթացածամանակ, ընթացափուլ օրինակները բաղադրյալ կազմություններ են: Դրանց մի մասը քանաստեղծական, հուզական երանգ պարունակող բառեր են: Ժամանակի իմաստը նորակազմ բառերում կարող է արտահայտվել նաև բառակազմական այլ միջոցներով (նախածանցում, վերջածանցում): Մինչ-, նախ-, վեր-, հետ- նախածանցներով կազմված նորակերտ բազմաթիվ բառերից նշենք մի քանիսը միայն՝ նախագեղագիտական, նախամրցույթային, վերժամանակյա, հետզինադադարյան, մինչճգնաժամային, մինչ-վաղորդյան և այլն:

Մի քանի խոսք նորակազմությունների ստեղծման ժամանակ ի հայտ եկող որոշ սխալների, անճշտությունների մասին: Դրանք գործածության ժամանակ նկատվելու դեպքում կա՛մ շտկվում են, կա՛մ փոխարինվում են այլ կառույցներով: Ավելորդ չէ այս մասին մեկ-երկու վկայություն բերել: Խոսքը վերաբերում է *-հենք* և *-հեն* բաղադրիչներով կազմություններին: *Գիտելիքահենք* («գիտելիքի վրա հենված»), *համայնքահենք* («համայնքի վրա հիմնված»), *փաստահենք* («փաստերի վրա հիմնված») կիրառությունների բառարանային նմուշները համապատասխանում են լեզվական գործող կաղապարին: Այսպես, «Նախագահն ու վարչապետը անցած տարիների ընթացքում պարբերաբար խոսում են գիտական ներուժի օգտագործման, *գիտելիքահենք* ոլորտի զարգացման, այս ոլորտի առաջնահերթության մասին (Ազգ, 28.03.2014)»: «Այն կազմակերպվում է «*Համայնքահենք* էկոտուրիզմը որպես կայուն ապրուստի միջոց Թումանյանի տարածաշրջանում» ծրագրի շրջանակներում (ՀՀ, 30.07.2019)»: «Կենտրոնը մի շարք պիլոտային փորձարկումների օգնությամբ *փաստահենք* առաջարկներ է ներկայացրել կառավարությանը (Հմց)»: Շրջանառության մեջ են նաև *ծրագրահեն, ցանցահեն* բառերը՝ կազմված

*ծովահենի* համաբանությամբ: «Նոր բառերի» Ե պրակում գրանցված է նաև *բառահեն* դիպվածային բառը՝ «բառը՝ խոսքը յուրացնող, գողացող» նշանակությամբ: Այսպիսով, *հեն* և *հենք* արմատները հարանուններ են և բառեր կազմելիս պետք է տարբերակվեն: Այս առումով *արժեքահեն* բառը, որ վկայված է «Նոր բառերի» Ե պրակում, ակնհայտորեն անհաջող կազմություն է («Նոր կրթությունը պետք է լինի ապակենտրոն, *արժեքահեն*, կիրառական և ստեղծարար (Հմց)»):

Բառարանում ընդգրկված նյութի վերլուծությունը կարելի է շարունակել՝ առանձնացնելով իմաստային նոր խմբեր (հասարակական-քաղաքական ոլորտին, բժշկությանը, աշխատանքային գործիքներին, բնությանը վերաբերող բառեր և տերմիններ)՝ իրենց կառուցվածաքային բնորոշ կաղապարներով:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Նորակազմ բառերի բառակազմական կաղապարների, հիմքերի ու ածանցների կապակցության քննությունը ի հայտ է բերում իմաստակառուցվածքային որոշակի առանձնահատկություններ: Հոդվածում քննվում են նորաստեղծ բառերի առաջացման և տարածման որոշակի միտումներ ու օրինաչափություններ: Բառերի մի քանի իմաստաթեմատիկ խմբերի դիտարկման միջոցով վերհանվում է որոշակի ածանցների ու ածանցակերպների գործունացման երևույթը: Դիտարկվում են մի շարք նորակերտ ժամանականիշ բառեր: Ուշադրության առարկա են դարձել հատկապես մասնագիտություն, զբաղմունք նշանակող նորակերտ բառերը: Անդրադարձ է կատարվում նաև նոր կազմությունների ստեղծման ժամանակ նկատվող որոշակի անձիշտ ձևերին: Հոդվածում քննվող փաստական նյութը «Նոր բառեր» բառարանաշարում ընդգրկված բառերն են:

**А. С. Галстян-Вопросы семантико-структурного анализа новых слов в современном армянском языке.-** Исследование словообразовательных моделей, связей суффиксов и основ новых слов в современном армянском языке выявляет определенные закономерности семантико-структурного характера. В данной статье исследуются тенденции и закономерности возникновения и распространения новых слов. При помощи рассмотрения некоторых семантико-тематических групп слов выявляются тенденции активизации некоторых суффиксов и суффиксоидов. Рассматриваются новые слова, обозначающие время в современном армянском языке. Особое внимание уделяется анализу новых слов, обозначающих профессию, занятие. Отмечаются также некоторые отклонения от словообразовательных норм. В статье использован фактический материал выпусков словарей «Новые слова».

**Գայանե Հովսեփյան**

**Բանալի բառեր.** բառապաշար, նորաբանություն, բառաբարդում, ածանցում, անձնավորում, հանգավորում, դիպվածային կազմություն:

**Ключевые слова:** лексика, неологизм, формулировка, деривация, олицетворение, рифмование, аллитерация.

**Key words:** vocabulary, neologism, wording, derivation, personification, rhyming, alliteration.

Հայոց լեզուն բարդ, շարունակաբար փոփոխվող համակարգ է, որում ամենաշարժունը բառապաշարն է: Փոփոխությունների արդյունքում անընդհատ համալրվում է բառային կազմը նոր միավորներով, նորաստեղծ բառերով, նորաբանություններով: Այդ փոփոխությունները հստակ երևում են հատկապես գրական ստեղծագործություններում: Բառային կազմի համալրումն ընթանում է ի հաշիվ նորաբանությունների: Հայ լեզվաբանները միշտ առանձնահատուկ ուշադրության են արժանացրել բառաստեղծման, բառիմաստային փոփոխության համակարգի զարգացումը:

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի հրատարակած «Նոր բառեր» բառարանի Ե և Զ պրակներում առկա են Լ.Դուրյանի «Կյանք իմացյալ» ժողովածուից նորակազմ և նորիմաստ բառեր, որոնք

---

\* Գավառի պետական համալսարան, Գիտական հոդվածների ժողովածու, 2022, N 13, էջ 411-418:

հնարավորություն են ընձեռում ուսումնասիրելու բանաստեղծի ստեղծած բառաշխարհը (նորակազմ բառեր, բառաբարդում, *-ություն*, *-մունք*, *-ք* ածանցներով բառեր):

Լյուդվիգ Դուրյանը մեր այն բանաստեղծներից է, որոնց հենց առաջին ստեղծագործական քայլերը արժանացել են ուշադրության և գնահատանքի: Ա. Դուլուխանյանը ուշագրավ և շատ հետաքրքիր մտքեր է արտահայտում բանաստեղծի դասեր՝ Սիրանուշ Քրիստոսատուրյանի հրատարակած անտիպ երկերի ժողովածուի մեջ զետեղված բանաստեղծությունների մասին և, ի դեպ, հիշում է նաև, որ երբ Սուրեն Աղաբաբյանը կարդացել է բանաստեղծի «Արշալույսի երգեր» անդրանիկ ժողովածուն, ասել է, որ այս տղան «հոգում աստվածային կայծ ունի, ազնիվ խմորից է շաղախված»<sup>1</sup>:

«Արշալույսի երգեր»-ին հաջորդել են նոր ժողովածուներ, պոեմներ: Լ. Դուրյանի բանաստեղծությունների քնարական շունչը ոգևորել է մեր երգահաններին, որոնք երգերի են վերածել նրա շատ ստեղծագործություններ, և որոնք այնպես գեղեցիկ կատարում են մեր անվանի երգիչ-երգչուհիները:

Լ. Դուրյանը ինքնատիպ լեզվամտածողությամբ և լեզվագագնողությամբ ստեղծագործող է: Եվ պատահական չէ, որ նրա ստեղծագործությունները հետաքրքրում են և՛ գրականագետներին, և՛ հասկապես լեզվաբաններին: Լ. Դուրյանի ստեղծած պատկերները ուշագրավ են և հետաքրքիր. Անձնավորումը բանաստեղծների սիրած հնարքներից է. ահա այդպիսի մի օրինակ Լ. Դուրյանի մի բանաստեղծությունից<sup>2</sup>. «Սարերը սերմնացան են, *ամպավարս* են, ուժեղ» (*ամպավարս* բառը Լ. Դուրյանի կերտած նոր բառերից է). սարերի պատկերն ամբողջանում է, երբ ամպերի նման վարսեր

---

<sup>1</sup>Ա. Դուլուխանյան, Լյուդվիգ Դուրյանի անտիպ բանաստեղծությունները, Գրական թերթ, 04.02.2020:

<sup>2</sup> Լ. Դուրյանի կազմած նոր բառերը բերվում են շղատառ :



ունեցող սար-ծերունիների մորուքները համեմատվում են ջրվեժների հետ. «Ձեր բազուկներն են ժեռ, // Ու ձեր հայացքն է վեհ, // Դուք *ամպավարս*, ուժեղ, // Մորուքներով ջրվեժ»<sup>3</sup>:

Լ. Դուրյանի նախասիրած բառակազմական եղանակներից է բառաբարդումը: Նրա ստեղծած նորակազմությունների մեջ շատ են այն բառերը, որոնց առաջին բաղադրիչները երկնային մարմինների անվանումներ են՝ *արևազանգ*, *արևահոսք*, *արևաբուխ*, *արևազանգուր*, *աստեղնահուր*, *աստղակատար*, *աստղաշաղոտ*, *աստղագահ*, *աստղակալ*, *աստղաթաս*, *աստղատարածք*, *լուսաստղային*: Այս բառերից ամեն մեկը գործածվում է մի յուրօրինակ պատկեր ստեղծելու համար. օրինակ՝ «Դու երգեհոն, *արևաբուխ* փառքի շեփոր», այն եղեգնը, որ երկնել է «բոցեղ փրկիչ-վիշապաքաղ» (ԿԻ, էջ 39), հայոց լեզուն բանաստեղծի համար ոչ միայն ճախրանք, երազը պահպանող սուր է, այլև լույս տարածող *արևազանգ* «Լույս տարածող *արևազանգ*// Արդարություն ծնող ցասում» (ԿԻ, էջ 38):

Նորակազմ բառերը ավելի շատ են հայրենիքին, հայոց լեզվին վերաբերող բանաստեղծություններում՝ *ազգաշուք* տառ, *հայածուխ* տուն, *համառակամք* հաղթություն և այլն:

Դիմելով Արարատին՝ բանաստեղծը գրում է, որ լեռը հիշեցնում է բոլորին *Հայկազորեղ* քաջերի անունները, որոնք իրենց կյանքն են նվիրել, «որ մեր հողում չբազմանան եղեռնությամբ մեզ ավերած *խևարնազդ* վայրենիք» (ԿԻ, էջ 39): *Բերդաշար* ենժայռերը՝ ժայռերի շարք, որ բերդի նման պաշտպանում են «սրընթաց քերծին թառած Նորավանքը» (ԿԻ, էջ 39):

Նկատելի է, որ կան այնպիսի բարդություններ, որոնց երկրորդ բաղադրիչը բայարմատ է, օրինակ, *աչքազբաղ*, *սփնատորոն*, *ոտքաքաշ*, *գիշերազալ* (հավանաբար *արևազալի* նմանությամբ),

<sup>3</sup> Լ. Դուրյան, *Կյանք իմացյալ* (այսուհետև՝ ԿԻ), Ե., 2008, էջ 12:

*գարունախոս, շահաշորթ, օրենքարար, թափառատանջ, հիմնագետ, աստղատես, շշուկաշարժ, դողապարուր, հավերժախուժ, սրտաեռ, դժոխաեռ, ցուլքածուփ, փետրասահ, զուլալահոս, մաշտոցահինար, անձրևամաշ, մեղքատարած* և այլն:

Հատկանշական է, որ որպես երկրորդ բաղադրիչ հանդես է գալիս *-խոս* բայարմատը: Այսպիսի օրինակները Լ. Դուրյանի պոեզիայում բազմաթիվ են՝ *ծննդախոս, գարունախոս, իրավունքախոս, արբազնախոս, ջերմախոս, գղջախոս, փրկախոս, վարդախոս, երանախոս, դարախոս, արևախոս* և այլն: Բերենք մի քանի բնագրային օրինակ Լ. Դուրյանի «Կյանք իմացյալ» ժողովածուից. «Որ հայն իմանա, իմանա՝ գիրքն այդ // *Ծննդախոսն* է նաև իր ազգի» (ԿԻ, էջ 294), «Վարքն էր տիրամեծ Աստրծո՝ Հիսուսի, // Գերագույն փրկչի՝ բյուրիմաստներով *արբազնախոս...*» (ԿԻ, էջ 373), «Բայց *գղջախոս*՝ ես քեզ պաշտել եմ կրկին // Ու լացն աչքիս՝ քո աչքերին եմ նայել» (ԿԻ, էջ 150), «Դու գորգի վրա փովեցիր թավիշ, // Շուրթերդ դարձան *վարդախոս* ավիշ» (ԿԻ, էջ 143):

Պատկերավոր են-*ծուփ* արմատով բառերը: Լեզվում արդեն գործածվող *-ծուփ* բաղադրիչով բառերի համաբանությամբ (ալեծուփն այլն) Լ. Դուրյանը ստեղծել է մի շարք նոր բառեր. *Ճկունածուփ* «*Ճկունածուփ* բոցի եղեգ// Ծնվեց հուր հեր պատանեկիկ» (ԿԻ, էջ 16), *ցուլքածուփ* «*Ցուլքածուփ* ջրերի վրա// Պալատի ստվերն էր խայտում» (ԿԻ, էջ 54), *խենթածուփ* «Փովել էր տիկին Պոլիսը// Լույսերի *խենթածուփ* քողի տակ» (ԿԻ, էջ 57), *քողածուփ* «Լույսն այնպես լավեր// Իջնում *քողածուփ* ու վարդավառ» (ԿԻ, էջ 24):

Ուշադրության են արժանի նաև *-հույզ* արմատով հետևյալ նորակազմությունները. *աստղահույզ* (ԿԻ, էջ 24), *աստեղնահույզ* (ԿԻ, էջ 24), *ցուլքահույզ* (ԿԻ, էջ 233), *խենթահույզ* (ԿԻ, էջ 166), *հուզազմայլ* (ԿԻ, էջ 262), *դողահույզ* (ԿԻ, էջ 88), *երանահույզ* (ԿԻ, էջ 174) և այլն:

Անդրադառնալով *գույն* արտահայտող բառերին՝ հարկ է նշել, որ Լ. Դուրյանը բանաստեղծական հնարամտություններով, առանց գունանունները գործածելու պատկերավոր կերպով կերտում է նոր բառեր. օրինակ. *հրադեղձան* «Քո աչքերը՝ սև թուզ, // Ու վարսերդ՝ շո՛գ, շո՛գ *հրադեղձան*» (ԿԻ, էջ 29), *երփնաձայն* «Քո ծառերը վանք են կանաչ, // Զանգ- պտուղով *երփնաձայն*» (ԿԻ էջ 160), *շառագունեղ* «Ես իմեցի գինի, // Շառագունեղ արև» (ԿԻ, էջ 209), *ծիրանահորդ* «Եվ այդ հուրը արդեն *ծիրանահորդ* // ծածկում է սարափեշ գյուղու այգի» (ԿԻ, էջ 67), *հրդեհավարս* «Իմ դեմ արդեն *հրդեհավարս* պարում է կին, // Պարում է հեթանոս կրոնը շոգ» (ԿԻ, էջ 183), *ոսկեմեղու* «Աովի խոխոջները // Խմբերգում ե արծաթ, // Վազի բողբոջները // Ոսկեմեղու դարձան» (ԿԻ, էջ 61):

*Կապույտ* գունանվանումը հեղինակը գործածում է որպես լույսի, եռանդի, ցնորքի զգացումի խորհրդանիշ և դրանցով ստեղծել է նորակազմություններ. *կապտախուժ* «Օովը *կապտախուժ* // Քայլքն իմ դարձնում էր սահուն, հպանցիկ» (ԿԻ, էջ 121), *կապտախիտ* «Առավոտը աշնան // Պաղ էր ու *կապտախիտ*» (ԿԻ, էջ 67), *կապտալույս* «Եվ *կապտալույս* քարանձավում // Իմ սուրբ լեռան...» (ԿԻ, էջ 37), *կապտահուր* «Ու բաց թողեց նա իմ սրտում *կապտահուր* մորմոք ու ցավ» (ԿԻ, էջ 84), *կապտագուլալ* «Շահաբը հրապուրիչ էր... *կապտագուլալ* գետակով» (ԿԻ, էջ 3):

Կան բառեր, որոնք վկայված են բառարաններում, բայց Լ. Դուրյանը դրանք գործածում է այլ իմաստով. օրինակ, *հնախոս* բառը ըստ բառարանների<sup>4</sup> նշանակում է «հնագետ, հին անցքերի մասին պատմող» (ԱՀԲԲ, էջ 878)<sup>5</sup>, իսկ Լ. Դուրյանը գրում է. «Մեր

<sup>4</sup> Է. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան* (այսուհետև՝ ԱՀԲԲ), Ե., 1976, էջ 878: Սու. Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան* (այսուհետև՝ ԿԻ), հ. III, Ե., 1944, էջ 115:

<sup>5</sup> Տե՛ս նաև՝ Սու. Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան* (այսուհետև՝ ԱՀԲԲ), հ. III, Ե., 1944, էջ 115:

*հնախոս* ցավի առաջ// Կանգնել էիր դու միայնակ»<sup>6</sup>: *Տեղագետ* բառը բառարաններում առկա «տեղագիտության մասնագետ» իմաստով (ԱՀԲԲ, էջ 1430), բայց Դուրյանը գրում է. «Դու առաջնորդ քարավանի//, Օազիսի *տեղագետ*» (ՄՄ, էջ 20):

Հետաքրքիր կազմություն է *հրաշքագուն* - ը, որը նա ստեղծել է *դյուցագուն*, *քաջագուն* բառերի նմանությամբ. «Ինչքա՛ն, ինչքա՛ն// Կուզեի ես//, Որ աշխարհն այս//Հուզեի ես//, Ինչպե՛ս ինչպե՛ս// Քո սիրտ-լեզուն//, Երգող լեզուն *հրաշքագուն*» (ԿԻ, էջ216):

«Մերոպ Մաշտոց» պոեմում Լ. Դուրյանը փառաբանում է հայոց գրերն ստեղծողին. «...ես կկերտեմ կերպարանքը քո//Եվ տարածական ուժդ *համաստեղ*<sup>7</sup>, Կփառաբանեմ վայելուչ խրդճով»<sup>8</sup>: Մաշտոցի առաքելությունը *գրապարզ* նվիրումն է՝ «Քեզ ծնեց ազգս,...որ *գրապարզ* նվիրումը քո// Կոչվեր մայրենի». նա ծնվել էր, որ ազգն ունենար «գորք, հուռթի *տառազորք*», «որ աշխարհը լույսով գրավեր», գորք, որ պահպաներ հայի ինքնությունը և պաշտպաներ հայրենիքը: Մաշտոցի թիկնոցը *ծիրանաեռ* է, *լուսերգվում* է նրա մեջ «գոհացումի հաճույք», և նա գոհ է, *հաղթածին*: Լ.Դուրյանը գրում է. «...ստեղծեցիք գրոց *պահություն*<sup>9</sup>, *Գահություն* խոհի»: Պոեմում նույնպես կան բառեր, որ վկայված են բառարաններում, սակայն Դուրյանը գործածում է այլ իմաստով. դրանցից է պոեմում բերված «Բայց նոր հացի բույրով երազը հոգուդ *Մատաղերամ* ճախր է առել դաշտերում»: *Մատաղերամ* բառը հայերեն բացատրական բառարաններում ունի «մատաղ

<sup>6</sup> Լ.Դուրյան, *Մերոպ Մաշտոց* (այսուհետև՝ ՄՄ), Ե., 1976, էջ 75:

<sup>7</sup> *Համաստեղ* բառը պոեմում չի գործածվում բառարաններում վկայվող իմաստներով. կարծում ենք՝ այն նշանակում է «ամեն ինչ ստեղծող»:

<sup>8</sup> Բնագրային օրինակները նշված հրատարակությունից են:

<sup>9</sup> *Պահություն* բառը կա Ստ.Մալխասյանի բառարանում, բայց այլ իմաստով՝ *պահություն*՝ «հագուադեպ բառ» նշումով և «պահելը, սնուցանելը (անասուններ)» բացատրությամբ. ՄՀԲԲ, հ. IV, էջ 40:

երեխաների՝ մանուկների խմբին պատկանող» իմաստը (ԱՀԲԲ, էջ 974, ՄՀԲԲ, հ. III, էջ 265)<sup>10</sup>, իսկ Դուրյանը գործածել է *երագ* բառի համար:

Լ. Դուրյանը ստեղծում է նոր բառեր տարբեր ածանցներով. – *ություն* ածանցով բավական նոր բառեր կան և՛ «Մեսրոպ Մաշտոց» պոեմում, և՛ «Կյանք իմացյալ» ժողովածուում. *վառքություն* «Հրայրքը լուսաբացի// Վառքությամբ տունս օծեց» (ԿԻ, էջ 194), *ցինություն* «Որ ցինությունը ցրիվ գա ցմահ» (ՄՄ, էջ 80), *մտքագորություն* «Բայց միասնությամբ մտքագորության// Առավել էիք դարձել երկվորյակ» (ԿԻ, էջ 295), *խոսքություն* «Կային տառերը, // ...որ հղկվել ու դարձել էին *խոսքության* ազնվական շունչ» (ԿԻ, էջ 371), *արևություն* «Օ, կին..., // աղոթում եմ քեզ խոնարհ, ծնկաչոք, // ... *Արևությունը* քո ներշնչելու» (ԿԻ, էջ 152), «Տարածվում է տիեզերքում Աստծո երգ//, Դու պարում ես *արևության* տարափով» (ԿԻ, էջ 193), *տարեցություն* «Անջատվել եմ արդեն հախուռն հրաշքներից, // Հաղթող *տարեցությամբ* հանդարտվել եմ արդեն» (ԿԻ, էջ 17), *շաղություն*, «Հող..., թող անձրևային *շաղությունն* առատ... // Իջնի քո երազանքին» (ԿԻ, էջ 333), *մտքապահություն* «Ազգին բնորոշ բազում պատումներ// Պահպանվել էին միայն քո *մտքապահությամբ*» (ԿԻ, էջ 370), *սրբաբույրություն* «Գութով նվաճված գահի պաշտամունք// *Սրբաբույրությամբ* արարված հմուտ...» (ԿԻ, էջ 155), *շողերգություն* «Ա՛խ, դառնում է աշխարհն աչքիս// *Շողերգության* դրախտ աշխարհ» (ԿԻ, էջ 133), *արշալույսություն*, «Նրանք քեզանով գումարված անհուն, // Դու դարձ՝ արևի *արշալույսությամբ*» (ԿԻ, էջ 151), *ոխեմություն* «Մի թող, որ օտարը *ոխեմությամբ* համառ // Իր լեզվով մեր լեզուն կուլ տա...» (ՄՄ, էջ 85), *նազանքություն* «Եղեգն այդ ուներ թևող, շենշող

<sup>10</sup> Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (այսուհետև՝ ԺՀԼԲԲ), հ. III, Ե., 1974, էջ 485:

այգ //Եվ նազանքությամբ զուգված հասակ» (ԿԻ, էջ 224), *անգղություն* «Որ անգղությունը աղավնության դեմ //Էլ չհարձակվի» (ՄՄ, էջ80), *այգություն* «Ա՛խ, մի հավքով երամ... երկու հոնքերն են հավք, բորբ այգության շերամ...» (ԿԻ, էջ197), *բախտություն* «Վերադարձել եմ հայրենիք//Մե՞ծ բախտությամբ» (ԿԻ, էջ 206), *դրախտություն* «Տեսիլքներն իմ երազանքի-//Պրախտություն գալիքն են հաշտ» (ԿԻ, էջ114), *մահություն* «Անմահության գաղտնիքի//Եվ մահության գաղտնիքի խորքը կսուզվես» (ԿԻ, էջ 207):

Սրանք հիմնականում դիպվածային կազմություններ են:

-*Մունք* վերջածանցով են կազմված հետևյալ բառերը. *դաղձաբուրմունք* «Ես ծնվեցի որպես անվե՛րջ երեխա...//Մորս կաթը *դաղձաբուրմունք* էր ավի՛շ» (ԿԻ, էջ 208), *մազաբուրմունք* «Եվ դու ժպտաս *մազաբուրմունք՝* վերացումով երազի, // Շուրթիդ ցողրտաս իմ շուրթին...» (ԿԻ, էջ 142), *ծլաբուրմունք* «Շուրջբոլոր սփռված էին// *Ծլաբուրմունք* դաշտե՛ր, դաշտ՛եր»(ԿԻ, էջ 133):

-*Ք* վերջածանցով են հետևյալները. *աստղատարածք* «Դու ամենուր, դու ամենտեղ իրական, // Քեզանով է *աստղատարածքը* հևում» (ԿԻ, էջ 173), *ծլաժայթք* «Դու սերնդահունդ բույլ, դու *ծլաժայթք*,// Հաստատության ուժ, հաստատության ժայռ...»(ԿԻ, էջ 151), *վարդահրայք* «Նա հերարձակ, // Հագել է ոչ թե շոր, //Այլ՝ լուսայգի *վարդահրայքը* թափանցիկ» (ԿԻ, էջ 151), *արևահոսք* «Թո՛ղ համբուրեմ, որ գորանա// *Արևահոսքն* իմ կարոտի» (ԿԻ, էջ 88):

-*Ություն, -մունք, -ք* վերջածանցներով նորաստեղծ բառերի ճիշտ և հմուտ հանգավորմամբ Լ. Դուրյանը պահպանում է բանաստեղծության մեջ դրանց պատկերավոր կիրառումը՝ օգտվելով բառակազմական անսահման հնարավորություններից հարստացնելով հայոց լեզվի բառապաշարը:

Նրա ստեղծագործություններում գործածված բոլոր նորակազմ բառերը հնարավոր չէ ներկայացնել մեկ հոդվածի շրջանակ-

ներում: Լ. Դուրյանը իմացյալ կյանք ապրեց, և կարծում ենք, որ նրա ստեղծած նորաբանությունների մի որոշակի մաս կդառնա ընդհանուր գործածական և տեղ կգտնի հայոց լեզվի բառարաններում:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Լ.Դուրյան, Մեսրոպ Մաշտոց, Ե., Սովետական գրող, 1976:
2. Լ.Դուրյան, Կյանք իմացյալ, Ե., Ոսկան Երևանցի, 2008:
3. Է.Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., Հայաստան, 1976:
4. Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, հ. III, Ե., Հայկական ՄՍՌ Պետական հրատարակչություն, 1944-1945:
5. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. III, Ե., Հայկական ՄՍՌ Գիտությունների ակադեմիա, 1974:

## ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննվում են Լ. Դուրյանի երկերում առկա նորակազմ բառերը:

Նրա բանաստեղծական ժողովածուները «Կյանք իմացյալ», «Այսքանը իմ կյանքից» և «Մաշտոց» պոեմը իրենց նորաստեղծ բառերով, ինքնատիպ բառակերտումներով բացահայտում են գրողի լեզվամտածողական համակարգը: Նորակազմությունների դիպուկ և հմուտ կիրառություններով բանաստեղծը օգտվում է հայոց լեզվի բառակազմական հնարավորություններից և ստեղծել յուրահատուկ և տպավորիչ նորակազմ բառեր՝ դրանով իսկ համալրելով հայոց լեզվի բառապաշարը:

Երկնային մարմինների անվանումներով նորակերտ բառերը (*արևաբուխ, արևագանգուր, աստղակալ, աստղաթաս, լուսնաօղ*),

հիմնականում հողակապով բարդություններ են: *Գույն* արտահայտող բառերում առանձնացված են երկու խումբ. Բառեր որոնցում չկան գունանուններ (*երփնաձայն, շառագունեղ, հրադեղձան*), և նորակազմություններ, որոնց բաղադրիչներից մեկը որևէ գունանուն է (*կապտահուր, կապտագուլալ, կապտախիտ*): Շատ են բայահիմք վերջնաբաղադրիչներով կազմված նոր բառերը (*գուլալահու, սրբատարած, հանճարախոս*): Վկայվում են նաև *-ություն, -մունք, -ք* վերջածանցներով բազմաթիվ կազմություններ: Նորակազմ բառերի շարքում առկա են հայրենիքին, հայոց լեզվին վերաբերող բառեր ու արտահայտություններ (*հայածուխ, ազգաշուք*):

Նորաբանությունների, նորիմաստների, նորակազմ բառերի ստեղծումը միշտ էլ խթանել է հայոց լեզվի բառապաշարի համալրման գործընթացը:

### Резюме

В статье рассматриваются новые слова в произведениях Л. Дурьяна.

Его поэтические сборники «Къянкимацял» (Жизнь, как она есть), «Айсканн им кянкиц» (Отрывок измоейжизни) и поэма «Маштоц» раскрывают языково-мыслительную систему писателя своими новосозданными словами и оригинальными словообразованиями. Точно и умело используя образования, поэт использует лексические возможности армянского языка и создает уникальные и впечатляющие новые слова, пополняя тем самым словарный запас армянского языка.

Новообразованные слова с названиями небесных тел (солнечные лучи, солнечный завиток, звездный кубок, лунное кольцо) чаще всего являются артикуляционным усложнениями.



Есть две группы слов, обозначающих цвет. Слова, в которых нет названий цветов (многоцветный, ярко красный), и новообразования, одним из компонентов которых является название цвета (пламенно-синий, чисто-синий, густо-синий). Появилось много новых слов, образованных с окончаниями на основе глаголов (чисто-течный, гениально-говорящий). Так же много образований с суффиксами - утюн, -мунк, -к. Среди новообразованных слов есть слова и выражения, связанные с родиной и с армянским языком (армянский очаг).

Создание неологизмов, новых значений, новых слов всегда стимулирует процесс пополнения словарного запаса армянского языка.

### Summary

The article examines newly formed words in L. Duryan's works.

His poetry collections "Known life", "This much from my life" and the poem "Mashtots" reveal the writer's language-thinking system with their newly created words and original word formations. With precise and skillful use of new word formations, the poet takes advantage of the lexical possibilities of the Armenian language and creates unique and impressive new words, thus adding to the vocabulary of the Armenian language.

Newly created words with the names of celestial bodies (arevabukh (sunburst), arevagangur (sun curl), astghakal, astghatas (star cup), lusnaogh (moon ring)) are mostly complications with use of articles. There are two groups of words expressing color. words in which there are no names of colors (yerpnadzayn (multicolor), sharagunegh (bright red), hradeghdzan), and new formations, where one

of the components is the name of a color (kaptahur (bright blue), kaptazulal (clean blue), kaptakhit (dense blue)). There are many new words formed with endings based on verbs (zulalahos (clean water streaming), srbatarac (sanctified), hanjarkhos (genius speaker). There are also many formations with the suffixes - utyun, -munq, - q. Among the newly formed words, there are words and expressions related to the homeland, the Armenian language (hayatsukh (armenian home/family), azgashuq (nationwide)).

The creation of neologisms, new words and new meanings has always stimulated the process of replenishing the vocabulary of the Armenian language.

**ԱԳՐ(Ո)-, ԷԿ(Ո)-, ԷՆ(Ո)- ՕՏԱՐ ԲԱՂԱԴՐԱՏԱՐՐԵՐՈՎ  
ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ\***

**Արմինե Մկրտումյան**

**Բանալի բառեր.** բառապաշար, տերմին, գյուղատնտեսական գիտություններ, նորակազմություն, պատճենում, կիսապատճենում, բառակազմական կաղապար:

**Նախաբան**

Լեզվի բառապաշարի համալրումը և զարգացումը հարափոփոխ, բնականոն գործընթաց է, որը պայմանավորված է ժամանակի թելադրանքով: Բառապաշարը, լինելով լեզվի ամենագգայուն շերտը, շատ արագ է արձագանքում հասարակական կյանքում կատարվող իրադարձություններին և փոփոխություններին: Ներկայումս նոր բառերի ստեղծման և կազմության գործում մեծակտիվություն է նկատվում, որը հասարակության, մշակույթի, գիտության և տեխնիկայի արագընթաց զարգացման անմիջական ազդեցությունն է կրում: Բառային կազմը համալրվում է ոչ միայն համագործածական բառերով, այլ նաև տերմիններով կամ գիտաբառերով: Նոր բառերը ստեղծվում են լեզվի փոխառությունների, բառապատճենումների, բառակազմական տարբերեղանակների, լեզվում առկա բառերի վերախմաստավորման ճանապարհով: Դրանք թույլ են տալիս պատկերացում կազմել լեզվի տվյալ փուլի գոյավիճակի մասին:

---

\* Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, Հումանիտար և հասարակական գիտություններ, Վանաձոր, պրակ 1, 2023, էջ 38-52:

Սույն հոդվածում քննում ենք  $uq(n)$ -,  $lq(n)$ -,  $ln(n)$ -օտարբա-  
 դադրիչներով կազմությունները՝ նպատակ ունենալով ցույց տալ  
 գյուղատնտեսական գիտությունների բառապաշարի՝ նոր բառերով  
 համալրման գործընթացը, տերմինային նորակազմությունների՝  
 օտար կամ հայերեն համարժեքների գործածությանն առնչվող  
 խնդիրները և դրանց բառակազմական հնարավորությունները,  
 որով էլ պայմանավորված է հետազոտության նորույթը: Քննութ-  
 յունը կատարվել է ըստ հրապարակում եղած մի շարք բացատրա-  
 կան, ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական, թարգ-  
 մանական, օտար բառերի, նորաբանությունների բառարանների և  
 համացանցային տվյալների:

Քննվող թեման արդիական է այնքանով, որ ցույց է տալիս  
 գյուղատնտեսական գիտությունների բառապաշարի հարստաց-  
 ման և կատարելագործման միտումները: Արժարժված խնդիրները  
 կարող են հետաքրքրել տերմինային բառապաշարը ուսումնասի-  
 րողներին, նպաստել տերմինային նոր բառարանների (այդ թվում՝  
 միջգիտակարգային տերմինների) կազմման աշխատանքներին,  
 ինչպես նաև օգտակար լինել բուհերի ուսումնական գործընթաց-  
 ներում բառակազմություն, տերմինաբանություն, նորաբա-  
 նություն, փոխառություն և օտարաբանություն թեմաներն ուսում-  
 նասիրելիս:

***Uq(n)*-, *lq(n)*-, *ln(n)*- օտար բադադրիչների ծագումը և  
 դրանցով կազմությունների բառարանագրումը**

Օտար բադադրիչ ունեցող բառերի քննությունը հաճախ է  
 մասնագետների ուշադրությանը արժանանում [2, 175-177], [15,  
 149-153], [12], [27, 243-247], [11], [8, 94-104], [29, 120-139], [26, 69-  
 74]:  $Uq(n)$ -,  $lq(n)$ -,  $ln(n)$ -բադադրիչներով բառերի բառարա-

նային[28], [14], [9], [5], [1], [10], [13], [25], [7], [12], [11], [16], [17], [18], [19], [20], [21], [22]և համացանցային տվյալների ուսումնասիրությունից պարզ է դարձել, թե դրանցով կազմված քանի բառ և բառակապակցություն է առաջին անգամ բառարանային գրանցում ստացել:

**ագր(n)**- 8 բառ և բառակապակցություն [28].*ագրարային ծրագիրներ,ագրարային կրիզիս, ագրարային հարց, ագրարային շարժումներ, ագրարներ, ագրար քաղաքականություն, ագրոնոմ, ագրոնոմիա,*

**էկ(n)**- 2 բառ[14].*էկոնոմիա և էկոնոմիզմ,*

**էն(n)**- 1 բառ[5].*էնոքիմիա:*

Է.Աղայանի նշված բառարանում **ագր(n)**- բաղադրիչը բացատրվում է որպես *նորակազմ և նորամուտ բարդ բառերի հապավված բաղադրիչ՝ ագրոնոմիական, իսկ ագրոնոմիականը՝ գյուղատնտեսական նշանակությամբ:* Այս ներկայացվում է այդ բաղադրիչով շուրջ 40 բառ՝ *ագրոդասընթաց, ագրոդայրոց, ագրոժամկետ, ագրոխմբակ, ագրոկանոն, ագրոհանք, ագրո-միջոցառում, ագրոշրջան, ագրոցանց, ագրոքաղաք* և այլն: Հանդիպում են նաև *ագրիկուլտուրա, ագրիկուլտուրային* ձևերը: Ի դեպ, բառարանում ներառված է նաև *ագրարբազմիմաստ բառը՝ 1.խոշոր հողատեր, կալվածատեր, 2.խոշոր հողատերերի ռեակցիոն կուսակցություն կապիտալիստական երկրներում* նշանակություններով, ինչպես նաև դրանով կազմված մի շարք բարդություններ՝ *ագրարագետ, ագրարային, ագրարագիտություն, ագրարահումքային* և այլն: Ա. Տեր-Ղազարեանի բառարանում ներառված է *ագրարներ* բառը՝ հոգնակի գործածությամբ (Այսպես են կոչում խոշոր հողատիրութեան պաշտպանները [28, 7]): Ըստ էության,

վերոնշյալ բոլոր օրինակները կազմված են **ագր**- հիմնական բաղադրիչով և **n, ի, ար**<sup>1</sup> հավելյալ տարրերով:

Չ. Հացագործյանը և Ս. Ասլանյանն ընդունում են **ագր**- ձևը. «... Տերմինային տարրը տրված է առանց շաղկապող -օ- և -ի- ձայնավորների, որոնք տարրի բաղկացուցիչ մասը չեն, այլ կապում են այն՝ գոյացնելով ամբողջական տերմին»[13, 5]: Մոտեցումը նույնն է նաև **էկ(n)- և էն(n)-** բաղադրիչների համար: Հեղինակներն այդ բաղադրիչի *դաշտ* բառացի նշանակության կողքին բերում են հայերեն երեք համարժեք՝ *1. գյուղ, 2. հող, 3. ագր*, ապա յուրաքանչյուրի համար՝ տերմինի բնորոշ օրինակ.

**Գյուղ.** агрономия – գյուղատնտեսություն // գյուղատնտեսագիտություն,

**Հող.** аграрный – հողային,

**Ագր.** агрофизика – ագրոֆիզիկա:

Ա. Հայրապետյանը ևս նշում է, որ այն *բառերի հապավված բաղադրիչ է՝ ագրոնոմիական (գյուղատնտեսական)* նշանակությամբ, որը ծագել է հուն. *agros (դաշտ)* բառից: Թեև բառարանագիրը *ագրոնոմ* *ագրոնոմիա* բառերի կողքին հնգ. նշումն է կատարել, այնուամենայնիվ, **ագր(n)-** օտար բաղադրիչով նորակազմությունները մեծ ակտիվություն են ցուցաբերում թե՛ արդի բառարաններում, թե՛ գիտական գրականության մեջ:

Ի մի բերելով **ագր(n)-** բաղադրիչի ծագման վերաբերյալ բառարանային տվյալները՝ ընդհանրացնենք, որ այն հայերեն կազմություններում ավանդված է երեք տարբերակով՝ *1. գյուղ, 2. հող, 3. բաղադրյալ բառերի բաղադրիչ:*

---

<sup>1</sup> Ըստ Հր. Աճառեանի, Մ. Մինասեանի «Հայերեն ստուգաբանական առձեռն բառարան»-ի (2004) և Գ. Ջահուկյանի «Հայերեն ստուգաբանական բառարան»-ի (2010) *ար*-ը ավանդված է *անել(ը), արարում, գործնշանակություններով:*

**Էկ(ո)**- բաղադրիչը նույնպես հունական ծագում ունի՝ *տուն, հայրենիք*[11], *գոյ*[12] նշանակություններով: Նրանով կազմությունները քանակապես զիջում են **ագր(ո)**-ով բաղադրություններին՝ *էկոլոգիա, էկոհեռախոս, էկոոստիկան, էկոտիպ, էկոգյուղ, էկոանձնագիր, էկոլուր, էկոկրթություն, էկոկենտրոն, էկոաշխարհ, էկոմթերք, էկոարշավ, էկոաղետ, էկոերկիր, էկոլարվածություն, էկոմշակույթ, էկոայգի, էկոչափանիշ, էկոաղբաման, էկովառելիք* և այլն: Ի դեպ, այս բաղադրիչով կազմությունների գործածությունը ակտիվացել է լեզվում: Հասարակական կյանքի տարբեր ոլորտներում հաճախակի է դարձել այս կամ այն առարկան, երևույթը, իրողությունն արտահայտել **էկ(ո)**- բաղադրիչի հավելումով: Հավանաբար հատկանիշի կարևորությունն ընդգծելու նկատառումներով ավելացվում է այդ բաղադրիչը՝ փորձելով վստահություն ներշնչել սպառողին:

Ֆ. Հայրապետյանը *էկոլոգիա, էկոգարգացում, էկոկլին, էկոծագում, էկոկենսաձև, էկոհամակարգ, էկոլոգիաստիկա, էկոոլորտ, էկոպայքար, էկոտեսակ, էկոտիպ, էկոտոպ, էկոցիդ* բառերի համար համապատասխանաբար առաջարկում է հետևյալ հայերեն տարբերակները՝ *գոյապահպանություն, գոյագարգացում, գոյաթեքում, գոյածագում, գոյակենսաձև, գոյահամակարգ, գոյապահպանաբանություն, գոյատլորտ, գոյապայքար, գոյատեսակ, գոյատեղ, գոյատիպ, գոյասպան*[12, 46-55]: Կարծում ենք՝ կարող են կիրառելի տարբերակներ համարվել, թեև հեղինակը թերահավատորեն է վերաբերվում լեզվում դրանց մուտքագրմանը. «Առաջարկվող հայերեն տերմինները, մեզ կլանող օտարալեզու տերմինային հորձանուտում ինչպիսի ապագա կունենան, դժվարա՛նում ենք կանխատեսել»[12, 6]:

**Էն(ո)**-բաղադրիչը համեմատաբար նորահայտ է: Պատճառը գյուղատնտեսության ավելի երիտասարդ և զարգացող ոլորտ

լինելն է: Նրանով կազմությունների քանակը խիստ սահմանափակ է: Բառարանագրված է երկու բառ՝ *էնոքիմիա*[5, 330], *էնոքիմիկոս* [22, 73]: Մյուս օրինակները համացանցային են՝ *էնոլոգ*, *էնոլոգիա* (Խոսքը ֆրանսիացի *էնոլոգ* և հետազոտող Էմիլ Պիենոյի մասին է, ով հեղափոխություն է արել գինեգործության մեջ 20-րդ դարի կեսին և կոչվել «Ժամանակակից *էնոլոգիայի* նախահայր» [31]), *էնոգաստրոնոմիա* (Համտեսը կարելի է զուգակցել հյուրասիրության հետ: Այս դեպքում ձեզ անհրաժեշտ կլինի գործակալություն, որը կօգնի կազմակերպել *էնոգաստրոնոմիա*: Նման միջոցառում անցկացվում է ռեստորանում, և յուրաքանչյուր տեսակի գինու համար առաջարկվում են ճաշատեսակներ, որոնք օգնում են ստեղծել ներդաշնակիամ[32]), *էնոգաստրոնոմիական տուրիզմ*, *էնոգաստրոնոմիական ընթրիք*, *էնոտուրիզմ*, *էնոֆիլ*<sup>2</sup>, *էնոտեկա*<sup>3</sup> և այլն:

**Էն(ո)** հունարենից թարգմանաբար նշանակում է *գինի*: Ուստի, խաղողից գինու ստացումը և դրանառնչվող տարբեր գործընթացները ձևավորել են *էնոլոգիա* գիտաճյուղը, որը հայերենում կարող է գործածվել *գինեգիտություն*<sup>4</sup> թարգմանությամբ:

Այսպիսով՝ հունական ծագում ունեցող *ագր(ո)*-, *էկ(ո)*-, *էն(ո)*-բաղադրիչները, թեև ունեն հայերեն համարժեքներ, սակայն

<sup>2</sup> *Էնոֆիլ* անվանում են այն մարդկանց, որոնց մասնագիտակա նգործունեությունը կապված չէ գինու հետ, բայց նրանց կյանքում այն ունի կարևոր նշանակություն: Նրանք գինու մեծ գիտակներ են:

<sup>3</sup> *Էնոտեկան* հատուկ պայմաններով նկուղային վայրերում շշացված գինիների կամ դրանց տեսականու համար նախատեսված պահեստ է՝ գինեղարան:

<sup>4</sup> *Էնոլոգիան* (*գինեգիտություն*) երեք ճյուղից է բաղկացած՝ **1. գինեքիմիա** (ուսումնասիրում է գինու արտադրության բոլոր փուլերում տեղի ունեցող քիմիական գործընթացները), **2. գինեգործություն** (գինու արտադրություն), **3. Խաղողագործություն** կամ **խաղողագիտություն** (ուսումնասիրում է խաղողի տեսակների հատկությունները) [30, 5]:



դրանցով կազմությունները հաճախ զուգահեռաբար գործածվում են հայերեն և օտար ձևերով:

### ***Ազր(n)-, Էկ(n)-, Էն(n)-* բաղադրիչներով տերմինային կազմությունները**

21-րդ դարը բնորոշվում է գիտության տարբեր բնագավառների բուռն զարգացմամբ: Մեծ վերելք է ապրում նաև գյուղատնտեսությունը: Բազմաթիվ են գյուղատնտեսական գիտությունները (ագրոնոմիա, անասնաբուժություն, անասնաբուծություն, գինեգործություն, շոկոլադագործություն, խաղողագործություն, հողագիտություն, երկրագործություն, ծառագիտություն, սննդամթերքի անվտանգություն և այլն), որոնք անքակտելիորեն կապված են միմյանց հետ: Գյուղատնտեսության արդիականացմանն ուղղված բոլոր ջանքերը մեծապես ազդում են նաև այդ ոլորտի բառապաշարի, հատկապես՝ տերմինահամակարգի հարստացման և կատարելագործման վրա: Ստեղծվում են գյուղատնտեսական նոր ենթաճյուղեր ու մասնագիտություններ, ի հայտ են գալիս նոր հասկացություններ, որոնց համար էլ ստեղծվում են նոր բառեր: Գյուղատնտեսական գիտությունների բառապաշարի՝ նոր բառերով համալրման գործում հայոց լեզուն, անշուշտ, կատարում է բառաստեղծական իր բացառիկ առաքելությունը: Նոր տերմինները միաժամանակ ցույց են տալիս գյուղատնտեսության զարգացումներն ու միտումները:

Ինչպես նկատելի է, ուսումնասիրվող բաղադրիչներով կազմված վերոնշյալ օրինակների մի մասը տերմինային արժեք ունի: Բառապաշարի տերմինային շերտը շարունակ փոփոխություններ է կրում. նորերն են ավելանում, հները վերաիմաստավորվում են: Տերմինակերտման գործընթացը լեզվում անընդհատ է: Եթե այսօր

առաջընթաց են ապրում տարբեր ոլորտներ, ավելին՝ ստեղծվում են նորերը, բնականաբար փոփոխություններ են կատարվում այդ ոլորտների բովանդակությունը ներկայացնող բառապաշարում: Է. Աղայանը նշում է. «Տերմինաբանության հարստացման այդ բուն ընթացքին ուղեկցում են նորանոր տերմինահամակարգերի ձևավորումն ու զարգացումը՝ գիտության, տեխնիկայի և արտադրության նոր ճյուղերի առաջացման համապատասխան, և միջհամակարգերի ձևավորումն ու զարգացումը՝ գիտության, տեխնիկայի և արտադրության տարբեր ճյուղերի միջև ավելի սերտ կապերի ստեղծման, փոխադարձ ներթափանցումների ու միջգիտությունների ձևավորման համապատասխան» [3, 423-424]: Գյուղատնտեսական գիտությունների զարգացումը ևս իր կնիքն է դնում տերմինաշինության վրա, այդ թվում՝ *սզր(n)*-, *էկ(n)*-, *էն(n)*- բաղադրիչներով կազմություններում: Հավելենք միայն, որ գիտության զարգացման ընթացքից դատելով՝ ներկայումս դժվար է հստակ սահմանազատել նրա խմբերն ու ենթախմբերը: Այս երևույթը տարածվում է նաև տերմինահամակարգերի վրա: Գիտության տարբեր բնագավառներ, նույնիսկ տարբեր գիտություններ օգտվում են միմյանց տերմինաբանությունից: Մեր օրերում համացանցի շնորհիվ գիտական գիտելիքը հասանելի է բոլորին, ձեռք է բերել համամարդկային արժեք, որի արդյունքում էլ տերմինները ներթափանցել են տարբեր լեզուների բառապաշար, տարբեր տերմինահամակարգեր:

Հավաքված բառանյութը փորձել ենք դասակարգել երկու բաժնում՝

**1. տերմիններ**, որոնք, անկախ գործառական նշանակությունից, միայն որպես տերմին են գործածվում. *սզրոգիտություն*, *սզրոտեխնիկա*, *սզրոքիմիա*, *սզրոֆիզիկա*, *սզրոհողագետ*, *սզրոարդյունաբերական*, *սզրոկլիմայագիտություն*, *սզրոբուսա-*

*համակեցություն, ագրոկենսաբանություն, ագրոհողագիտություն, ագրոմելիորացիա, ագրոլանդշաֆտ, ագրո-քիմիկատ, էկոլոգաքաղաքագիտական, էկոլոգիացում, էկոթունաբանական, էկոնոմայզեր, էնոքիմիա, էնոքիմիկոս* և այլն,

**2. տերմինային բառեր,** որոնք ունեն և՛ սովորական, ընդհանուր, և՛ տերմինային գործածություն. *ագրոշուկա, ագրոշրջան, էկոլոգիա, էկոնոմիկա, էկոհեռախոս, էկոցիո, էկոկրթություն, էկոխիդճ, էկոգիտակից, էկոնոտեցում, էկոպայուսակ* և այլն:

Բառապաշարի, ինչպես նաև տերմինահամակարգի զարգացումը պայմանավորված է և՛ արտալեզվական, և՛ ներլեզվական գործոններով: Արտաքին ճանապարհով զարգացումն ու կատարելագործումը դրսևորվում է գիտության, տեխնիկայի, տնտեսության, մշակույթի, հասարակական կյանքի, բարձրագույն կրթության առաջընթացով, և հիմնական աղբյուրը փոխառություններն ու պատճենումներն (թարգմանություններ) են, իսկ ներքին ճանապարհը՝ լեզվի բառակազմական տարբեր միջոցներով նոր բառերի և տերմինների ստեղծումը: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բավականին մեծ է արտալեզվական գործոնի ազդեցությունը: Օտար բառերի և տերմինների մուտքը մեր լեզվի բառապաշար չընդհատվող գործընթաց է, հայերենն էլ ցուցաբերում է փոխառությունների յուրացման ճկուն մոտեցում: Երբեմն դրանց համար ստեղծվում են հայակազմ համապատասխանները: Այստեղ շատ կարևոր է թարգմանելիության խնդիրը: Հատկապես տերմինները հայերենացնելն այնքան էլ դյուրին չէ: Այս դեպքում առանձնահատուկ ուշադրություն են պահանջում մասնագիտական նրբանկատությունը և ոլորտային առանձնահատկությունները՝ իմաստային անճշտությունից խուսափելու համար:

*Ագրոմինիմում, ագրոմաքսիմում, ագրոֆիզիկա, ագրոքիմիա, ագրորագա, ագրոտեխնիկ, ագրոլանդշաֆտ, էկոտրանսպորտ,*

*էկոտիպ, էկոռեստորան, էկոբրիկետ, էնոլոգ, էնոլոգիա* քառերը փոխառություններ են, թեև չի բացատվում, որ դրանք հայերենացվեն՝ անցնելով պատճենման (փոխառյալ բառի ամբողջական թարգմանություն) կամ կիսապատճենման (փոխառյալ բառի մասնակի թարգմանություն) ճանապարհով: Սակայն *ագրոնոմ-գյուղատնտես, ագրոնոմիա-գյուղատնտեսություն, ագրոբիոլոգիա-ագրոկենսաբանություն, ագրոբիոլոգիական -ագրոկենսաբանական, ագրոկոմպլեքս-ագրոհամալիր, ագրոտուրիզմ-ագրոզբոսաշրջություն, էկոնոմիստ-տնտեսագետ, էկոնոմիա-տնտեսում, էկոնոմիկա-տնտեսություն, էկոտուրիզմ-էկոզբոսաշրջություն* բառազույգերի հայերեն տարբերակները կարելի է հաջողված համարել, որոնք օտարաբանություն-հայերեն համարժեք «պայքարում հաղթել են» և անխոչընդոտ գործածվում են, համապատասխանում են հայերենի բառակազմական և իմաստաբանական նորմերին, համոզիչ են և ընկալելի: Նույն միտումն է նկատվում նաև *էնոլոգ -գինեգետ, էնոլոգիա-գինեգիտություն, էնոքիմիա-գինեքիմիա, էնոտուրիզմ-նոզբոսաշրջություն -գինեզբոսաշրջություն* նորամուտ և նորակերտ բառերում:

Ուշագրավն այն է, որ «Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարանում» օտար տերմինի համար ներկայացվում են փոխառված և պատճենված, փոխառված և կիսապատճենված, պատճենված և կիսապատճենված տարբերակները (*Աղյուսակ 1*):

***Աղյուսակ 1***

***Օտար տերմինի տարբերակային ձևերը***

	<b>փոխառություն</b>	<b>պատճենված</b>	<b>կիսապատճենված</b>
аграрный		հողային, հողագործակ	ագրարային

		ան	
агробиология			ագրոկենսաբանություն
агрогидрология	ագրոհիդրոլոգիա		ագրոջրաբանություն
агрокомплекс	ագրոկոմպլեքս		ագրոհամալիր
агроклиматология			ագրոկլիմայագիտություն
агромелиорация	ագրոմելիորացիա	հողաբարելավում	
агроресемлиорация		անտառհողաբարելավում	
агрометр			ագրոչափիչ (մասշտաբով քանոն)
агрономия	ագրոնոմիա	գյուղատնտեսագիտություն	
агротехника	ագրոտեխնիկա		գյուղատնտեսական տեխնիկա
агрикультура		դաշտավարություն, երկրագործություն	
экономизатор		տնտեսիչ	
экономика	էկոնոմիկա	տնտեսագիտություն	
экономист		տնտեսագետ	
экономичность		խնայողություն	

ЭКОНОМИЧ- НЫЙ		խնայողական	
ЭНОХИМИЯ	Էնոքիմիա		գինեքիմիա

Օրինակները փաստում են, որ հայերենացված կամ կիսահայերենացված որոշ տերմիններ ակտիվ գործածություն ունեն, ինչպես օրինակ՝ *ագրարային, ագրոկենսաբանություն, գինեքիմիա*, իսկ մի մասն էլ գործածվում է համատեքստին համապատասխան առավել հարմար տարբերակով: Օրինակ՝ *ագրարային համալսարան*, բայց՝ *հողային օրենսգիրք, հողային իրավունք. ագրոնոմիական ֆակուլտետ*, բայց՝ *գյուղատնտեսական հաշվառում, գյուղատնտեսական վարկեր. էկոնոմիկայի նախարարություն*, բայց՝ *տնտեսագիտության տեսություն* և այլն:

Ըստ լեզվի բառապաշարի զարգացման օրինաչափության՝ հայերենում անհարկի օտար բառերից մաքրվելու դրական միտում է նկատվում: Բառարանային ժամանակագրական քննությունը փաստում է, որ ավելի վաղ տպագրված բառարաններում օտար բառերը կամ տերմինները տրվում են որպես փոխառություն, որոնց մի մասը հաջորդ հրատարակություններում փոխարինվում է հայակազմ տարբերակներով: Իհարկե, այս գործընթացը դրական է գնահատվում լեզվի մաքրության տեսանկյունից, բայց միշտ չէ, որ հնարավոր է լինում ստեղծել ճիշտ համարժեքը: Ինչպես տեսանք, զուգահեռաբար կարող են գործածվել թե՛ օտար, թե՛ հայերեն տարբերակները: Ժամանակի ընթացքում նրանցից մեկն իր հաստատուն տեղը կարող է զբաղեցնել լեզվում՝ մյուսին դուրս մղելով գործածությունից: Որքան էլ լեզուն փորձի բոլոր բառերի համար հայերեն տարբերակները ստեղծել, միևնույն է, օտար ձևերից շատերը երկար ժամանակ շարունակելու են անխոչընդոտ գործածվել, քանի որ հատկապես մասնագիտական հարթակ-

ներում հայակազմ տարբերակները անկենսունակ են մնալու: Այդպես կարող է ստացվել անհաջող թարգմանության կամ իմաստի ոչ լիարժեք արտահայտման դեպքում:

Ընդունենք՝ ճիշտ չէր լինի, որ, «բժախնդիր մաքրամոլությամբ» տարված, ստեղծվեին բոլոր բառերի, հատկապես տերմինների հայերեն համարժեքները: Այս մոտեցումը լեզուն կտաներ ինքնամեկուսացման:

«Նոր բառեր»-ի Ա-Է պրակների (2015-2022) վերլուծությունը ցույց է տալիս, որ լեզվի զարգացման ներկա փուլում քննվող օտար բաղադրիչները բառեր կազմում են առավելապես հայերենացված բաղադրամասերով. *ագրոլրատու, ագրոշուկա, ագրոպարենային, ագրովերամշակող, ագրովերամշակում, էկոանձնագիր, էկոգյուղ, էկոբանտ, էկոկրթություն, էկոլուր, էկոզբոսաշրջություն, էկոերթուղի, էկոհավկիթ, էկոտակդիր, էկոմթերք, էկոարշավ, էկոզինի, էկոզորգ, էկոթադամաս, էկոմշակույթ, էկոխիդձ, էկոդաստիարակություն, էկոդասասենյակ, էկոգյուղատնտեսություն, էկոլարվածություն* և այլն: Քիչ չեն նաև համացանցային բառագործածությունները, որոնք հայերենում դեռևս բառարանագրված չեն. *ագրոայգի, ագրոզբույց, ագրոբիզնես, ագրոբարիք, ագրոդասարան, ագրոձեռնարկություն, էկոակտիվիստ, էկոբարիք, էկոկաշի, էկոհիդություն, էկոբեղմնավորում, էկոընթրիք, էնոլոզ, էնոլոզիս, էնոզաստրոնոմիա* և այլն: Այս բաղադրիչները հաճախ են հանդիպում նաև տարբեր կազմակերպությունների, բազմատեսակ ծառայություններ մատուցող ընկերությունների, որևէ գործառույթ իրականացնող մարմինների, խանութների, սրահների անվանումներում. *Ագրո – Մաշ[33], Ագրո Ֆասթ[34], Ագրոլայֆ ՄՊԸ[35], Քարդ Ագրո Կրեդիտ[36], Ագրո Մաստեր[37], Ագրո Հոլդինգ[38], Զուլալ Ագրո[39], Էկո Ագրո ՄՊԸ[40], Էկո Ֆուդ[41],*

Էկոֆրուտ[42], Էկոթաուն[43], Էկոֆիշ թրեյդ[44], Էկոռեգորթ[45], Էնո-Էքսպո[46], Էնոսոուլ ՄՊԸ [47] և այլն:

**Ագր(n)-, Էկ(n)-, Էն(n)-** բաղադրիչներով կազմությունների բառակազմական առանձնահատկությունները

**Ագր(n)-, Էկ(n)-, Էն(n)-** բաղադրիչներով բառերը կազմվում են ածանցման և բառաբարդման եղանակով: Երկու դեպքում էլ բառակազմական բաղադրիչ են դառնում թե՛ հայերեն, թե՛ փոխառյալ բաղադրատարրերը: Ուսումնասիրվող բառերի կազմությանը մասնակցում են ինչպես *-ական, -ություն, -ային, -ում, -ակ, -իք, -իկ, -ույթ, -ք, -ան, -իչ, -ոց, -արան, -ավետ, -անք, -բան, -ող* (*ագրոքիմիական, էկոլոգիական, ագրոգիտություն, էկոդատախազություն, ագրոկուրսային, էկոտարածաշրջանային, ագրոձեռնարկում, էկոգաղութացում, ագրոխմբակ, էկոտնակ, ագրոտեխնիկ, էկովառելիք, էկոգրոսաշրջիկ, էկոմշակույթ, ագրոհանք, էկոմթերք, ագրոշրջան, ագրոչափիչ, էկոգրիչ, ագրոդպրոց, էկոարզելոց, ագրոդասարան, էկոարդյունավետ, էկոարտադրանք, ագրոկենսաբան, ագրովերամշակող* և այլն), այնպես էլ *-իա, -ացիա, -իկոս, -իստ, -իզմ* օտարվերջածանցները (*ագրոնոմիա, էկոլոգիա, էնոլոգիա, ագրոմելիորացիա, ագրոֆիզիկոս, էնոքիմիկոս, ագրոտուրիզմ, էկոտուրիզմ, էնոտուրիզմ, ագրոպրոպագանդիստ, էկոնոմիստ* և այլն): Վերջիններս հայերեն համարժեք ածանցներին համապատասխան իմաստներ և գործառույթներ ունեն, ինչպես, օրինակ՝ գործողի կամ զբաղվող անձի (*-ող*-ի արժեքով՝ *-իկոս, -իստ*), բայանունների կամ վերացական անունների (*-իզմ, -իա, -ացիա*)[23, 212]: Սակայն ինչպես նկատում է Գ. Ջահուկյանը, օտար ածանցները հայերենում իսկական բառակազմական արժեք ձեռք չեն բերել. այդպիսի արժեք նրանք կարող էին ձեռք բերել միայն



այն դեպքում, եթե դրվեին հայերեն հիմքերի վրա և ստեղծեին բառակազմական յուրատեսակ ենթահամակարգ[23, 208]:

Իրենց կազմությամբ բազմազան են ուսումնասիրվող բառերը: Նոր բառերի կերտմանը մասնակցում են բառակազմական ձևույթները, որոնք ավելանում են բառի հիմքին՝ «լեզվական ցանկացած մակարդակի բաղադրյալ միավորի այն հատվածը, որը մնում է, երբ նրանից անջատում ենք այդ միավորի կազմության վերջին քայլում ավելացած բաղադրիչը»[6, 107]: Տարբերակվում են բառակազմական հիմքերի մի քանի տեսակներ՝ *պարզ* և *բաղադրյալ*, *փոփոխվող* և *չփոփոխվող*, *սերող* և *բաղադրող*<sup>5</sup>: Այս առումով մեր հետաքրքրության շրջանակներում են *սերող* և *բաղադրող* հիմքերը: *Սերող* հիմքին բառակազմական քայլով ավելանում է այլ հիմք կամ ածանց՝ կազմելով նոր բառ, իսկ *բաղադրողը* ավելացող հիմքն է: Իբրև կանոն՝ բարդ բառերի աջակողմյան բաղադրիչը բաղադրող հիմքն է, իսկ ձախակողմյան հիմքը՝ սերող [2, 247-278]:

Բառակազմական քայլերի թիվը միշտ հավասար է հիմքին հավելված իմաստակիր բաղադրիչների թվին, այսինքն՝ իմաստակիր բաղադրիչների ընդհանուր թվին՝ հանած (-, մինուս) 1 (հիմքը) [6, 113], [27, 283-284]: Դիտարկենք մի քանի օրինակների բառակազմական քայլերը՝ ըստ արդի լեզվաբանության մեջ ընդունված սկզբունքի.

ագրոկանոն, էկոռոքոտ՝ (*ագր/ո*) (*կանոն*), (*էկ/ո*) (*ոլոքոտ*) – մեկ քայլ,

ագրոժամկետ, էկոաղբաման՝ (*էկ/ո*) [(*աղբ*) (*աման*)], (*ագր/ո*) [(*ժամ*) (*կետ*)] –երկու քայլ,

---

<sup>5</sup> Հիմքերը կարող են լինել նաև *հավելատարային*: Այս դեպքում *n* ձայնավորի հավելումով կազմվում են *ագր(n)-, էկ(n)-, էն(n)*-հավելատարային հիմքերը:

ագրոհողագիտություն, էկոդատախազություն (ագր/ո) {[(հող/ա) (գիտ)]ություն}, (էկ/ո) {[(դատ/ա)(խազ)] ութություն} երեք քայլ,

ագրոդասընթացավար (ագր/ո){[(դաս)[(ընթ)աց/ա]}վար) – շորս քայլ,

ագրոդասընթացավարային,

ագրոքադարարնակչություն (ագր/ո){[(դաս)[(ընթ)աց/ա]}վար)ային ],(ագր/ո) ((քադար/ա) {[(ընակ)չ]ություն}) – հինգ քայլ:

Հետաքրքիրն այն է, որ **ագր(ո)-, էկ(ո)-, էն(ո)-** սկզբնաբաղադրիչներով կազմություններում օրինաչափությունը խախտվում է. որպես բաղադրող հիմք՝ դրանք գործածվում են ձախակողմյան հատվածում:

Մի քանի բառերում **էկո(ո)-** բաղադրիչն ունի բառամիջյան գործածություն՝ *ջրակոհամակարգ, մեզոէկոհամակարգ, միկրոէկոնոմիկա, մակրոէկոհամակարգ, տնտեսաէկոլոգիական, լանդշաֆտաէկոլոգիական*: Այստեղ այնաջակողմյան սերող հիմքում է, իսկ **ագր(ո)-** և **էկո(ո)-** բաղադրիչների համադրությամբ կազմված *ագրոէկոլոգիա, ագրոէկոնոմիկա* բառերում **ագր(ո)-**ն ձախակողմյան բաղադրող հիմքում է, **էկո(ո)-**ն՝ աջակողմյան սերող:

Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ **ագր(ո)-, էկ(ո)-, էն(ո)-** սկզբնաբաղադրիչներով կազմություններում սերող և բաղադրող հիմքերը կարող են փոխելիքենց տեղերը:

### Եզրակացություն

Կատարված ուսումնասիրությունից ելնելով՝ հանգում ենք հետևյալին՝

- **ագր(ո)-, էկ(ո)-, էն(ո)-**օտար բաղադրատարրերով կազմությունները մեծապես նպաստում են գյուղատնտեսական գիտությունների բառապաշարի համալրմանը,ցույց տալիս այդ

բառապաշարի զարգացման և կատարելագործման միտումները, որոնք գործածվում են նաև հարակից բնագավառներում՝ ստեղծելով միջգիտակարգային տերմինահամակարգեր,

- թեև նշյալ բաղադրիչներն ունեն հայերեն տարբերակներ, բայց երբեմն զուգահեռաբար գործածվում են դրանցով կազմությունների հայերեն և օտար ձևերը,

- *ազր(n)*- բաղադրիչով բառերը ներկայումս հայերենացվելու փուլում են, *էկ(n)*-ով կազմությունների գործածությունը ակտիվացել է լեզվում, քանի որ հաճախակի է դարձել այս կամ այն առարկան, երևույթը, իրողությունն արտահայտել *էկ(n)*- բաղադրիչի հավելումով, իսկ *էն(n)*-ով կազմություններն ավելի քիչ են՝ պայմանավորված գյուղատնտեսության համեմատաբար երիտասարդ ոլորտ լինելով:

- *ազր(n)*-, *էկ(n)*-, *էն(n)*- բաղադրիչներով բառերը կազմվում են ածանցման (հայերեն և փոխառյալ բաղադրատարրերով) և բառաբարդման եղանակով,

- բառակազմական մեկ կամ մի քանի քայլերով կազմվող *ազր(n)*-, *էկ(n)*-, *էն(n)*-սկզբնաբաղադրիչներով բառերում սերող և բաղադրող հիմքերը կարող են փոխել իրենց տեղերը,

- տերմինային նորակազմությունների մի մասը բառարանային գրանցում չունի և կարող է նպաստել տերմինային նոր (ինչպես նաև՝ միջգիտակարգային տերմինների) բառարանների կազմման աշխատանքներին:

### Գրականություն

1. Աղայան Է. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան» հրատ., 1976, 1616 էջ:

2. Աղայան Է. Բ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1984, 372 էջ:
3. Աղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Երևան, ԵՊՀ հրատ., 1987, 736 էջ:
4. Աճառեան Հ. Հ., համառոտ.՝ Մինասեան Ս. Գ., Հայերեն ստուգաբանական առձեռն բառարան, Ժնև, 2004, 295 էջ:
5. Բարսեղյան Հ. Խ., Հայերեն ուղղագրական-ուղղախոսական տերմինաբանական բառարան, Երևան, «Լույս» հրատ., 1973, 981 էջ:
6. Գալստյան Ս. Ա., Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ, Երևան, ԵՊՀ հրատ., 2007, 196 էջ:
7. Էլոյան Ս. Ա., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Երևան, «Նաիրի» հրատ., 2002, 492 էջ:
8. Թեյյան Լ. Գ., Բառապատճենումներն արդի հայերենի բառապաշարում // «Արդի հայերենի բառապաշարի զարգացման և կանոնարկման հիմնախնդիրներ» հոդվածների ժողովածու, Երևան, 2020, էջ 94-104:
9. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Երևան, ՀՄՍՀ ԳԱ հրատ., հ. 1, 1969, 601 էջ, հ. 2, 1972, 719 էջ:
10. Խլղաթյան Ֆ. Հ., Բառարան-տեղեկատու: Նոր բառեր և իմաստներ, Երևան, «Հայաստան» հրատ., 1982, 168 էջ:
11. Հայրապետյան Ա.Պ., Օտար բառերի առձեռն բառարան, Երևան, «Գրիգոր Տաթևացի» հրատ., 2011, 708 էջ:
12. Հայրապետյան Ֆ. Փ., Գոյապահպանություն, Հայերեն-ռուսերեն-անգլերեն բացատրական բառարան, Երևան, Հեղինակային հրատ., 2007, 246 էջ:
13. Հացագործյան Ջ. Ա., Ասլանյան Ս. Ա., Միջազգային տերմինային տարրերի ռուս-հայերեն բառարան, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1989, 104 էջ:

14. Մալխասեանց Ստ. Ս., Հայերեն բացատրական բառարան, Երևան, ՀՍՍՌ պետ. Հրատ., հ. 1, 1944, 638 էջ, հ. 2, 1944, 517 էջ:
15. Մարտիրոսյան Ա. Ռ., Արդի հայերենի նորաբանությունների բառակազմական կաղապարները, Երևան, «Էդիթ Պրինտ» հրատ., 2007, 234 էջ:
16. Նոր բառեր. Ա պրակ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015, 196 էջ:
17. Նոր բառեր. Բ պրակ, Երևան, «Աստղիկ» հրատ., 2016, 184 էջ:
18. Նոր բառեր. Գ պրակ, Երևան, «Աստղիկ» հրատ., 2017, 243 էջ:
19. Նոր բառեր. Դ պրակ, Երևան, «Աստղիկ» հրատ., 2018, 172 էջ:
20. Նոր բառեր. Ե պրակ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2020, 175 էջ:
21. Նոր բառեր. Զ պրակ, Երևան, ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, 221 էջ:
22. Նոր բառեր. Է պրակ, Երևան, ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, 260 էջ:
23. Ջահուկյան Գ. Բ., Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1989, 319 էջ:
24. Ջահուկյան Գ. Բ., Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, «Աստղիկ» հրատ., 2010, 820 էջ:
25. Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան, Երևան, ՀՍՀ գլխ. իմբ. հրատ., 1988, 672 էջ:
26. Սարգսյան Մ. Ա., Խաչիբաբյան Ն., «Կորոնա» բաղադրիչով նորակազմ բառերի քննություն // Լեզու և լեզվաբանություն, Երևան, 2021, հմ. 1(24), էջ 69-74:

27. Սուքիասյան Ա. Մ., Սուքիասյան Ք. Ա., Ֆելեքյան Մ. Հ., Ժամանակակից հայոց լեզու (հնչյունաբանություն, բառա-գիտություն), Երևան, ԵՊՀ հրատ., 2017, 462 էջ:
28. Տեր-Ղազարեան Ա., Հանրամատչելի բառարան օտարազգի բառերի եւ գործածութեան մէջ մտած մտքերի ու դարձւածքների, Թիֆլիս: «ԷՊՕԽԱ» հրատ. ,1908, 308 էջ:
29. Ֆելեքյան Մ. Հ., Արդի հայերենի բառապաշարի զարգացման հիմնական միտումները // «Արդի հայերենի բառապաշարի զարգացման և կանոնարկման հիմնախնդիրներ» հոդվածների ժողովածու, Երևան, 2020, էջ 120-139:
30. Герасимов М. А.Технология вина. М., Картонажная фабрика,1959,642 с.
31. [https://hy.wikipedia.org/wiki/Էսիլ\\_Պիենս#cite\\_ref-decaobit\\_2-0](https://hy.wikipedia.org/wiki/Էսիլ_Պիենս#cite_ref-decaobit_2-0) (ղիտվել է 07. 02. 2023)
32. <https://motherhouse.ru/hy/apartments-for-sale/veselyi-scenarii-na-novogodnii-korporativ-novogodnii-korporativ/> (ղիտվել է 11. 02. 2023)
33. <https://www.bizratings.online/listing/agro-mash-agricultural-equipment/> (ղիտվել է 12. 03. 2023)
34. <https://www.fastbank.am/ազրո-ֆաստ> (ղիտվել է 12. 03. 2023)
35. <https://www.martuni.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=505#.ZBxmm3ZByUk>(ղիտվել է 12. 03. 2023)
36. <https://banks.am/am/lending/CARD-AgroCredit> (ղիտվել է 12. 03. 2023)
37. <https://www.spyur.am/am/companies/agro-master/37495> (ղիտվել է 15. 03. 2023)
38. <https://www.azdarar.am/announcments/cat/278/00945795/> (ղիտվել է 15. 03. 2023)

39. <https://www.spyur.am/am/companies/zulal-agro/50343>  
(նիստվել է 15. 03. 2023)
40. <http://www.mnp.am/announcement/public-reviews/3828>  
(նիստվել է 15. 03. 2023)
41. <https://areg.biz/firms/?id=16693&lng=am> (նիստվել է 15. 03. 2023)
42. <https://www.spyur.am/am/companies/eco-fruit/34785> (նիստվել է 16. 03. 2023)
43. <https://www.bizratings.online/listing/ecotaown-am-ecotaownam/> (նիստվել է 16. 03. 2023)
44. <https://www.azdarar.am/announcements/org/52/00721664/>  
(նիստվել է 16. 03. 2023)
45. <https://landofnoah.com/hy/hotel/harsnadzor-eco-resort>  
(նիստվել է 23. 03. 2023)
46. <http://www.hayary.org/wph/?m=201311> (նիստվել է 16. 03. 2023)
47. <https://enosoul.am/> (նիստվել է 16. 03. 2023)

**Слова с иноязычными словообразовательными элементами  
*ар(о)-, эк(о)-, эн(о)-* в армянском языке**

**Резюме**

**Ключевые слова:** лексикология, термин, сельскохозяйственные науки, инновации, кальки, полукальки, словообразовательная модель.

Сегодня сельское хозяйство находится на подъеме. Создаются сельскохозяйственные подотрасли и специальности, возникают понятия, для которых создаются новые слова.

Слова с иноязычными словообразовательными элементами *агр(о)-*, *эк(о)-*, *эн(о)-* способствуют пополнению сельскохозяйственной научной лексики, создавая междисциплинарные терминологические системы.

Словообразовательный элемент *агр(о)-* употребляется в армянском языке в качестве компонента сложных слов со значениями *село, земля; эк(о)- дом, родина, существование, эн(о)- вино*.

Лексика армянского языка постоянно пополняется новыми терминами с элементами *агр(о)-, эк(о)-, эн(о)-*. Иногда для них создаются соответствующие армянские эквиваленты, однако освоение этих слов армянским языком – процесс сложный.

*Ագրոսիսիւնու, ագրոսպիսիւնու, էկոսրանսպրոս, էկոբրիկետ, էնլոգ, էնլոգիւ* и другие подобные слова являются заимствованиями. Не исключено, что они будут арменизированы путем полного или частичного калькирования.

*Ագրոսիւս – գյուղատնտեսություն, ագրոկոնսյլէքս – ագրոհամալիր, էկոսիւստ – տնտեսագետ, էկոսիկա – տնտեսություն, էկոտորիզ – էկոգրոսաշրջություն* и другие армянские варианты в парах слов можно считать удачными, они "победили в битве" с иноязычным эквивалентом. Подобная тенденция наблюдается и в словах *էնլոգ – գինեգետ, էնլոգիւ – գինեգիտություն, էնքիսիւ – գինեքիսիւ, էնտորиզ – էնգրоսաշրջություն – գինեգրоսաշրջություն*.

Анализ выпусков 1-7 словаря “Новые слова” позволяет заключить, что на современном этапе развития языка указанные словообразовательные элементы образуют слова-полукальки: *ագր-լրատու, ագրոկա, էկոսանալիս, էկոգյուղ, էկոլուր, էկոգինի* и т. д. Немало примеров использования в интернет-ресурсах подоб-



ных слов, еще не закрепленных в словарях: *ազրոնայգի*, *ազրոբարիք*, *ազրոնաշարան*, *ազրոգրույց*, *էկոկաշի*, *էկոհոլիստություն*, *էկոբնթարիք*, *էնոլոգ*, *էնոլոգիա*, *էնոգաառնոմիա* и др.

Слова с элементами **agr(o)-**, **эк(o)-**, **эн(o)-** образуются путем сложения основы аффиксации с участием как армянских, так и иноязычных компонентов.

В словах с начальными элементами **agr(o)-**, **эк(o)-**, **эн(o)-**, образованных в один или несколько словообразовательных шагов, производящие и производные основы могут меняться местами.

### Word formation with the foreign compounds *agr(o)-*, *ec(o)-*, *en(o)-* in Armenian Summary

**Keywords:** vocabulary, term, agricultural sciences, innovation, loan translation, partly loan translation, lexical form.

Today, agriculture is booming. Agricultural sub-branches and specialties are being created, concepts appear, new words are derived to describe and characterize them.

The formations with foreign compounds **agr(o)-**, **ec(o)-**, **en(o)-** contribute to the addition of the vocabulary of agricultural sciences, which are used in agriculture and related spheres and create interdisciplinary terminological system.

In Armenian the **agr(o)-** compound is used as a *component of a compound word* or in the sense of *village, land*, while **ec(o)-** in the sense of *home, homeland*, and *existence*, and **en(o)-** *wine*.

New words and terms with compounds **agr(o)-**, **ec(o)-**, and **en(o)-** are constantly entering the vocabulary of our language. Sometimes

corresponding Armenian words are created for them, although it is not so easy to make Armenian terms. Due attention must be paid to peculiarities and characteristics of the sphere.

*Ագրոմիմիում, ագրոմաքսիմում, էկոտրանսպորտ, էկոֆրիկետ, էնոլոգ, էնոլոգիա* and etc. are borrowed words. It is not beyond the realm of possibility that they may be armenianized by semantic borrowing or partly loan translation.

*Ագրոնոմիա – գյուղատնտեսություն, ագրոկոմսյլեքս – ագրոհամայիր, էկոնոմիստ – տնտեսագետ, էկոնոմիկա – տնտեսություն, էկոտուրիզմ – էկոգրոսաշրջություն* and other Armenian versions of word pairs can be considered as good, as they have won the battle between a foreign analog and its Armenian equivalent. The same trend is also observed in the following words *էնոլոգ – գինեգետ, էնոլոգիա – գինեգիտություն, էնոքիմիա – գինեքիմիա, էնոտուրիզմ – էնոգրոսաշրջություն – գինեգրոսաշրջություն*.

The analysis of "New Words" dictionary, issues 1-7 shows that at the current stage of the development of the language the abovementioned compounds form words by partly loan translation, e.g. *ագրոլրատու, ագրոշուկա, էկոանձնագիր, էկոգյուղ, էկոլուր, էկոգինի* and etc. There are also examples of using them in Internet, which haven't been included in dictionaries yet. For example, *ագրոայգի, ագրոբարիք, ագրոդասարան, ագրոգրույց, էկոկաշի, էկոհիդրություն, էկոընթրիք, էնոլոգ, էնոլոգիա, էնոգաստրոնոմիա* and etc.

The words with the compounds **agr(o)-**, **ec(o)-**, **en(o)-** are formed through derivation and lexicalization, using both Armenian and borrowed components.

In words with initial elements **agr(o)-**, **ek(o)-**, **en(o)-** formed in one or more word-building steps, generating and derived stems can change places.

**ԲԱՌԱԿԵՐՏՈՒՄՆԵՐԸ ԹԱԴԵՎՈՍ ՏՈՆՈՅԱՆԻ  
ՉԱՓԱԾՈ ԳՈՐԾԵՐՈՒՄ\***

**Արմինե Մկրտումյան, Ռուզան Սահակյան**

Թադևոս Տոնոյանի բանաստեղծական ժողովածուները («Մերմաստղ», «Երկրից հետո», «Երկնքից առաջ», «Սահմանումներ Հայաստանի համար») իրենց բառատաղձով և ինքնատիպ բառակերտումներով, լեզվական երևույթների բազմազանությամբ ամբողջովին բացահայտում են բանաստեղծ-գիտնականի լեզվամտածողական համակարգը: Նա սիրում է իր խոսքը համեմել խորհրդանիշ-պատկերներով, գրաբարաբանություններով:

Թ. Տոնոյանը հիացնում է ընթերցողին բառաստեղծման իր հնարամտություններով, նորակազմությունների դիպուկ և տեղին կիրառություններով, որը բնորոշ է հեղինակի պատկերային մտածողությանը: Նա հմտորեն օգտվել է մեր լեզվի բառակազմական հնարավորություններից:

Տոնոյանի բառակերտումների մի մասը իր տպավորիչ կազմություններով և ասելիքի հարստությամբ համագործածական դառնալու հավանականություն ունի և կարող է հարստացնել ու կատարելագործել հայոց լեզվի բառապաշարը:

**Բանալի բառեր.** բառակերտում, բառատաղձ, լեզվա-մտածողություն, լեզվական ճաշակ, բայակերտում, նորակազմություն, բառակազմական առանձնահատկություններ:

---

\* Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, Հասարակական գիտություններ, Ստեփանակերտ, ԱՐՊՀ հրատ., պրակ 1, 2023, էջ 46-60:

**Армине Мкртумян, Рузан Саакян**  
**СЛОВОТВОРЧЕСТВО В ПОЭТИЧЕСКИХ**  
**ПРОИЗВЕДЕНИЯХ ТАДЕВОСА ТОНОЯНА**

Стихотворные сборники ТадевосаТонояна («Сермастх», «После земли», «До неба», «Определения для Армении»), отличающиеся богатством словесного материала, уникальным словотворчеством, многообразием языковых явлений, в полной мере раскрывают систему языкового мышления поэта и ученого. Его речь богата символами-образами, заимствованиями из габара, интересными словообразовательными решениями.

Т. Тоноян восхищает читателя своими словотворческими возможностями, точным и уместным употреблением неологизмов, свойственными образному мышлению автора.

Многие образцы словотворчества Т. Тонояна благодаря своему уникальному морфемному составу и содержательной емкости могут стать общеупотребительными, войти в литературный язык и обогатить и лексику современного армянского языка.

**Ключевые слова:** словотворчество, языковое мышление, языковой вкус, создание глагольных форм, неологизм, словообразовательные особенности.

**WORDFORMATIONS IN VERSEEXPRESSED WORKSOF**  
**TADEVOSTONOYAN**

**Armine Mkrtumyan, Ruzan Sahakyan**

Tadevos Tonoyan's poetry collections ("Sermastgh", "Yerkricheto" (Beyond the Earth), "Yerknqicaraj" (Before the Sky), "SahmanumnerHayastani Hamar" (Definitions for Armenia) fully reveal the system of the poet-scientist's linguistic thinking with their main word material, original word formation and variety of linguistic phenomena. He

likes to spice up his speech with symbols and images, old Armenian language forms and interesting word-formation denouement.

T. Tonoyan fascinates the reader with his creative inventiveness in word formation, precise and appropriate use of new formations, which is characteristic of the author's figurative thinking. He skillfully used the word formation possibilities of our language.

Some of Tonoyan's word formations, with their impressive formations and richness of meaning, have the possibility of becoming universally applicable and can enrich and improve the vocabulary of the Armenian language.

T. Tonoyan fascinates the reader with his ingenuity in word formation, precise and appropriate use of new formations, which is characteristic of the author's figurative thinking. He skillfully used the word formation possibilities of our language.

Some of Tonoyan's word formations, with their impressive formations and richness of meaning, have the possibility of becoming universally applicable and can enrich and improve the vocabulary of the Armenian language.

**Keywords:** word formation, main word material, linguistic thinking, linguistic choice, verb formation, new formation, word formation features.

Գրողների բառաստեղծական ունակություններն ու հմտությունները մեծապես նպաստում են բառային կազմի ավելացմանը: Հայերենի բառակազմական հնարավորությունները թույլ են տալիս բանաստեղծին կազմել նոր բառեր, որի միջոցով էլ դրսևորվում է գրողի ինքնատիպությունը: «Նորաբանությունը պետք է միշտ ընդունվի որպես տվյալ գրողի ինչ-որ հայտնագործություն»<sup>1</sup>: Սակայն այդ բառերը պետք է արդարացված լինեն: «... Նորակազմ բառերը պետք է համապատասխանեն մեր լեզվի բառակազմական

---

<sup>1</sup>Տե՛ս **Б.В. Томашевский**, *Стилистика и стихосложение*. Л., 1959, с.181.

նորմաներին, ունենան իմաստային որոշակիություն և մատչելի լինեն ընթերցողի ըմբռնողությանը: Հակառակ դեպքում դրանք կդիտվեն որպես արհեստական նորակազմություններ, կլինեն անհամոզիչ և ոճական արժեք չեն ունենա»<sup>2</sup>:

Հեղինակային նորակազմությունների քննությունը մշտապես արդիական է լեզվաբանության համար, քանի որ դրանով բացահայտվում են ոչ միայն գրողի լեզվական նախասիրությունները, այլև լեզվի տվյալ գոյավիճակում բառակազմական իրողությունների ակտիվությունը: Նորակազմ բառերը բանաստեղծին թույլ են տալիս խուսափել միօրինակությունից և կրկնությունից: Բայց դա չի նշանակում, որ հեղինակային բոլոր բառերը պետք է ստանան համընդհանուր գործածություն:

Թադևոս Տոնոյանի բանաստեղծական ժողովածուներն<sup>3</sup> իրենց բառատաղձով, ինքնատիպ բառակերտումներով, լեզվական երևույթների բազմազանությամբ ամբողջովին բացահայտում են բանաստեղծ-գիտնականի լեզվամտածողական համակարգը, և ինչպես իրավամբ նշում է հեղինակն իր հոդվածներից մեկում. «Խոսքը դառնում է խոսքի նպատակ ... գրական ստեղծագործության մեջ հենց խոսքն է դառնում գործող «անձ», երբ խոսքը կերպարայնացվում է, մի տեսակ անձնավորվում-հերոսացվում, ի վերջո՝ նաև խոհրդանշայնացվում»<sup>4</sup>:

Տոնոյանի լեզվամտածողությունն ու լեզվական ճաշակը դրսևորվում են բազմաթիվ նորակազմություններում: Իր մտածում-

---

<sup>2</sup>Ս. Մարություն, Հայոց լեզվի ոճաբանություն, Ե., 2000, էջ 223:

<sup>3</sup>Թ. Տոնոյան, Մերմաստղ, Ե., Նաիրի, 1994, Մումի կաթիլներ, Ե., 1997, Երկրից հետո, Ե., «Զանգակ-97», 2002, Երկնքից առաջ, Ե., «Աղբյուր»2010, Սահմանումներ Հայաստանի համար, Ե., «Աղբյուր», 2015 (այսուհետև՝ փակագծերում կնշենք հիշյալ ժողովածուների էջերը):

ներն արտահայտելու և ընթերցողին փոխանցելու նպատակով գրողը կերտում է նոր բառեր: Ըստ նրա՝ «...գրական ստեղծագործության մեջ արծարծվող մտքերը (բովանդակային կողմ) միշտ էլ որոնում են համապատասխան և հարմար լեզվական հենք (ձևային կողմ)»<sup>5</sup>, որը գրողի համար դառնում է ինքնարտահայտման յուրահատուկ ձև:

Սույն հոդվածում անդրադարձել ենք Թ. Տոնոյանի բանաստեղծական հինգ ժողովածուներում տեղ գտած նորակազմություններին և իմաստային բառակերտումներին: Մենք պայմանակալորեն գործածում ենք «բառակերտումներ» եզրույթը, քանի որ այդ բառերի ստույգ որոշման շրջանակը սահմանափակվում է միայն հրապարակում եղած բառարանային տվյալներով<sup>6</sup>: Մյուս կողմից էլ երբեմն դժվար կարող է լինել ճշգրտությամբ որոշել նորակազմ բառի հեղինակային պատկանելությունը: Այս առումով համակարծիք ենք Ս. Էլոյանի դիտարկմանը. «Հեղինակային նորակազմությունների ստույգ որոշման խնդիրը հղի է թյուրիմացություններով

---

<sup>4</sup>**Թ. Տոնոյան**, Հայերենի համատեքստի ձայն-կյանք, լռություն-մահ լեզվամտածողական հոմանիշությունները, «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն», 2016 № 1 (19), էջ 55-67:

<sup>5</sup>**Թ. Տոնոյան**, Լեզվի և մտածողության փոխհարաբերությունը տեքստում, «Բանբեր Երևանի համալսարանի», 2016 № 3 (21), էջ 60-69:

<sup>6</sup>**Սո. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան, հհ. 1-4, Ե., 1944-1945, **Էդ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան (ԱՀԲԲ), Ե., 1976, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (ԺՀԲԲ), Ե., 1969- 1980, **Ֆ. Խլդաթյան**, Բառարան-տեղեկատու (նոր բառեր և իմաստներ), Ե., 1982, Ռ. **Սաքապետոյան**, Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան (ԱԱՆԲ), Ե., 2011, **Ս. Էլոյան**, Արդի հայերենի նորաբանությունների բառարան (ԱՀՆԲ), Ե., 2002, Նոր բառեր (ՆԲ), ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, Ա-Ձ պրակ, Ե., 2015, 2016, 2017, 2018, 2020, 2021, **Գնէլ արքեպիսկոպոս Ճերէճեան**, **Փարամազ Կ. Տօնիկեան և Արտաշէս Տէր Խաչատուրեան**, Հայոց լեզուի նոր բառարան, Պէրյուժ, 1992, **Փ. Մեթիխանյան**, Նոր բառերի բացատրական բառարան, Ե., 1996:

ու սխալներով, քանի դեռ չունենք բոլոր գրողների ու բանաստեղծների բառարանները»<sup>7</sup>:

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել հեղինակի բանաստեղծական խոսքում տեղ գտած նորակազմ բառերը, որոնք գրողի տվյալ պահի ապրումների, հույզերի ու զգացումների վերարտադրությունն են: Տոնոյան բանաստեղծը, լավ տիրապետելով հայերեն բառին, դրանք իմաստապես արժևորում է՝ կերտելով նոր բառեր: Բանը՝ խոսքը, նրա համար մեծ ուժ ունի, որի միջոցով նա կառուցում է իր բանաստեղծական պատկերները՝ բառ-խորհրդանիշ, բառ-կերպար, բառ-պատկեր, բառ-գաղափար, բառ-մտածողություն. ներխուժելով բովանդակություն՝ բառերը «կերպարայնանում», «խորհրդանշայնանում» են, մասնակցում սյուժեի ձևավորմանը<sup>8</sup>:

Հոդվածի նյութը առնչվում է նաև Տոնոյանի աշխարհընկալման, գեղագիտական ճաշակի և ըմբռնումների հետ: Յուրաքանչյուր նոր բառի ստեղծում ենթադրում է ոչ թե սուկ բառի բաղադրիչների կցում, այլ վերլուծական և համադրական կարողություն, հուզական և զգացական բառակերտման նուրբ արվեստ, որը կապվում է հաղորդվող նյութի և հեղինակի ասելիքի նպատակադրումի հետ:

Մեր հաշվումներով՝ Թ. Տոնոյանի հիշյալ բանաստեղծական ժողովածուներում կան ավելի քան հարյուր նորակազմ բառեր, որոնք որևէ բառարանում վկայված չեն:

### **Բառաքննական դիտարկումներ:**

---

<sup>7</sup>Մ. Էլոյան, Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Ե., 1989, էջ 224:

<sup>8</sup> Թ.Տոնոյան, Հայերենի տեքստը և լեզվամտածողական արժեհամակարգը, Ստեփանակերտ, 2016, էջ 308:



Բանաստեղծի հոգին մշտական փնտրումների մեջ է: Այն իր արտահայտությունն ունի նաև բանաստեղծություններում՝ ստեղծելով խորհրդանիշ-պատկերներ:

Հոգևորի ընկալման ինքնատիպ դրսևորումներ են *հոգի, մարմին, աստղ, լույս* սկզբնաբաղադրիչներով բառակերտումները: Այսպես՝ *հոգեաշուն* (ԵՀ, 3), *հոգեմարմին* (ԵՀ, 10), *հոգեհաշմ* (ԵՀ, 74), *հոգեճաք* (ՍՀՀ, 55, ԵՀ, 19), *հոգեդարձում* (ՍՀՀ, 59, ԵԱ, 27), *հոգեհերձուն* (ՍՀՀ, 73), *հոգեդաշնություն* (Ս, 3), *հոգեգարուն* (Ս, 7), *հոգեմղվել* (Ս, 17), *հոգեերազ* (ԵԱ, 35), *հոգեբեռ* (ԵԱ, 39), *հոգեսափոր* (ԵԱ, 39), *մարմնամերձ* (ԵՀ, 9), *մարմնահաց* (ԵՀ, 11), *մարմնամաշկող* (ՍՀՀ, 18) *աստղակար* (ԵԱ, 10), *աստղանավակ* (ԵԱ, 14), *լուսընթացունակ* (ԵԱ, 19), *լուսատարիք* (ԵԱ, 67), *լուսահեղում* (Ս, 17):

Երբեմն էլ հայերենի հարուստ բառազանձը չի բավականացնում հեղինակին իր աշխարհընկալումն ու գաղափարներն արտահայտելու համար, և նա ստեղծում է իրենը: Այսպես՝ *շրջածիր, լուսածիր, աստղածիր* բառերի նմանությամբ բանաստեղծը կերտում է նոր բառ՝ *շղթածիր*՝ հավանաբար նկատի ունենալով «շղթաների շրջագիծը»:

**.... Ու իմ հոգում ուժ կա քանի, // Պիտի այսպես Գնամ ու Գամ՝ // Որպես արյան, հուշի պատգամ՝ // Աստղածիրում, // Շղթածիրում, // Շրջածիրում // Սեփականի: (ՍՀՀ, 82)**

Ըստ Տոնոյանի՝ «գրել նշանակում է լինել Աստծու հետ», ուստի իր որոշ բանաստեղծություններում («Համաստեղման կարգ», «Տիրոջ լույսն անհող», «Զատիկ. հրաժեշտ մարմնին», «Հրաժեշտ երկրին» և այլն) գրողը, հավատարիմ այս ըմբռնումին, շոշափում է կյանքի ու մահվան, հոգևորի ու աշխարհիկի, մարդկային մեղքի և մեղսագործության հավերժ թեմաներ:

**Այս կյանքից առաջ ու նաև հետո // Այս աշխարհն ենք մենք թաքուն երազում, // Տերն ուղարկում է մեզ այստեղ հերթով, // Որ մեղքերին էլ մենք լինենք հասու: («Տիրոջ լույսն անհող»)**

Կյանքի և մահվան գաղափարները ամբողջովին հետապնդում են բանաստեղծին: Եվ ինչպես դիպուկ նկատում է Հ. Հովնաթանյանը. «Կյանքն ու մահը կողք կողքի են ու հարազատ: Հոգին ու մարմինն իրարամերժ են, բայցև՝ հարազատ»<sup>9</sup>: Դրանից էլ ծնունդ են առնում դիպվածային նորակազմությունները՝ *արարչադող* (ՍՀՀ, 17), *երկրակարոտ* (ԵԱ, 68), *հրեշտակաերթ* (ԵԱ, 23), *վերառաք* (ԵԱ, 16), *հոգեհեղձում* (ԵԱ, 27), *Հավերժատեղ*<sup>10</sup> (ԵԱ, 8), *մարմնամերձ* (ԵԱ, 9), *բառհոգեդարձող* (ԵՀ, 35) և այլն:

Բանաստեղծի խոսքը պատկերային է: Այդ պատկերները նա փորձում է արտահայտել ամենատարբեր ձևերով: Դրա արտահայտությունը կարելի է համարելառաջին հայացքից սովորական թվացող գոյականների մեծատառերով գրությունը՝ *Կամք* (ԵՀ, 41), *Արևակարգ* (ԵԱ, 67), *Անցյալ*, *Գալիք* (ՍՀՀ, 21), *Լեզու* (ՍՀՀ, 52), *Գիր*, *Երկիր*, *Երկինք* (ՍՀՀ, 13) և այլն:

Թ. Տոնոյանը հիացնում է ընթերցողին բառաստեղծման իր հնարամտություններով, նորակազմությունների դիպուկ և տեղին կիրառություններով, որը բնորոշ է հեղինակի պատկերային մտածողությանը: Լեզվագագացողության ինքնատիպ վարպետն ըստ անհրաժեշտության իր խոսքը համեմուծում է նաև գրաբարա-բանություններով՝ «*Եղիցի մուշ երկինք՝ ոչ չարահույժ հանուր. . .*» (ԵՀ, 28), *զգենանք* (ԵԱ, 19), *հոգվո* (ԵԱ, 17), *զգայք* (ՍՀՀ, 109), *պալատականք* (ԵՀ, 20), գրաբարյան հայտնի *փոքր ածու* բառակա-

<sup>9</sup>Հ. Հովնաթանյան, *Երգեր, որ բացում են երկինքը*. Թ. Տոնոյանի «Երիրից հետո» ժողովածուն, Ազգ, 2003, թ. 63, ապրիլ, էջ 6:

<sup>10</sup>Հեղինակը գրում է մեծատառով:

պակցությունը կազմում է կցական՝ *փոքրածու* ձևը (ՍՀՀ, 113)՝ նկատի ունենալով «*փոքրաթիվ ազգ*» իմաստը<sup>11</sup>:

***Մարմնի և հոգու միջև միջնորդ է//Խոսքը, որ եղավ երկնքից ընծա... (ԵԱ, 59)***

Բանը (խոսքը) ամենից ու ամեն ինչից վեր դասող, «խոսքի բանաձևը» սահմանող հեղինակը, խոսքը որպես «Ճանապարհ, Կամուրջ ու Թոփչքուղի» հյուսող (ԵԱ ժողովածուի «Խոսքի բանաձև» շարք)բանաստեղծը իր «Երկրից հետո» ժողովածուի «Լեզվադանդական» շարքում թերևս գեղարվեստական խոսքի արժանիքներն ընդգծելու նպատակով ներկայացնում է ժամանակակից խոսակցական-ժարգոնախառն ոճով գրված մի քանի բանաստեղծություն: Անգամ վերնագրերն են արտահայտում հեղինակի ոչ սովորական նպատակադրումը՝ «Մանթո», «Ախպերական խորհուրդ», «Ժարգոն» և այլն:

***Ի՞նչ ա պատահել, չենք կարա՞ գոնե // Մեր թուղթ ու գրի հետ ըլնենք արդար, // Էն ձև գրենք, որ թաղի տղեքն էլ // Բանաստեղծություն սիրեն ու կարդան: (ԵՀ, 85)***

Արդի բանաստեղծության անհաջողությամբ մտահոգ հեղինակը մեկ այլ ստեղծագործության մեջ քննադատի իր խոսքն է ուղղում հայ պոեզիայի ներկայացուցիչներին.

***Էս պոեզիան, որ բստրում են հիմի//Ու ընենց անում, որ գրքից զզվես, //Իմ կոկորդին ա մնացել էլի, // Ոչ մուսա ունեմ ու ոչ էլ հավես: // ...Ոչ մեկին պետք չի, որ իր գրածը // Երենից բացի ոչ որ չի կարդում, // Փոխանակ սրա մասին մտածեն, //Երենց հանճար են երևակայում: (ԵՀ, 83)***

**Բառակազմական դիտարկումներ:**

---

<sup>11</sup>Տե՛ս Գ. Աւետիքեան, Խ. Միրամիլեան, Մ. Աւգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836-37, հ.1, էջ 21:

Գրողի բառակերտական և լեզվամտածողական ունակությունները երևում են նաև բառաբարդման կաղա-պարներում: Այսպես՝ հարադրավոր կազմություն ունեցող բարդություններում, որոնք գրված են գծիկով՝ *համբույր-հանդիպատեղի* (Ս, 24), *Նոյ-փրկված* (ԵԱ, 51), *կոյս-տոմս* (ԵՆ, 20), *չվերթ-կյանք* (ՍՀՀ, 26), *երգ-լեզու* (ՍՀՀ, 27), *ճաք-ճակատագիր* (ՍՀՀ, 54) և այլն: Այդ կառույցներում հեղինակը ցուցաբերել է հետաքրքիր և յուրօրինակ մոտեցում՝ ընդգծելով բաղադրիչների պատճառահետևանքային կապը:

Միանշանակ կարող ենք ասել, որ Թ. Տոնոյանն իր ներդրումն ունի նոր բառերի կերտման գործում: Այդ կազմություններում հեղինակը ցուցաբերել է պատճառաբանված մոտեցում<sup>12</sup>: Բաղադրյալ կառույցների բաղադրիչների իմաստային հանրագումարը լիովին բացատրում է դրանց նշանակությունները, նոր իմաստները ձևավորվում են ոչ թե բաղադրիչների առանձին, այլ բաղադրության ընդհանուր իմաստից:

*.... Ու մինչ օղային բացուղի ելած // Երազանքներով երկրի ու տանու, // Տանում ենք դեպի աշխարհ ու երկինք // Արդար պատմության մեր Խոսքը հորդուն ....* (ՍՀՀ, 26)

Օրինակում *բացուղի* բառը *բաց* ածականի կամ մակբայի և *ուղի* գոյականի կապակցությամբ ձևեր է բերել գոյականական կիրառություն՝ գործածվելով *օղային ուղի* կամ *օղուղի* նշանակությամբ: Ըստ երևույթին հեղինակը հիմք է ընդունել *բաց* բառի բազմաթիվ հատկանիշներից ամենաբնորոշը՝ *բաց, ազատ, արձակ տարածություն*, և կարողացել ավելի պատկերավոր ներկայացնել իր մտքերը:

Հաջորդ օրինակում *վայ* ձայնարկության և *գույժ* գոյականի կապակցությամբ կազմել է *վայագույժ* գոյականը՝ *վատ լուր, բոթ*

---

<sup>12</sup> Ա.Սուքիասյան, Զ. Սուքիասյան, Մ. Ֆելեքյան, Ժամանակակից հայոց լեզու (հնչյունաբանություն, բառագիտություն), Ե., 2017, էջ 270-275:

նշանակությամբ, և արտահայտել իր ուրույն լեզվամտածողությունը.

***Ահա կանգնած ես դեռ սրտաբաց, ու նորից // Արևելքն ու պատավ արևմուտքը նեղլիկ // Քեզ քաշում են՝ պոկենք քո Գալիքի խոհից, // Վայազույժով ուժատ՝ մեռի՝ր, մեռի՝ր.(ՍՀՀ, 21)***

Նմանատիպ կազմությունները Տոնոյանի չափածոյում հաճախ են հանդիպում: Դրանց միջոցով նա կարողանում է արտահայտել իրեն համակած հույզերը, ապրումները, աշխարհընկալումը և վերաբերմունքը իրեն շրջապատող իրականության նկատմամբ: Ներկայացնենք ևս մի քանի օրինակ. *Ճամփակեն* (ՍՀՀ,10), *կավամարդ* (ՍՀՀ,73), *հուշահույզ* (ՍՀՀ,139), *հոգեդաշնություն* (Ս,3), *հոգեգարուն* (Ս,7), *ուրախահույզ* (Ս,16), *թիթեղածաղիկ*(ԵՀ,3), *մարմնահաց* (ԵՀ,11), *գրչակենցաղ* (ԵՀ, 74), *աստղակար* (ԵՍ,10), *կարոտաձեռք* (ԵՍ,15), *հրեշտակատերթ* (ԵՀ,23), *լուսատարիք* (ԵՀ, 67) և այլն:

Բանաստեղծը հմտորեն օգտվել է մեր լեզվի բառակազմական հնարավորություններից, ստեղծել հիմնականում բարդ, ածանցավոր և բարդածանցավոր շատ բառեր: Պարզ բառեր առկա չեն: Գրեթե հավասարապես են հանդիպում և՛ *անհնչյունափոխ* (*ցեղարյուն, ախտաժառանգական, անաշուն, չարքուհի, հուշացավ, կարոտաձեռք, արձանավկա, աստղակար*), և՛ *հնչյունափոխված* (*երկրակարոտ* (երկր-երկիր, իի), *ծիստոկայծում* (ծիս-ծես, ե>ի), *արարչադող* (չ-իչ, իի), *արծվանալ* (արծվ-արծիվ, իի), *բուրարձակել* (բուր-բույր, ույ >ու), *պատժաբաժին* (պատժ-պատիժ, իի), *լուսատարիք* (լուս-լույս, ույ>ու), *շքաշուք* (շք-շուք, ու>ը)) բաղադրիչներով գործածությունները:

Տոնոյանի բառակերտումները հիմնականում համընկնում են լեզվի կենսունակ կաղապարների հետ: Նա կարողացել է ստեղծել և՛ միաբաղադրիչ, և՛ բազմաբաղադրիչ նոր բառեր: Հաճախադեպ

են երկբաղադրիչ կազմությունները (*նոսրագիծ, երկրակապար, հոգեճաք, արևակարգ, հավերժատեղ*): Հանդիպում են նաև միաբաղադրիչ (*անաշուն, մահեղ*) և եռաբաղադրիչ (*լուսընթացունակ, վերջնականգառ, հողերկրպագու*) բառեր:

Ըստ բառակազմական օրենքների՝ լեզուն թույլ է տալիս բարդություններ կազմել և՛ հոդակապով, և՛ առանց դրա: Հոդակապը գործառական ձևույթ է, քանի որ գուրկ է իմաստից և իմաստալիճն տարբերակում առաջ չի բերում՝ բացառությամբ առանձին դեպքերի<sup>13</sup>:

Տոնոյանի պոեզիան ևս զերծ չէ նման կազմություններից: Իր հույզերն ու զգացմունքները նա կարողացել է արտահայտել նաև բառակազմական այդպիսի լուծումներով՝ խոսքը դարձնելով ավելի արտահայտիչ ու տպավորիչ: Քննության ենք ենթարկել բազմաթիվ բառերից հատկապես երեքը, քանի որ դրանց զուգահեռ ձևերը արդեն կան լեզվում:

**Աշխարհկործան** և **օրհաց** անհոդակապ բարդություններն իմաստալիճն որևէ տարբերություն չունեն բառարաններում վկայված **աշխարհակործան** (աշխարհը կործանող, աշխարհավեր, կործանարար) և **օրահաց** (ապրուստ, օրվա հաց) հոդակապով ձևերից: Սրանք տարբեր բառեր չեն, պարզապես գրողը, տաղաչափական առանձնահատկություններից ելնելով, ստեղծել է բառալիճն տարբերակներ:

*Լռությունն իմ կպսակե՞ք, // Թե՞ հեռավոր ոլորտներից // Աշխարհկործան աղմուկներն եք // Բերելու վար ....* (Մ,10)

*.... Ու այս սով ու պասի մեջ որ մի այլ մեղք բացատենք, // Սեռ հանձնել ենք արդեն մեզ օրհացի բնագոյին:* (ԵՀ, 26)

Նույնը չենք կարող ասել **վերնառլորտ** բառի մասին: Բառարաններում վկայված անհոդակապ ձևը աշխարհագրական տեր-

մին է, որը մթնալուրտի վերին շերտն է: Տոնոյանի բանաստեղծության մեջ հողակապով տարբերակը գործածվում է փոխաբերաբար և առաջ բերում նոր իմաստ:

*Բայց նախանձն էլ է դառնում երբեմն ավիշ ստեղծուն, // Եղծում իրեն ու հաճախ վերնատլորտ աշխարհներ ... (ԵՀ, 73)*

Բանաստեղծը նկատի ունի վերին՝ բարձր արժեքներ ունեցող աշխարհները, որոնք կարող են պղծվել նախանձի ու չարության պատճառով:

Գրողը բառաբարդման և ածանցման միջոցով, որոնք բառակազմական ամենակենսունակ ձևերն են, ստեղծել է իր ներաշխարհն արտահայտելու առանձնահատուկ կազմություններ: Բառաբարդմամբ կազմված նոր բառերում նա գործածել է առավելապես գոյականի և ածականի արժեքով կազմություններ, որոնք արտահայտված են զանազան մասնակադասարներով.

Գոյականական կազմություններ		Ածականական կազմություններ	
գոյական+գոյական	<i>հուշացավ</i>	ածական+գոյական	<i>ուրախահ ույզ</i>
գոյական+ածական	<i>ճամփակեռ</i>	գոյական+գոյական	<i>երկրակա ընտ</i>
ածական+գոյական	<i>զադտնագեն</i>		
դերանուն+գոյական	<i>ինքնապիղա տոս</i>		
ձայնարկություն+գոյական	<i>վայագույժ</i>		

Կան նաև բայակերտումներ՝ **բուրարձակել** (գոյական+ածական+բայածանց (ել)), **արնաքամվել** (գոյական+բայարմատ+վ կրա-

<sup>13</sup>Տե՛ս **Էդ. Աղայան**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, էջ 262:

վորական ածանց+բայածանց (ել)), **հոգեմղվել** (գոյական+բա-յար-մատ+ւ/ կրավորական ածանց+բայածանց (ել)), **արծվանալ** (գոյական+ան սոսկածանց + բայածանց (ալ)):

Յուրօրինակ կազմություններ են տոնոյանական խոսքիմասային անցումները: Նա հմտորեն կարողանում է **ածականից** կերտել **գոյական** (հոգեմարմնական<sup>14</sup> - հոգեմարմին (ԵՇ,10)), **բայից** կամ **գոյականից**՝ **ածական** (վերառաբել, վերառաքում<sup>15</sup> - վերառաք (ԵՄ,16)), **գոյականից**՝ **բայ** (արծիվ - արծվանալ), **բայից**՝ **գոյական** (վկայացուցանել<sup>16</sup>- վկայացույց (Ս,16)):

**Ում** վերջածանցի հաճախակի գործածությամբ բանաստեղծը մեծ վարպետությամբ կազմել է բայանուն գոյականներ՝ ստեղծելով պատկերավոր վերաիմաստավորումներ՝ **համերգում** (Ս,13), **կենսագոծում** (Ս,14), **լուսահեղում** (Ս,17), **ծիսառկայծում** (Ս,27), **աշխարհարարում** (ԵՇ,40), **բայում** (ԵՄ,60), **հուսավառում** (ՍՀՀ,76), **ներուծում** (ՍՀՀ,139):

**Հոգիների չուն այդպես ճախրում է դեպի Աստրծո // Երկինք, սակայն միշտ մնում է պտույտում երկրային գարնան, // Քանզի ամեն պահ հրամցնում է օձը մեզ խնձոր, // Ու դեռես չի ավարտվում գործը աշխարհարարման:**

**Չույզ աշխարհների անջրպետումը // Ասել – լսելու բայումն է թաքուն ....**

**.... Ինչ-որ մի հեռու~, հեռու~ մի տեղից // Մի գույզ հարազա~տ աչքեր // Ակնթարթ նայում են, // Կենսագոծումով նայում դեպի ինձ // Ու կարոտում են ...**

<sup>14</sup> Ս. Էլոյան, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Ե., 2002, էջ 305:

<sup>15</sup> Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, Ե., 1944, էջ 326, Էդ. Ա-դայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976, էջ 1379, Հ. Բարսեղյան, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան, Ե., 1973, էջ 870:

<sup>16</sup> Ստ. Մալխասեանց, նշվ. աշխ., էջ 347:



*Տու յց տուր հայացքդ՝ փայլով սուր-բահի, // Ե՛տ առ նրանցից  
ոսկե թագ ու խույր // Եվ հուսավառման մի խրոխտ պահի, //  
Որքան էլ լինի արևդ տխուր, // Ա՛ն արշալույսի թուրը ճակատիդ ....*

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ըստ խոսքի մասերի՝ հեղինակը նախապատվությունը տալիս է առավելապես գոյական բառակերտումներին (61), ավելի քիչ՝ ածականներին (33), ապա՝ բայերին (11) և ընդամենը մեկ թվական՝ *եռավեց* (ԵՀ, 11):

Ուշադրության են արժանի նաև ածանցմամբ ստեղծված բառակերտումները: Նոր բառեր ստեղծելիս Տոնոյանը մեծապես օգտվել է հայերենի և՛ կենսունակ, և՛ ոչ կենսունակ ածանցների մեծ պաշարից, որոնք բանաստեղծական խոսքը ինքնատիպորեն ներկայացնելու ուշագրավ միջոցներ են<sup>17</sup>: Բառակազմական ակտիվություն են ցուցաբերում հատկապես *-ուլթյուն* (*հոգեդաշնություն*), *-ոդ* (*բառհոգեդարձող*), *-ական* (*ախտաժառանգական*), *-ք* (*շրջացոլք*), *-իկ* (*բանաստեղծիկ*), *-իչ* (*արարչադող*), *-ակ* (*աստղանավակ*), *-անք* (*թուլամորթանք*) վերջածանցները և *ան-* (*անաշուն*), *ներ-* (*ներուժում*) նախածանցները: Հանդիպում են նաև *-եք* (*անուրեքություն*), *-յա* (*անդրյա*), *-եղ* (*մահեղ*), *-ուն* (*հոգեհերձում*), *-այթ* (*ուրձառագայթ*), *-ին* (*վերնատլորտ*), *-ու* (*հողերկրպագու*), *-ոց* (*ողնաշարոց*), *-ույց* (*երգաթաքույց*), *-ուհի* (*չարքուհի*) վերջածանցներով և *գեր-* (*գերերագանք*), *վեր-* (*վերառաք*), *համ-* (*համերգում*) նախածանցներով կազմություններ<sup>18</sup>:

Տոնոյանի պոեզիայում հանդիպում ենք բառակազմական նորմայից ձևային մի քանի շեղումների: *Ուրձառագայթ* և *տխուր-սրտիկ* բառերը գործածվել են որպես համադրական կցական բար-

<sup>17</sup>Քանակական առումով մենածանց բառերը գերազանցում են բազմածանցներին:

<sup>18</sup> Որոշ վերջածանցներ բառակազմությանը մասնակցում են բաղադրության ներսում՝ ավելանալով նախորդող արմատի վերջից:

դուրյուններ, թեև կարող էին որպես սովորական բառակապակցություններ հանդես գալ:

*Կատարելիս գերի մնաց անկատարին // Անտարակույս աշանան ծոցում սառնասուկոր, // Ութճառագայթ աստղով հասած հայկյան դարին` // Ես հասկացա, որ նա ՚իս պիտի լինի Խոսքով: (ԵՍ, 57)*

*.... Ու գնում ենք // Ճամփան մեր թանկ, // Սմեն մեկս` մի որբ բորհիկ, // Քայլքը` զարկով տխուրսրտիկ, // Բախտի ճամփի փուշը` ոտին, // Ուխտի ճամփա-բախտի ճամփան` // Չբոլորած երբեք վախճան` // Դեպի Վերի`ն, // Վերի`ն Ասոյան:(ՍՀՀ, 107)*

Բանաստեղծություններից մեկում հեղինակը *երջանիկ* ածականի և *ը* վերջածանցի հավելմամբ կազմել է *երջո* ձևը:

*Երեսներքն իմ անցավ, ուստի` երբեք օրն իմ մի, // Որ գալու է, չեմ փոխի սրանց նյութած անվերջով, // Նախածանցյալ են սրանք` ԴՄ, Տ, և ԱՊ-օրինի, // Դատարկածուծք այս երկրում կուշտ քիկացող ու երջո: (ԵՀ, 11)*

Նորակազմ *երջո* բառն ունի խոսակցական երանգ և իմաստի սաստկացման նպատակով բանաստեղծը օգտվել է լեզվի ընձեռած բառակազմական հնարավորություններից<sup>19</sup>` կարողանալով դիպուկ արտահայտել աշխարհի ունայնության և այդ աշխարհում անհոգ ու երջանիկ, բայց միևնույն ժամանակ մեղսագործ մարդկանց հակադրությունը:

Բանաստեղծը գործածել է բառարաններում վկայված *թոչնազգի, աստղանավ, ազնվագուն* բառերի *թոչնազգ, աստղանավակ, ազնվազն* տարբերակները: Իհարկե, այդ բառերը ծանոթ եղել են գրողին, բայց արտասանության, հանգավորման, ինքնաստիպու-

---

<sup>19</sup>Տե՛ս Մ. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Ե., 1978, էջ 151:

թյան համար թերևս նպատակահարմար է եղել գործածել վերոնշյալ տարբերակները:

Վերլուծելով Թ. Տոնոյանի բանաստեղծության ինքնատիպությունը՝ կարող ենք փաստել, որ հեղինակի ստեղծած բառակերտումները գրողի լեզվամտածողության ու լեզվական ճաշակի դրսևորումներ են, արտահայտում են իրեն շրջապատող իրականության բանաստեղծական ընկալումները: Հեղինակային նորակազմությունների կերտումը խոսում է նաև գրողի վերլուծելու և համադրելու կարողությունների մասին:

Մեր կարծիքով՝ դրանց մի մասը իր տպավորիչ կազմություններով և ասելիքի հարստությամբ համագործածական դառնալու հավանականություն ունի և կարող է հարստացնել ու կատարելագործել հայոց լեզվի բառապաշարը:

Թ. Տոնոյանի բառակերտումներից առանձնացրել ենք մի քանիսը, որոնք առաջարկում ենք կիրառել մեր գործուն բառապաշարում: Օրինակ՝ *վերառաք*, *լուսատարիք*, *երկրակարոտ*, *հոգեգարուն*, *հոգեաշուն*, *աշխարհարարում*, *կենսադեղ* և այլն:

## Գրականություն

### ա) հայերեն

1. Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976:
2. Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984:
3. Աւետիքեան Գ., Միւրմէլեան Խ., Աւգերեան Ս., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836-37, հ.1:
4. Գալստյան Ս., Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Ե., 1978:

5. Գնել արքեպիսկոպոս Ճերեճեան, Փարամազ Կ. Տոնիկեան եւ Արտաշէս Տէր Խաչատուրեան, Հայոց լեզուի նոր բառարան, Պէլրուք, 1992:
6. Էլոյան Ս., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Ե., 2002:
7. Էլոյան Ս., Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Ե., 1989:
8. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Ե., 1969-1980:
9. Խլղաթյան Ֆ., Բառարան-տեղեկատու (նոր բառեր և իմաստներ), Ե., 1982:
10. Հովնաթանյան Հ., Երգեր, որ բացում են երկինքը. Թ. Տոնոյանի «Երիբից հետո» ժողովածուն, Ազգ, 2003, թ. 63, ապրիլ:
11. Սալխասեանց Սո., Հայերեն բացատրական բառարան, հհ. 1-4, Ե., 1944-1945:
12. Մարության Ա., Հայոց լեզվի ոճաբանություն, Ե., 2000
13. Մելիքիսանյան Փ., Նոր բառերի բացատրական բառարան, Ե., 1996:
14. Նոր բառեր, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, Ա-Զ պրակ, Ե., 2015, 2016, 2017, 2018, 2020, 2021:
15. Սաքապետոյան Ռ., Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան, Ե., 2011:
16. Սուքիասյան Ա., Սուքիասյան Ք., Ֆելեքյան Մ., Ժամանակակից հայոց լեզու (հնչյունաբանություն, բառագիտություն), Ե., 2017:
17. Տոնոյան Թ., Լեզվի և մտածողության փոխհարաբերությունը տեքստում, «Բանբեր Երևանի համալսարանի», 2016 № 3 (21):
18. Տոնոյան Թ., Հայերենի համատեքստի ձայն-կյանք, լրություն-մահ լեզվամտածողական հոմանիշությունները, «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն», 2016 № 1 (19):

19. Տոնոյան Թ., Հայերենի տեքստը և լեզվամտածողական արժեհամակարգը, Ստեփանակերտ, 2016:

### **բ) ռուսերեն**

1. Томашевский, Б.В., Стилистика и стихосложение. Л., 1959.

### **Համառոտագրություններ**

ԵԱ – Երկնքից առաջ

ԵՀ – Երկրից հետո

Ս – Սերմաստղ

ՍՀՀ – Սահմանումներ Հայաստանի համար

### **Աղբյուրներ**

1. Տոնոյան Թ., Երկնքից առաջ, Ե., 2010:
2. Տոնոյան Թ., Երկրից հետո, Ե., 2002:
3. Տոնոյան Թ., Մոմի կաթիլներ, Ե., 1997:
4. Տոնոյան Թ., Սահմանումներ Հայաստանի համար, Ե., 2015:
5. Տոնոյան Թ., Սերմաստղ, Ե., 1994:

# ՆՈՐԱԿԱԶՄ ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ\*

## Նժանե Սարգսյան

Լեզվի բառային կազմը մշտապես փոփոխվող լեզվական համակարգ է: Ժամանակի ընթացքում այն հարստանում է նոր բառերով, զուգահեռաբարորոշբառեր դադարում են գործածություն ունենալ և վերածվում են հնաբանությունների: Շարունակաբար կատարվող այս գործընթացը պայմանավորված է ինչպես ներլեզվական, այնպես էլ արտալեզվական գործոններով:

Հասարակական, քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքում կատարվող փոփոխությունները լեզվի բառա-պաշարը նորակազմ բառերով հարստացնելու նախադրյալ են: Առաջ են գալիս նոր առարկաներ, որոնք լեզվում արդեն գոյություն ունեցող կազմությունները չեն արտահայտում և չեն անվանում, ուստի նոր բառեր կազմվելու կարիք է լինում: Հաճախ նոր բառերի կազմության համար հիմք է դառնում օտար տերմինը հայերեն համարժեք տարբերակով փոխարինելու պահանջը: Բառերի կազմության համար լեզուն օգտագործում է սեփական բառակազմական միջոցներն ու եղանակները, ընդ որում՝ նորակազմ բառերի քննությունն էլ իր հերթին ցույց է տալիս, թե այդ միջոցներից ու եղանակներից որոնք են առավել գործուն և կենսունակ: Այս առումով նման ուսումնասիրությունը լեզվի համաժամանակյա քննության, նրանում գործածվող միավորների վերլուծման և ներկայացման համար կարևոր ու արդիական է:

---

\*Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի գիտական տեղեկագիր, հումանիտար և հասարակական գիտություններ, պրակ 2, 2022, էջ 44-53:

Մեր այս հոդվածում քննում ենք «Նոր բառեր» բառարանի Ե և Ջ պրակներում հավաքված մոտ 1500 նորակազմ ածականները՝ դիտարկելով դրանց կազմության համար կիրառվող լեզվական միջոցներն ու եղանակները, ներկայացնելով ածականների կազմության համար արդի փուլում առավել տարածված կաղապարները:

### **Նորակազմ ածականների կազմության միջոցները:**

Բառերի կազմության միջոցներ են համարվում ձևույթները՝ որպես բառի իմաստային միավորներ: Լեզվաբանության մեջ ընդունված է տարբերակել հիմնական կամ արմատական և երկրորդական ձևույթներ: Հիմնական ձևույթը «արտահայտում է բառի առարկայական-տրամաբանական նշանակությունը: Այն իմաստակիր ավելի փոքր միավորների այլևս չի բաժանվում»<sup>1</sup>:

Երկրորդական ձևույթների դեպքում տարբերակվում են ձևակազմական և բառակազմական ձևույթներ: Մեզ այս առումով հետաքրքրում են բառակազմական ձևույթները՝ նախածանցներ, վերջածանցներ, ներածանցներ, որոնք, ավելանալով բառին, կազմում են նոր բառ՝ նոր իմաստով:

Նոր բառի կազմությանը մասնակցում են հիմնական և երկրորդական բառակազմական ձևույթները, որոնք ավելանում են բառի հիմքին, որն է՝ «լեզվական ցանկացած մակարդակի բաղադրյալ միավորի այն հատվածը, որը մնում է, երբ նրանից անջատում ենք այդ միավորի կազմության վերջին քայլում ավելացած բաղադրիչը»<sup>2</sup>: Փաստորեն բառակազմական հիմքին նշված որևէ

---

<sup>1</sup> Մուրիսայան Ա., Մուրիսայան Ք., Ֆելեքյան Մ., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 2017, էջ 234:

<sup>2</sup> Գալստյան Ս., Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ, Ե., 2007, էջ 107:

ձևույթի ավելացումով կարելի է կազմել լեզվում կիրառելի նոր բառ:

Լեզվաբանության մեջ տարբերակվում են բառակազմական հիմքերի տարբեր տեսակներ: Ներկայացնենք դրանք՝ դիտարկելով նորակազմ ածականների համապատասխան օրինակներ:

Տարբերակվում են պարզ՝ այլևս անտրոհելի, և բաղադրյալ հիմքեր, որոնք կարող են լինել ածանցավոր կամ երկու պարզ հիմքից կազմված՝ *այրանման, ածխե, մշտազգա, մշուշաթաց, վանհլաբույր*:

Լեզվաբանության մեջ առանձնացվում են նաև **փոփոխվող** և **չփոփոխվող** բառակազմական հիմքեր:

Չփոփոխվող հիմք ունեն, օրինակ՝ *արյունեփ, արյունաբոսոր, ծառածև, ծովակապույտ, պատառաչափ, սպիտակափոր, օղաբույր* ածականները:

Փոփոխվող հիմքերը իրենց հերթին լինում են՝

*.հնչյունափոխական*, երբ հիմքում շեշտի դիրքի փոփոխությամբ կատարվում է հնչյունափոխություն՝ *արնակարմիր (յու>Օ), բազմագունեղ (ու>Օ), եղնջե (ի>ը), հնահամ (ի>ը), հրաձերմակ (ու>ը)*:

*.հավելատարրային*: Այս դեպքում բառակազմության գործընթացում ավելանում են լրացուցիչ միավորներ, որոնք չկան արմատում, ինչպես՝ *ա* հոդակապը, *ն* գրաբարյան վերջնահնչյունը, *յ* ձայնակապը և այլն, օրինակ՝ *արքայակառույց, բյուջետագող, հարսնաբույր, մարգարտագօծ, միկրոձեռնարկատիրական, ծոռնատեր* և այլն:

*.տղատարրային*: Որոշ միավորների հիմքում ընկնում են, օրինակ՝ *ի* ձայնավորը կամ օտար *իս, ոս* և այլ բաղադրիչներ՝ *կիսափսպանացի, թերագնահատիչ* և այլն: Ս. Գալստյանը նկատում է, որ «յուրատեսակ սղատարրային հիմքեր են ստեղծվում, երբ



կատարվում է ածանցի անկում՝ նրա բառակազմական նշանակության պահպանմամբ»<sup>3</sup>, ինչպես՝ *անտառատնտեսական-անտառային և տնտեսական, կրոնաբա-րեգործական-կրոնական և բարեգործական, չարափայլ-չարությամբ փայլող* և այլն:

*բառակապակցական*: Այս հիմքերը շարահյուսական ազատ կամ կայուն բառակապակցություններից են առաջանում՝ ածանցման կամ բարդման եղանակով: Այդպիսին են, օրինակ, *թանձրահեղուկ, թավշաքայլ, ժանգակարմրագույն, խավազերծ, կլորսեղանային, հուսապակաս* և այլ ածականներ:

*բառաձևային*: Այսդեպքում մախահիմքը, որին ավելացնում ենք հաջորդ ձևույթը, բառի որևէ հարացուցային ձևէ, օրինակ՝ *գարնանաթարմ, գերերևակայական* և այլն:

Տարբերակվում են նաև *սերող* և *բաղադրող* հիմքեր: Մեծ մասամբ ըստ հաջորդականության՝ աջակողմյան հիմքը բաղադրողն է, ձախակողմյանը՝ սերողը, սակայն երբեմն բաղադրող հիմքը ևս կարող է սկզբից ավելանալ:

Հետաքրքիր է նաև այն, որ արդի հայերենում նոր բառեր հաճախ կազմվում են օտար բառահիմքը որպես բաղադրող հիմք կիրառելով, օրինակ՝ *ագրոպարենային, էթնոերաժշտական, էկոջագային, էկոմշակութային* և այլն:

Ստացվում է, որ նոր բառ կազմելիս առկա հիմքին որևէ ձևույթ է ավելացվում: Այդ ձևույթի ավելացումը բառակազմական գործընթացում համարվում է բառակազմական քայլ: Բառակազմական քայլում իրար միացող ձևույթները համարվում են անմիջական կազմիչներ<sup>4</sup>: Այսպես:

*Եթե դիտարկենք գերլուսնային, գեղարվեստափաստագրական, մոխրաերկնագույն, նախամայրամուտային, տնտեսա-*

---

<sup>3</sup>Գալստյան Ս., նշվ. Աշխ., էջ 110:

<sup>4</sup>Տե՛ս նույն տեղում, էջ 114:

արդյունաբերական ածականները, ապա կարելի է տեսնել, որ գերլուսնային բառում վերջին քայլում ավելացել է -ային ածանցը, մոխրաերկնագույն, նախամայրամուտային, տնտեսաարդյունաբերական բառերի դեպքում համապատասխանաբար մոխր(ա), նախ(ա), տնտես(ա) բաղադրիչները:

Գեղարվեստափաստագրական բառի անմիջական կազմիչներն են գեղարվեստական և փաստագրական բաղադրյալ հիմքերը: Պետք է նկատի ունենալ նաև այն, որ եթե վերջին քայլում ավելացել է ածանց, ապա այդ նոր բառը կազմվել է ածանցմամբ, իսկ եթե հիմք է ավելացել, ապա՝ բառաբարդմամբ: Ուրեմն, գերլուսնային, նախամայրամուտային բառերը ածանցման, իսկ մյուսները բառաբարդման եղանակով կազմված ածականներ են: Այս ամենը ներկայացնենք բառակազմական վերլուծության միջոցով՝ ցույց տալու համար բառի կազմության ընթացքը՝

գերլուսնային- [գեր (լուսն)]ային

մոխրաերկնագույն – մոխր/ա[ (երկն/ա)գույն]

նախամայրամուտային- նախ/ա{[(մայր/ա)(մուտ)]ային}

տնտեսաարդյունաբերական–[(տն) (տես/ա) ական↓]([(արդ)յուն/ա] (բեր) } ական)

գեղարվեստափաստագրական–[(գեղ) (արվեստ/ա) ական↓]{(փաստ/ա) [(գր) ական]}

Միննույն նախատիպն ունեցող բառերը կարող են կազմել բառակազմական փունջ և ցույց տալ ընդհանուր հիմքից կազմված բառերի ամբողջությունը: Նշված պրակներում նորակազմ ածականների քննության ժամանակ գտել ենք կորոնավիրուս հիմքից կազմված կորոնավիրուսային, հակակորոնավիրուսային ածականները: Այս բառերը բառակազմական փնջում կազմում են բառակազմական զույգ և նրանց միջև կապը անմիջական է:

Բառակազմական փնջի միջոցով կարելի է որոշել նաև բառերի պատճառաբանվածությունը: Այս դեպքում բառերի իմաստները հնարավոր է բխեցնել այդ բառերը կազմող բաղադրիչների իմաստներից: Բառի պատճառաբանվածությունը լինում է արտաքին (բնաձայնություններ, նմանաձայնություններ) և ներքին: Ներքին պատճառաբանվածության դեպքում տարբերակում ենք ձևաթափանական և իմաստաբանական պատճառաբանվածություն: Եթե ձևաթափանական պատճառաբանվածության դեպքում բառիմաստը դառնում է առանձին ձևայինների իմաստների հանրագումար, ապա իմաստաբանական պատճառաբանվածության դեպքում իմաստը պետք է բխեցնել ըստբառակազմական փնջի մեջ մտնող բառակազմական շղթայի, քանի որ յուրաքանչյուր հաջորդի իմաստը պայմանավորվում է նախորդ բառի իմաստներից մեկով: Պետք է նկատի ունենալ, որ «պատճառաբանողն այն բառն է, որի համար տվյալ կարգի իմաստն առաջնային է»<sup>5</sup>:

Առանձնացվում է նաև *անուղղակի* և *ուղղակի* պատճառաբանվածություն: Ուղղակի պատճառաբանվածության դեպքում երկու ձևայիններն էլ անկախաբար կիրառվում են, իսկ անուղղակիի դեպքում գոնե մեկը անկախ գործածություն չունի, և «նման արմատ ունեցող բառերի իմաստները մենք պատճառաբանում ենք ոչ թե ուղղակիորեն համեմատելով բաղադրյալ բառը և իր արմատը, այլ համեմատելով միևնույն արմատից կազմված բառերը իրար հետ»<sup>6</sup>:

Այս հարցերը քննելիս պետք է անդրադառնալ նաև պատճառաբանող հատկանիշին, այսինքն՝ այն հատկանիշին, որը ամենաբնորոշն է և առարկան անվանելիս առանձնացվում է ու

---

<sup>5</sup>Տիգրան Ս., Բառակազմական բազմակի պատճառաբանվածությունը ժամանակակից հայերենում, երկրորդ լրամշակված հրատ., Ե., 2013, էջ 14:

<sup>6</sup>Սուքիասյան Ա., Սուքիասյան Զ., Ֆելեքյան Ս., նշվ. աշխ., էջ 272:

առաջնային դառնում: Այդպիսի հատկանիշ կարող է լինել գտնվելու տեղը՝ *արաքսամերձ, ջունգլիաբնակ, նյութը, որից պատրաստված է՝ հախճաասալիկե, նշակարկանդակե, կարմրադյուսե*, կատարած գործողությունը՝ որպես բնորոշում՝ *հետացույց, հուսահատիչ* և այլն:

**Նորակազմ ածականների կազմության եղանակները:**

Նախորդ հատվածում քննեցինք այն միջոցները, որոնցով լեզվում ստեղծվում են նոր բառեր: Այդ ձևույթների կապակցումը իրականացվում է որոշակի եղանակներով: Լեզվում բառերի կազմության եղանակներն են բառաբարդումը, ածանցումը և հապավումը: Ածականները կազմվում են բառաբարդման և ածանցման միջոցով:

**Բառաբարդում:** Բառաբարդման ժամանակ երկու կամ ավելի հիմքեր կցվում կամ հարադրությամբ կապվում են՝ ի հայտ բերելով նոր բառ: Այս բառերը ունենում են մեկ ընդհանուր շեշտ: Բառաբարդման եղանակով են կազմվել, օրինակ, հետևյալ համադրական ածականները՝ *թավշաքայլ, թացութոռ (իմաստը՝ անձրևային), կորովատես, հողաթուխ, մշուշաթխակապույտ, սևականաչ, վիստադեմ* և այլն:

Առաջնորդվելով Ս. Գալստյանի ներկայացրած բառակազմական կադապարներով՝ կարող ենք նշել ածականների կազմության հետևյալ կադապարները.

**NN գոյական+գոյական** - *աթոռագերի, շաղգամաբույր*

**NV գոյական+բայարմատ-գոլֆասեր, ճգնաժամածին**

**NA գոյական+ածական-լուսնաճերմակ, մարմնամերկ, մեղրադեղին, պողպատագորշ**

**AN ածական+գոյական-կարծրափուշ, կարճաբեղ, փափկաներբան, կարմրատերև**

**AV ածական+բայարմատ- թխածին, կեղծատես**

**AA** *ածական+ածական-խստալուրջ, կարմրաճերմակ, փափկամեղմ*

**AA** կառույցի դեպքում առաջին բաղադրիչը «աստկացնում է ածականի արտահայտած իմաստը կամ արտահայտում է երկրորդ բաղադրիչի արտահայտած հատկանիշի երանգները»<sup>7</sup>:

**VVբայարմատ+բայարմատ-ազդակիր**: Ինչպես նշում է Ս. Գալստյանը, այսպիսի կազմությունները սակավ են, և առաջին բայական արմատը հանդես է գալիս անվանական կիրառությամբ, քանի որ բայը բայի լրացում չի կարող լինել<sup>8</sup>:

Այս կաղապարներից արդի հայերենում ածականների կազմության գործընթացում գործուն են *գոյական+ածական, ածական+գոյական*, ինչպես նաև *ածական+ածական* կաղապարները:

**Ածանցում**: Ածանցումը հիմքին ածանցի ավելացումով նոր իմաստով նոր բառ կազմելու եղանակն է: Նորակազմ ածականների կազմության մեջ ակտիվորեն կիրառվում են ինչպես նախաձանցներ, այնպես էլ վերջաձանցներ: «Նոր բառեր» բառարանի Ե և Զ պրակներում ածականներ կազմվել են հիմնականում այս ածանցներով.

### **Նախաձանցներ**

**ան-** - անկասեցնելի, անվերաբերելի

**ապ-** - ապաբարոյական

**գեր-** - գերադքատ, գերերիտասարդ, գերուշադիր, գերհետաքրքիր, գերփխրուն, գերքաղցր

**ենթ/ա--** ենթաձայնային

**հակ/ա-** - հակաբորբոքիչ, հակաիրանական, հակակարկտային, հակաճգնաժամային

---

<sup>7</sup>Գալստյան Ս., Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Ե., 1984, էջ 19-24:

<sup>8</sup>Տե՛ս նույն տեղում, էջ 22:

**համ/ա-** - համաբուհական, համաերևանյան, համաարցախյան  
**նախ/ա-** - նախասթրեսային, նախասուրբծննդյան, նախարտադրական

**Վերջածանցներ**

**-ական**- անտառապահական, հեքիաթագիտական, երկրագիական

**-ային**- գիշատչային, զարդաքանդակային, թռչակային, խամաճիկային, ցնորքային

**-ան**- կծկծան

**-անի**- երկֆոնուսանի, հինգբլթականի

**-անոց**- երկսենյականոց, չորստեղանոց

**-ավոր**- եռանկյունավոր, թևկապավոր, կապտագուլավոր

**-ավուն**- գորշասևավուն, կաթնաքաղցրավուն, մեղրավուն

**-ե** - մամոե, ածխե, կոկոսե, անուշաբլիթե, քաղցրամրգե

**-յան**- ազդրակողմյան, նժդեհյան, սևանյան

**-ովի** - ծածկովի կանգնովի, կրծովի

**-ոտ**- արբունքոտ, մազմզուկոտ, մզոտ

**-ուն**- գեղածփուն

Արդի հայերենում նորակազմ ածականների կազմության ամենագործուն նախածանցներն են *հակա-*, *համա-*, *նախա-*, *գեր-* ածանցները, իսկ վերջածանցներից՝ *-ական*, *-ային*, *-ավոր*, *-ավուն*, *-ե* ածանցները: Ներկայացնենք ածանցման եղանակով այդ ածանցներից կազմված ածականների քանակը՝ ըստ վիճակագրության.

Նախածանցներ				Վերջածանցներ				
հակա	համա	նախա	գեր	ական	ային	ավոր	ավուն	ե
40	22	29	25	27	61	8	32	45

Գ. Ջահուկյանը տարբերակում է ածանցման տարասեռ և համասեռ կադապարներ: Համասեռ է համարում այն կադապարները, որոնց դեպքում բառակազմությունը մնում է միևնույն խոսքի մասի սահմաններում: Տարասեռ են այն կադապարները, որոնց դեպքում տեղի են ունենում խոսքիմասային անցումներ<sup>9</sup>: Մեր քննության շրջանակներում, փաստորեն, համասեռ կադապարով միայն ածականներից կարող են ածականներ կազմվել: Մյուս դեպքերում ածականները կկազմվեն տարասեռ կադապարներով: Այսպես:

Ածական հիմքով համասեռ կադապար՝ *գերխիստ – aA, մգոտ – Aa*  
 Գոյական հիմքով տարասեռ կադապար՝ *թնկապավոր – SSa, ածխե – Sa, կոկոսե – Sa*

Թվական հիմքով տարասեռ կադապար՝ *քառասունհազարանոց – NnNa*

Բայական հիմքով տարասեռ կադապար՝ *բռնողական – Va*

Այսպիսով, կարող ենք փաստել, որ և՛ ածանցման, և՛ բառաբարդման միջոցով արդի հայերենում ակտիվորեն կազմվում են մեծ թվով ածականներ: Դրանք գործածական են գեղարվեստական, գիտական գրականության, մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության լեզվում, արձանագրվում են նորակազմությունների բառարաններում:

---

<sup>9</sup>Ջահուկյան Գ., Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե., 1989, էջ 168:

## Նոանե Սարգսյան

Լեզվի բառապաշարը արագ փոփոխվող համակարգ է: Այդ փոփոխությունները շարունակական ու մշտական բնույթ ունեն՝ պայմանավորված հասարակական, քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքի զանազան փոփոխություններով: Ուստի, բառապաշարը դառնում է այդ ամենի կրողն ու արտահայտողը: Բառապաշար մուտք գործած բառերը դիտարկելիս ոչ միայն կարելի է պատկերացում կազմել արտալեզվական փոփոխությունների մասին, այլև վեր հանել, ցույց տալ ներլեզվական գործընթացներն ու երևույթները:

Բառապաշարը հարստանում է ինչպես փոխառություններով, այնպես էլ սեփական բառակազմական միջոցներով կազմված բառերով: Արդի հայերենում լեզվի բառակազմական միջոցներով ու եղանակներով գոյականական նոր բառերի կազմությունը ակտիվորեն շարունակվում է: Որպես բառերի կազմության միջոցներ հանդես են գալիս հիմնական և երկրորդական ձևայինները: Հիմնական ձևայինը «բառի առարկայական-տրամաբանական նշանակությունն» է արտահայտը: Երկրորդական ձևայինների դեպքում տարբերակվում են ձևակազմական և բառակազմական ձևայիններ: Ձևայիններից ածանցման և բառաբարդման եղանակով կազմվում են նոր բառեր: Նորակերտ գոյականներին նվիրված այս աշխատանքում մեզ հետաքրքրում են ածանցման եղանակով կազմված

---

\*Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, հասարակական գիտություններ, պրակ 1, Արցախ, 2023, էջ 109-116:

<sup>1</sup>Սուքիասյան Ա., Սուքիասյան Զ., Ֆելեքյան Մ., Ժամանակակից հայոցլեզու, Ե., 2017, էջ 234:



բառամիավորները, և այն երկրորդական բառակազմական ձևույթները, այն է՝ ածանցները, որոնց միջոցով առավել հաճախ են ձևավորվում նորաստեղծ գոյականներ:

Լեզվաբանության մեջ բազմիցս է քննվել գոյականների՝ ածանցման եղանակով կազմությունը, նշվել են գոյականակերտ ածանցները, դիտարկվել էրառի կազմության կաղապարը: Սակայն պետք է նշել, որ այդօրինակ անդրադարձները, ըստ երևույթին, մեծմասամբ ձևույթաբանական քննություններեն և ներկայացնում են տվյալ բառի կազմության մեջ մտնող բոլոր ձևույթները: Այս առումով քիչ են բառերի կազմությունը քննող այնպիսի աշխատանքները, որոնք ցույց են տալիս, թե վերջին քայլում ինչպիսի բաղադրիչի ավելացումով է կազմվել բառը: Մույն հոդվածը այդպիսի մի փորձ է ներկայացնելու ածանցմամբ կազմված նորաստեղծ գոյականների բառակազմական կաղապարները և առավել գործուն ածանցները: Քննության նյութ են ծառայել «Նոր բառեր»բառարանի Զ և Է պրակներում ընդգրկված գոյականները:

### **Ածանցում: Գործուն ածանցներ:**

Ածանցումը բառակազմական այնպիսի եղանակ է, որի դեպքում ածանցի հավելմամբ կազմվում են նոր իմաստով նոր բառեր: Այս դեպքում պետք է նկատի ունենալ, որ բառի ածանցմամբ կամ բառաբարդմամբ կազմված լինելը որոշելիս հաշվի ենք առնում վերջին քայլում ավելացող բաղադրիչը և ոչ թե տվյալ բառի ձևույթաբանական կազմը: Վերջին քայլում բաղադրիչի հավելումը նոր բառի կազմության գործընթացում կոչվում է բառակազմական քայլ: Այսպես, **արձանաշինություն** գոյականն ունի **արձան**, **շին**, **ա**, **-ություն** ձևույթները, որոնցից **-ություն**-ը թեև ածանց է, սակայն այս բառը բառաբարդմամբ է կազմված, քանի որ վերջին քայլում ավելացել է ոչ թե ածանցը, այլ **արձան** հիմնական ձևույթը: Ածանցմամբ կազմված բառերի դեպքում վերջին քայլում պետք է ավելա-

նա ածանց: Բառի ածանցման կամ բառաբարդման եղանակով կազմությունը որոշելիս անհրաժեշտ է բառը բառակազմական վերլուծության ենթարկել: Ներկայացնենք «Նոր բառեր»-ի Ջ և Է պրակներում ածանցմամբ կազմված նորակերտ գոյականների բառակազմական վերլուծությունների մի քանի օրինակ.

*ապաթունավորում- ապ/ա{[(թույն/ույ→ու)ա/վոր]ում}*  
*բանահոտհականություն - {[(բան/ա)(հոտ)]ական}ություն*  
*գերերազանք - գեր[(երազ)անք]*

*հակաառողջապահություն* -

*հակ/ա{[(առողջ/ա)(պահ)]ություն}*

*ստվերայնություն - [(ստվեր)ային/ի↓]ություն*

*հաղարջուտ - (հաղարջ)ուտ*

Կան բառեր, որոնք ունեն երկակի պատճառաբանվածություն, և կախված նրանից, թե որն ենք դիտարկում որպես վերջին քայլում ավելացող բաղադրիչ, կարող են լինել ինչպես բառաբարդմամբ, այնպես էլ ածանցմամբ կազմություններ, ինչպես՝ *դժվարաթափանցություն՝ դժվար/ա{[(թափ)(անց)]ություն}*, բառաբարդմամբ կազմություն, իսկ *դժվար/ա [(թափ)(անց)]ություն՝* ածանցական:

Երկակի պատճառաբանվածություն կարող են ունենալ նաև այն ածանցավոր բառերը, որոնք իրենց կազմում ունեն և՛ նախածանց, և՛ վերջածանց, օրինակ՝ *ապաառասպելականացում՝ ապ/ա{[(առասպել)ական]ացում}* կամ *{ապ/ա[(առասպել)ական]}ացում*, *գերառատություն՝ գեր[(առատ)ություն]* կամ *[գեր(առատ)]ություն*:

Բառակազմական քայլում իրար միացող ձևայինները համարվում են անմիջական կազմիչներ: Այն բաղադրիչը, որին ավելանում է ածանցը և նոր բառ կազմում, կոչվում է բառակազմական հիմք: Տարբերակվում են սերող և բաղադրող հիմքեր: Սովորաբար նշվում է, որ սերող հիմքը՝ ձախակողմյան, իսկ բաղադրող հիմքը

աջակողմյան բաղադրիչն է: Հարկ է նկատի ունենալ, որ ածանցման դեպքում կստանանք 1+հիմք կաղապարը նախաձանցավոր բառերի և հիմք+1՝ վերջաձանցավոր բառերի դեպքում<sup>2</sup>:

Լեզվաբանության մեջ տարբերակվում են նաև *փոփոխվող* և *չփոփոխվող* բառակազմական հիմքեր: Ներկայացնենք դրանք՝ բերելով համապատասխան օրինակներ մեր քննության առարկա աղբյուրներից: Չփոփոխվող հիմքերը բառակազմության գործընթացում որևէ փոփոխության չեն ենթարկվում, օրինակ՝ *գերերազանք, հակաթուրմ, ավազանիական, ենթատղորտ* և այլն: Փոփոխվող հիմքերը իրենց հերթին լինում են՝

- հնչյունափոխական: Այս դեպքում շեշտի դիրքի փոփոխությամբ պայմանավորված հիմքում տեղի է ունենում հնչյունափոխություն, ինչպես՝ *առևտրայնացում, հասակակցուհի, մրգանոց, պաշտոնակցուհի* և այլն:
- բառակապակցական: Այս հիմքերը առաջ են գալիս շարահյուսական ազատ կամ կայուն բառակապակցություններից, օրինակ՝ *համակրթաթոշակառու, կատարելապաշտություն* և այլն:
- բառաձևային հիմքը բառի որևէ հարացուցային ձև է, օրինակ՝ *ռազմականացվածություն* և այլն:
- հավելատարրային հիմք: Այսպիսի հիմքերում բառակազմության գործընթացում ավելանում են լրացուցիչ միավորներ, ինչպիսիք են *ա* հոդակապը, *յ* ձայնակապը և այլն, ինչպես՝ *շտուրմայանոց, գրոյություն* և այլն:
- սղատարրային են այն հիմքերը, որոնցում որոշ միավորն ընկնում են, օրինակ՝ օտար *իա, իս, ու* բաղադրիչները՝ *Բրազիլիա-բրազիլուհի*:

---

<sup>2</sup> Տե՛ս **Գալստյան Ս.**, Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ, Ե., 2007, էջ 111:

Հիմքերը կարող են լինել պարզ և բաղադրյալ: Բաղադրյալ հիմքը, ի տարբերություն պարզ հիմքի, իր կազմում կարող է ունենալ մեկից ավել արմատներ և ածանցներ: Ըստ բաղադրյալ հիմքի կազմության՝ Է. Աղայանը տարբերակում է հարածանցավոր՝ ածանցավոր հիմքով ածանցումներ և բարդածանցավոր հիմքեր՝ բարդ հիմքով<sup>3</sup>: Առհասարակ նշվում է, որ «նոր ավելացող բաղադրիչը «անտարբեր» է հիմքի պարզ կամ բաղադրյալ լինելու նկատմամբ: Բառակազմության մեջ որոշիչ է հիմքի կառուցվածքի խոսքիմասային պատկանելությունը և դրանով պայմանավորված հիմքի և նոր ավելացող արմատի կամ բառի, ինչպես և ածանցների, կապակցելիության հնարավորությունը»<sup>4</sup>:

«Նոր բառեր»-ի Ջ և Է պրակներում բառակազմական վերջին քայլում ածանցմամբ կազմված գոյականները դիտարկելիս նկատել ենք, որ բառակազմության գործընթացում նշված հիմքերին ավելանում և նոր բառեր են կազմում հիմնականում հետևյալ նախածանցներն ու վերջածանցները.

**Նախածանցներ**

**ապ/ա-** - ապամարմնացում, ապանձնավորում

**գեր-** - գերթթարտադրություն, գերսոսնձում

**ենթ/ա-** - ենթագիր, ենթառլորտ

**հակ/ա-** - հակախոսք, հակամասնատում

**համ/ա-** - համաճանաչում, համատենապետ

**նախ/ա-** - նախաազդակ, նախաառաջաբան

**վեր/ա-** - վերաշերտավորում, վերաքննարկում

**Վերջածանցներ**

**-ական** – դաիշական, օմոնական

**-անոց** – կառքանոց, կեզլիանոց, մրգանոց,

<sup>3</sup> Տե՛ս **Աղայան Է.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, էջ 280-281:

<sup>4</sup> **Պալստյան Ս.**, նշվ. աշխ. էջ 109:

-**արան** – անկողնարան, խոշտանգարան

-**ուրյուն**–ադամուրյուն, արջոբսություն, բարեկամականություն

-**ուհի** – բարապանուհի, ծառայողուհի

-**ում** - ամբոխացում, ամպում, գորշակապտում, վիզուալացում

-**ուտ** –հաղարջուտ, մայրուտ

Նորակազմ գոյականների կերտման գործընթացում առավելապես գործուն են *գեր-*, *հակա-*, *համա-*, *նախա-*, *վերա-* նախածանցները և *-անոց*, *-ուրյուն*, *-ուհի*, *-ում* վերջածանցները, ընդ որում՝ վերջածանցավոր գոյականների թիվը գերազանցում է նախածանցավոր կազմություններին: Ներկայացնենք այդ ածանցներից կազմված և Ջ, Է պրակներում ընդգրկված գոյականների քանակը՝ ըստ վիճակագրության.

Նախածանցներ					Վերջածանցներ			
գեր	հակա	համա	նախա	վերա	անոց	ուրյուն	ուհի	ում
15	10	6	15	31	9	20	25	15

Կախված նրանից, թե բառակազմական հիմքը ինչ խոսքի մասի էր պատկանում, և թե ինչ ածանցի ավելացումով որ խոսքի մասի պատկանող բառ ստացանք արդյունքում, տարբերակվում են համասեռ և տարասեռ կաղապարներ<sup>5</sup>: Գոյականների կազմությունը դիտարկելիս համասեռ կհամարվեն գոյականական հիմքով և գոյականակերտ ածանցով, իսկ տարասեռ՝ այլ խոսքի մասի պատկանող հիմքով և գոյականակերտ ածանցով կազմությունները: Առաջին դեպքում բառակազմությունը մինևույն խոսքի մասի

<sup>5</sup> Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե., 1989, էջ 168:

սահմաններում է, երկրորդ դեպքում կատարվում են խոսքիմասային անցումներ: Այսպես.

*Գոյական հիմքով համասեռ կադապար-նախափիլիսոփայություն՝ sS, անկողնարան՝ Ss, համահաղորդակցում՝ sS:*

*Ածական հիմքով տարասեռ կադապար-առևտրայնացում՝ As, ժխտողականություն՝ As, արկածախնդրուհի՝ As, բազմաբղետություն՝ As:*

*Բայական հիմքով տարասեռ կադապար-պահուստավորում՝ Vs, խոշտանգարան՝ Vs:*

Մեր քննած օրինակները ցույց տվեցին, որ բառակազմական ավելի մեծ ակտիվություն ունեն ածական հիմքով տարասեռ կադապարները:

Հետաքրքրական է նաև այն, որ ածանցները որոշակի իմաստ են հաղորդում բառին, որն ընդունված է անվանել բառակազմական նշանակություն. բացի խոսքիմասային և բառային կոնկրետ իմաստներից՝ ածանցավոր բառերը արտահայտում են նաև այնպիսի իմաստ, «որ հատուկ է ոչ միայն տվյալ բառին, այլև նման կառուցվածքի այլ բառերի ևս: ... Այդ իմաստները ձևավորվում են, երբ բառիմաստին ավելացվում է ածանցի արտահայտած իմաստը, որպես հետևանք բառաձանցման, ածանցական բառակազմություն»<sup>6</sup>:

Այս առումով հետաքրքրական է դիտարկել նաև բառի պատճառաբանվածությունը, այն է՝ բառի հնչման և իմաստի պատճառաբանված կապը<sup>7</sup>: Տարբերակվում է արտաքին և ներքին պատճառաբանվածություն, որոնցից վերջինն ունի ձևայթաբանական և իմաստաբանական տեսակները: Ձևայթաբանական պատճառա-

<sup>6</sup> Գալստյան Ս., Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Ե., 1978, էջ 40-41:

<sup>7</sup> Սուքիասյան Ա., Սուքիասյան Բ., Ֆելեքյան Մ., նշվ. աշխ., էջ 207:

բանվածության դեպքում բառիմաստը կախված է լինում բաղադրյալ բառի առանձին ձևույթների իմաստներից, այսպես՝ *հակա*-նախածանցն ունի հակառակ, ընդդեմ բառակազմական իմաստը, *-ուհի* վերջածանցը՝ իգական սեռին պատկանող անձ, *-արան*՝ գործողության կատարման տեղ, հարմարանք և այլն, *-անոց*՝ նախատիպի ցույց տված տեղը և այն: Իսկ իմաստաբանական պատճառաբանվածությունը երևում է բառակազմական շղթայում, երբ նախորդը պայմանավորում է հաջորդին, ընդ որում՝ «պատճառաբանողն այն բառն է, որի համար տվյալ կարգի իմաստն առաջնային է»<sup>8</sup>:

Այսպիսիով, արդի հայերենում ածանցումը շարունակում է մնալ որպես ակտիվ բառակազմական եղանակ: Գոյականակերտ ածանցներով այսօր էլ կազմվում են նոր գոյականներ՝ հարստացնելով լեզվի բառապաշարը: Նորաստեղծ բառերը լայնորեն կիրառվում են բանավոր և գրավոր խոսքում, ընդգրկվում են նորաբանությունների բառարաններում:

---

<sup>8</sup>Տիգրյան Ս., Բառակազմական բազմակի պատճառաբանվածությունը ժամանակակից հայերենում, Ե., 2013, էջ 14:

# ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԸ\*

## Նոանե Սարգսյան

Հասարակական, տնտեսական, քաղաքական կյանքի աշխուժացումը, գիտատեխնիկական նվաճումները և դրանց արդյունքում առաջ եկող փոփոխությունները դրսևորվում են լեզվական համակարգում: Հայտնի է, որ ամենաարագը փոփոխվում է բառապաշարը: Ի հայտ եկած նոր իրողությունների անվանումները մտնում են բառապաշար որպես նոր բառեր: Բառապաշարը ժամանակի ընթացքում հարստանում է նաև տարբեր տեսակի հապավումներով, որոնք առաջանում են բառակապակցությունների կամ բաղադրյալ անվանումների բաղադրիչների կրճատ գրության հիման վրա և, «ի տարբերություն բարդության այլ տեսակների, գրավոր ծագում ունեն<sup>1</sup>: Հապավումները լայն տարածում ու գործածություն ունեն նաև լեզվի արդի շրջանում: Հատկապես 2018 թ. հեղափոխությունից հետո հասարակական-քաղաքական կյանքում առաջ եկան մի շարք փոփոխություններ. ստեղծվեցին կառավարման նոր մարմիններ, փոխվեցին որոշ կառույցների անվանումները և այլն: Արդյունքում գործածության մեջ մտան նոր հապավումներ, որոնց հավաքումը, արձանագրումն<sup>2</sup> ու քննությունը լեզվի արդի վիճակի ուսումնասիրման դիտանկյունից կարող են կարևոր և օգտակար լինել՝ պատկերացում տալով նաև կատարված փոփոխությունների մասին:

---

\* Հայերենագիտական առցանց գիտաժողովի նյութեր, Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2021, էջ 136-143:

<sup>1</sup> **Սարգսյան Ա.**, Հայոց լեզվի հապավումները, Ե., 1984, էջ 15:

<sup>2</sup> Արդի հայերենի բազմաթիվ հապավումներ ընդգրկված են «Նոր բառեր» ժողովածուի պրակներում: Շարունակաբար հարստացվում է նաև Դ. Գյուրջինյանի, Ն. Հեքեքյանի «Հայերենում գործածվող տառային հապավումները» բառարանը:



Հապավումները գրավոր խոսքի հիմնական բաղադրիչներից են և նպաստում են խոսքի սեղմությանը, բազմազանությանը: Լեզվաբանության մեջ հիմնականում տարբերակվում են վանկային, տառային և խառը հապավումներ: Վանկային հապավումները կազմվում են բաղադրության բաղադրիչների սկզբնամասերից, ինչպես՝ **տեխնոլաբ**՝ *տեխնոլոգիական լաբորատորիա*, **պետօրկոմ**՝ *պետական ջրային կոմիտե*, **գիտկոմ**՝ *գիտության կոմիտե* և այլն: Վանկային հապավումները ավելի քիչ տարածում ու գործածություն ունեն, քան խառը հապավումները, որոնց բաղադրիչները կարող են լինել վանկային և բառային կամ վանկային և տառային, օրինակ՝ **պետավիաժառայություն**՝ *պետական ավիաժառայություն*, **բուժառայություն**՝ *բուժական բժշկական ծառայություն*, **ժողսպառու**՝ *ժողովրդական սպառում*, **կուսդեկավար**՝ *կուսակցության ղեկավար*, **պետանվտանգություն**՝ *պետական անվտանգություն*, **ՀրազՋԷԿ**՝ *Հրազդանի ջերմային էլեկտրակայան*: Արդի հայերենում խառը հապավումների կազմության առավել գործուն սկզբնաբաղադրիչներից են, օրինակ, **սոց**՝ *սոցանապահով*, *սոցաշխատակից*, *սոցաջակցություն*, *սոցրաժին*, **պետ**՝ *պետաշխատող*, *պետաջակցություն*, *պետգույք*, *պետխորհուրդ*, **էկո**՝ *էկոայգի*, *էկոզարդ*, *էկոմթերք*, *էկոռեստորան*, բաղադրիչները: Այսպիսի հապավումների մեջ դուրս են գալիս ածանցներն ու վերջավորությունները, իսկ բաղադրիչը իր հիմնական տեսքը չի կորցնում, և կազմությունը մոտենում է իսկական բարդությանը: Վերջին տասնամյակում լայն գործածություն են ստացել տառային հապավումները, որոնք կազմվում են բաղադրյալ անվան բաղադրիչների սկզբնատառերով: Արդի հայերենի տառային հապավումներից են **ԱԱՏԱ**՝ *Աշխատանքի և առողջապահական տեսչական մարմին*, **ՇՄՆ**՝ *Շրջակա միջավայրի նախարարություն*, **ՍԱՏԱ**՝ *Մենդի անվտանգության տեսչական մարմին*, **ԲՊՄՄ**՝ *Բնության պահպանության միջազ-*

*գային միություն և այլն: Նշենք նաև, որ իրենց կիրառության ոլորտում այս հապավումներից շատերը կարող են տերմինային արժեք ունենալ, օրինակ՝ **ՊՇՌ**՝ Պոլիմերագային շղթայական ռեակցիա, **ԱՎՕ**՝ Արտադրական վտանգավոր օբյեկտ, **ԱԹՄ**՝ Անօդաչու թռչող սարք և այլն:*

Ինչպես նշեցինք, կատարվող սոցիալ-տնտեսական, քաղաքական և այլ փոփոխությունները իրենց արտահայտությունն են գտնում նաև հապավումներում: Այսպես, 2019 թ. Հայաստանի Ազգային ժողովը հաստատեց Կառավարության առաջարկը կառուցվածքային փոփոխությունների մասին, ըստ որի՝ մշակույթի նախարարությունը, սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունն ու կրթության և գիտության նախարարությունը միավորվել են՝ ստեղծելով կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ինչի արդյունքում **ԿԳՆ** (Կրթության և գիտության նախարարություն) հապավմանը փոխարինելու եկավ **ԿԳՄՆ** հապավումը: Կամ 2018 թ. մեկ այլ որոշմամբ հանձնաժողովները դարձան կոմիտեներ, և բարձրագույն որակավորման հանձնաժողովը վերածվեց բարձրագույն որակավորման կոմիտեի, հետևաբար **ԲՈՀ** հապավման փոխարեն սկսեց գործածվել **ԲՈԿ** տարբերակը: Նախորդ ձևերը հնաբանության արժեք ստացան և դուրս եկան գործածությունից: Երբեմն արդեն եղած առարկաների, երևույթների որակական կամ այլ հատկանիշի տարբերակմամբ տրվող անվանումները ևս կարող են նպաստել նոր հապավումների՝ խոսք մուտք գործելուն, ինչպես՝ *փոքր հիդրոէլեկտրակայան-փհեկ*: Արդի հայերենում լայն գործածություն ունեն նաև փոխառյալ հապավումները, մասնավորապես՝ տառայինները. «Իբրև բաղադրության յուրահատուկ տեսակ, տառային հապավումները բառակազմական ընդհանրական երևույթ են և տարբեր լեզուներում գրեթե նույն օրինաչափություններն են դրսևորում: Այդ պատճառ-

ռով էլ ավելի հեշտությամբ փոխառվում ու պատճենվում են»<sup>3</sup>, ինչպես՝ **ԻԿՐԱՆԵՏ**՝ Ռելատիվիստական աստղաֆիզիկայի կենտրոնների միջազգային ցանց (International Center for Relativistic Astrophysics Network), **ԻԿՕՍՕՍ**՝ Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային խորհուրդ (International Council on Monuments and Sites), **ՄԻԳՄՄ**՝ Փորձագիտական կառույց (Support for Improvement in Governance and Management), **ԿՈՆԻՖՏԱ**՝ Չճանաչված երկրների ֆուտբոլի ասոցիացիաների կոնֆեդերացիա (Confederation of Independent Football Associations) և այլն: Պատճենումներ կատարվում են մեծ մասամբ անգլերենից և ռուսերենից, օրինակ՝ **ՀԱՀ**-Global Leadership Foundation-Համաշխարհային առաջնորդության հիմնադրամ, **ԺԳՀ**-House Democracy Partnership-Ժողովրդավարական գործընկերության հանձնախումբ, **ԱԹՄ**-Беспилотный летательный аппарат-անօդաչու թռչող սարք: Վերջին տասնամյակում գերակշռում են անգլերենից կատարված փոխառություններն ու պատճենումները:

Նորագույն, հատկապես փոխառյալ, հապավումների կիրառությունը կարող է որոշակի դժվարություններ առաջ բերել հանրության լայն շրջանակներին անձանոթ կամ քիչ ծանոթ լինելու պատճառով: Ուստի ցանկալի է, որ հապավմանը զուգահեռ կամ խոսքի սկզբում տրվի վերջինիս վերծանված տարբերակը, հատկապես այն դեպքում, որ լեզվում հաճախ առաջ են գալիս համանուն հապավումներ, որոնց ունեցած նշանակությունը կարելի է հասկանալ միայն տվյալ համատեքստը դիտարկելիս: Համանուն հապավումներ են, օրինակ՝ **ՀԽ**՝ 1. *Հանրային խորհուրդ*: 2. *Հասարակական խորհուրդ*: 3. *Հիմնադիր խորհրդարան*, **ԶԱՀ**՝ 1. *Ջերման-ջատիչ հավաքվածքներ*: 2. «*Ջավախքին աջակցություն*» հիմնա-

<sup>3</sup> **Հեքեքյան Ն.**, Օտարալեզու տառային հապավումները հայերենում: Հայագիտություն և զուգադրական լեզվաբանություն, Գ պրակ, Ե., 2003, էջ 77:

դրամ հապավումները: Կան նաև այսպես կոչված տեղային հապավումներ: Սրանք այնպիսի հապավումներ են, որոնք կիրառելի են միայն տվյալ համակարգում, կառույցում և այլն, այսինքն՝ համընդհանուր գործածություն և ճանաչում չունեն տվյալ լեզվի լեզվակիրառողների շրջանում: Այսպես, Վ. Բրյուսովի անվան լեզվագիտական համալսարանում կիրառելի են **ՌՕԼ**՝ ռուսաց և օտար լեզուներ, **ԹՄՀ**՝ թարգմանություն և միջմշակութային հաղորդակցություն, **ՄԳՄ**՝ սոցիալական գիտություններ և սերվիս և նման այլ հապավումներ: Հետաքրքրական է, որ երբեմն հապավումը կազմող բաղադրիչները ևս կարող են զեղչվել<sup>4</sup>, օրինակ՝ **ԳՍՍՕ**՝ Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն հանուն ռեսուրսների համալիր պահպանության:

Այսպիսով, քննված օրինակները հնարավորություն են տալիս փաստելու, որ այսօր էլ լեզուն կատարված փոփոխությունների անմիջական կրողն ու արտահայտողն է: Բազմաթիվ նորակերտ բառերի շարքում կազմվում և լայնորեն կիրառվում են հապավումների տարբեր տեսակները՝ նպաստելով խոսքի սեղմությանն ու բազմազանությանը:

---

<sup>4</sup>Գ. Սևակը այսպիսի հապավումները անվանում է կրկնահապավումներ կամ զեղչումով հապավումներ: Տե՛ս **Սևակ Գ.**, Հայոց լեզվի դասընթաց, Ե., 2009, էջ 182:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>Երկու խոսք</b> .....	3
<b>ԱՆԱՀԻՏ ԳԱԼՍՑՅԱՆ</b> - Նորակազմ բառերը արդի հայերենի բառապաշարում.....	4
<b>ԱՆԱՀԻՏ ԳԱԼՍՑՅԱՆ</b> -Նորակազմ բառերի իմաստաբանական քննության հարցեր .....	13
<b>ԱՆԱՀԻՏ ԳԱԼՍՑՅԱՆ</b> - Արդի հայերենի նորաբանությունների իմաստակառուցվածքային վերլուծության հարցեր .....	22
<b>ԳԱՅԱՆԵ ՀՈՎՍԵՓՅԱՆ</b> - Լյուդվիգ Դուրյանի բառաշխարհը .....	31
<b>ԱՐՄԻՆԵ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ</b> -ԱԳԲ(Ո)-, ԷԿ(Ո)-, ԷՆ(Ո)- Օտար բաղադրատարրերով կազմությունները հայերենում .....	43
<b>ԱՐՄԻՆԵ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ, ՌՈՒԶԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ</b> -Բառակերտումները Թադևոս Տոնոյանի չափածո գործերում.....	67
<b>ՆՌԱՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ</b> -Նորակազմ ածականների կազմության միջոցներն ու եղանակները .....	86
<b>ՆՌԱՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ</b> - Արդի հայերենի գոյականակերտ ածանցները.....	96
<b>ՆՌԱՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ</b> - Արդի հայերենի նորագույն հապավումները.....	104

# ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐ

Ձևավորումը և էջադրումը՝  
Մ.Խառատյանի

Կազմը՝ Ս. Արևշատյանի